

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlb.am/>

E-mail: [info@artsakhlb.am](mailto:info@artsakhlb.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlb.am/>


ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

63.3

U-259

ՍԼԱԿԱ  
ՍԱՐԳՍՅԱՆ



ԱՐՑԱԽ

ՊԱՏՄԱ  
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍՒԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀՏԳՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
302-00

# Ա Ր Ց Ա Խ

ՊԱՏՄԱՆՇԻԱՐԶԱԳՐԱԿԱՆ  
ՃԵԳՐՏՈՒՄՆԵՐ

«ՀԱՅ ԷԴԻՏ»  
ԵՐԵՎԱՆ 1996



Գրքի տպագրության ծախսերը հոգացել է հեղինակի դասընկեր, ներկայումս «ՖԼԵՇ» ՍՊԸ ֆիրմայի նախագահ՝

**Բարսեղ Բեգլարյանը**

և ՀՀ տեղեկատվության նախարարության «ՍՄԱՐՍՍ» տպարանը

Մասնագիտական խմբագիր՝ **Սուրեն Սաղումյան**  
Գրախոս՝ **Շահեն Մկրտչյան**  
Զեւավայրումը՝ **Վալերի Պետրոսյանի**

**ՍՍ.ԲԳ.ՍՅԱ.Ն Ս.**

Ս— 259 Արցախ: Պատմաաշխարհագրական ճշգրտումներ: /Խմբ.՝ Ս. Սաղումյան.— Եր.: Հայ Էդիթ, 1996, 92 էջ:

Աշխատության մեջ փորձ է արվում ճշտորոշելու Արցախ և Ուտիք նահանգների, նրանց գավառների սահմանները ըստ «Աշխարհացոյց»-ի, ինչպես նաև մինչ այդ եղած վարչական կազմավորումների տեղադրությունը՝ մ. թ. ա. I դարից սկսած, հիմք ընդունելով Սորաբունի, Պտղոմեոսի, Խորենացու և այլ հեղինակների հաղորդած տեղեկությունները: Ծգրտվում են նաև մի շարք բնակավայրերի, ամրոցների տեղադրությունները, վերականգնվում դրանց պատմական անունները:

Ուսումնասիրությանը կցվում է տարածքի սխեմատիկ քարտեզը՝ հիշյալ նահանգների, նրանց գավառների սահմաններով ըստ «Աշխարհացոյց»-ի:

Աշխատությունը կարող է հետաքրքրել ինչպես մասնագետներին, այնպես էլ ընթերցող լայն շրջաններին:

Ս 50302090 96  
789(01)1996

ԳՄԴ 68. 8(2Հ)4

© Սարգսյան Ս.

Եղբորս՝ Վալերի Հակոբյանի հիշատակին

**Վ**երջին հարյուրամյակում գիտնականները քանիցս անդրադարձել են Արցախի պատմական աշխարհագրությանը: Այդուհանդերձ, իրարամերժ տեսակետների առկայության պայմաններում, թեկուզ վերջին հրապարակումներից ելնելով, այսօր էլ գրեթե հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել այդ նահանգի սահմանների, նրա գավառների, ինչպես նաև՝ պաշտպանական կենտրոնների, անգամ՝ բնակավայրերի տեղադրության մասին: Ընդ որում, ընդհանուր թերությունն այն է, որ խնդրին անդրադարձել են «Աշխարհացոյցի» հանրահայտ հրատարակության տվյալներով, այն դիտելով աներկմտելի ճշմարտություն բոլոր ժամանակների համար, անտեսելով սակայն, որ վարչական բաժանումները հաստատուն չեն եղել և դարեր շարունակ անընդհատ փոփոխվել են՝ կապված ռազմաքաղաքական կամ այլ իրադարձությունների հետ, շարունակական մի իրողություն, որին անդրադարձել է դեռևս Ստեփանոս Օրբելյանը:

Նկատի ունենալով վերոհիշյալը, անհրաժեշտ են համարում յուրովի քննարկել այս կարևոր խնդիրը՝ պատմա-աշխարհագրական ճշգրտումներ ու հստակություն մտցնելու մտադրությամբ:

Պատմահայր Մովսես Խորենացին, թվարկելով Հայկ Նահապետի ժառանգներից սերված Սիսական տոհմի շտապիղներին, Սիսակի թոռան՝ Առանի գավառներից է ծննդաբերում Կոնր, Երասիխյան, Վիշազետի հայ բնակչությունն ու իշխանությունները՝ «Ուտիքացոյց» անգամ և՛ Կարմանացոյց, Ծավդեացոյց ու Գարգաթացոյց իշխանությունները»:

Փորձենք ճշտորոշել դրանց տեղավայրերը:

Ս. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 72:



1. ԳԱՐԴՄԱՆՑՈՅ ԻԾԽԱՆՈՒԹՅՈՒՆ,  
ԳԱՐԴՄԱՆ, ԳԱՐԴՄԱՆԱԶՈՐ

«Աշխարհացույցի» հավաստմամբ Գարդմանը Ոստիքի գավառներից մեկն է, որը, ըստ Ս. Երեմյանի, համապատասխանում է այժմյան Ղազախի շրջանին<sup>2</sup>:

Ըստ Էոթյան, Գարդմանի այս տեղադրությունն ապակողմնորոշել է ուսումնասիրողներին, որոնք խորամուխ չլինելով պատմության ընթացքի ու իրավահարաբերությունների մեջ, ձգտել են չշեղվել տրոբված ճանապարհից, որի արդյունքում առայսօր ստույգ պարզված չէ, թե ինչ է իրենից ներկայացնում Գարդմանն ընդհանրապես և որտեղ պետք է տեղադրել այն:

Ըստ Ղ. Ինճիճեանի, Գարդմանը գտնվում է Ոստիքում՝ Ծամբորի շրջակայքում<sup>3</sup>: Գրեթե նույն տեղն է մատնացուցում նաև Թ. Հակոբյանը<sup>4</sup>: Ա. Ալպոյաճյանը հատակ չի պատկերացնում, թե Գարդմանը իրականում որ նահանգի կազմում է<sup>5</sup>: Մ. Բարխուտարյանը Գարդմանը համարում է Արցախի գավառ, որը «ընկած է Կուրակ և Ծամբոր գետակների դաշտաբերանի և Մոսվյան լեռնաշղթայի գագաթնագծի մեջ»<sup>6</sup>: Ղ. Ալիշանը մի դեպքում գավառը տեղադրում է Խոչքարից արևելք, այժմյան Դաշքեսանի շրջանում, «հանուն գավառին մեծի, որտեղ հիմա էլ կա Գարդման կամ Գրդմանիկ ավան»<sup>7</sup>, իսկ մի այլ դեպքում՝ «ի հովիտու Ծիկերայ, Ծեմբորայ և Խոչքարայ տարածանի ել լեզրն Կուրայ»<sup>8</sup>:

Գարդման գավառին (համանուն բերդով) անդրադարձել է նաև Մ. Հովհաննեսյանը, որն ընդունելով երկու Գարդման բերդերի առկայությունը Կուր-Երասխյան միջագետքում, շփոթմունքով Գարդմանին

<sup>2</sup> Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 46: Ա. Արքախանյանը Գարդմանը տեղադրում է Ղազախի և Գարդաբանի (Վրաստան) շրջանների տարածքներում (տե՛ս Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 454, ծանոթագրություններ):

<sup>3</sup> Ղ. Ինճիճեան, Ստորագրություն հին Հայաստանեայց, Վեներտիկ, 1822, էջ 338:

<sup>4</sup> Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984, էջ 235—236:

<sup>5</sup> Ա. Ալպոյաճեան, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 174:

<sup>6</sup> Մ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 24, 258, նույնի Պատմություն Ադուանից Ա, Վաղարշապատ, 1902, էջ 13, 68, 155, 182 և այլն:

<sup>7</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր հայոց մեծաց, Վեներտիկ, 1855, էջ 85:

<sup>8</sup> Ղ. Ալիշան, Ոտի. Բազմավեպ, 1990, № 1—2, էջ 77:

վերաբերվող տվյալները վերագրում է Ջորագետի ստորին հոսանքի «Աղջակալա» (Գարդաբանի) ամրոցին, որոնց հետ է խառնում նաև Կուրի ձախսիկնակում գտնվող Ծամախու «Գյալուր Ղալախին»<sup>9</sup>:

Ը. Սմբատյանը Գարդմանը տեղադրում է Կուր և Կոլբ գետերի միջև<sup>10</sup>, իսկ Բ. Ուլուբաբյանի կարծիքով այն ընդգրկում է «Ծամբորն ու շրջակաները՝ տարածված դեպի արևմուտք, սակայն առանց ընդգրկելու Ղազախի շրջանը»<sup>11</sup>: Իսկ մի այլ դեպքում, նույն հեղինակը Գարդմանի մեջ է մտցնում Ղազախի շրջանը. «Արշակունյաց ժամանակաշրջանում այստեղ էր Ոստիքի նախարարության աթոռանիստը, ուստի նահանգը վարչաքաղաքական առումով հայտնի է որպես «Գարդմանցոց իշխանություն», որ «Ոստիք» անունը փոխարինվել է «Գարդմանքով» և գավառի կենտրոնն էլ Միհրանյանների VII դ. սկզբին հիմնադրած Գարդման ամրոցն էր»<sup>12</sup>:

Գրեթե նույն կարծիքին է նաև Բ. Հարությունյանը. «Ոստիք երկրամասում ժառանգական տիրակալ էր միայն Գարդմանաձորի իշխանը, իսկ մյուս գավառների տերերը... եղել են արքունական պաշտոնյաներ և կառավարիչներ»<sup>13</sup>: Գարդմանը Ոստիքի նախարարների նստոցն է համարում նաև Թ. Հակոբյանը, ճշելով կոնկրետ ժամանակ՝ I—V դդ<sup>14</sup>:

Այսպիսով, Գարդմանը դիտվել է իբրև մի գավառ, ընկած տարածաշրջանի այս կամ այն մասում՝ Ոստիքի կազմի մեջ: Եվ միայն Ս. Ջալալյանցն է այն դիտում ավելի մեծ սահմաններով, անշուշտ նկատի ունենալով ոչ թե բուն գավառը, ինչպես վկայված է «Աշխարհացույցում», այլ Գարդմանցոց իշխանությունը, որ «յարևելից ունի զլեռն Մոավ, յարևմտից զՄիաիոր գաւառ, ի հարավոյ զԾովակն Գեղամա, և ի հիւսիսոյ զԳանձակ»<sup>15</sup>:

<sup>9</sup> Մ. Յովհաննեսեան, Հայաստանի բերդերը, Վեներտիկ, 1970, էջ 479—483:

<sup>10</sup> III. СМБАТЯН, Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, Ереван, 1984, ст. 203.

<sup>11</sup> Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 36:

<sup>12</sup> ՀԱՆ, հ. 2, Երևան, 1976, էջ 700, ԲԵՆ, 1971, № 1, էջ 188, 1975, № 2, Դրվագներ... էջ 121—126 և այլն:

<sup>13</sup> Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387—451 թվականներին.— ԲԵՆ, 1976, № 2, էջ 80:

<sup>14</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 809:

<sup>15</sup> Ս. Ջալալեանց, Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տիփլիս, 1858, Բ, էջ 356:

2. Բունիչաթովը ևս անդրադարձել է Գարդմանին՝ այն տեղադրելով Գանձակ և Աղստև գետերի միջև, նրա մեջ ընդգրկելով Բուստիփառնես և Ջավե գավառները<sup>16</sup>:

Հարցի ճշգրիտ լուսաբանման համար հարկ է նախ որոշակիորեն տարբերակել Գարդմանցոց իշխանություն և Գարդման անվանակոչումները (այսինքն մինչև մարզպանական և մարզպանական ժամանակաշրջանների Գարդմանները), ինչին ուսումնասիրողները համապարփակ ուշադրություն չեն բնեռել: Ակնբախ է, որ առաջինում ոչ միայն ավելի մեծ սահմաններում ամփոփված տարածք է ակնկալվում, այլև իշխանական (նախարարական) տիրույթ: Եվ այդ տեսակետից էլ այն տարբերվում է աշխարհացույցյան Գարդմանից, որը, ինչպես ստորև կտեսնենք, Գարդմանցոց իշխանության մի փոքր մասն է կազմել միայն:

Դիմենք փաստերին. «Ջորանամակում» Գարդմանի իշխանը պարտավոր էր տրամադրել մեկ հազարանոց հեծելազոր<sup>17</sup> այն դեպքում, երբ բազմաթիվ գավառներ 50 հոգուց ավելի չէին հատկացնում: Սա վկայում է, որ Գարդմանը իրականում նահանգ է եղել և, ինչպես պարզվում է այդ փաստաթղթից՝ առանձին վարչական միավոր, որը, տվյալ ժամանակաշրջանում, ոչ մի կապ չուներ ոչ Ուտիքի և ոչ էլ՝ Արցախի (Ծավդեացվոց իշխանության) հետ:

Բոլոր երեք իշխանություններն էլ, համաձայն «Ջորանամակի» Հայաստանի պաշտպանությանը հատկացնում են 1000-ական զինվոր<sup>18</sup>, ինչը, այսպիսով, բացառում է Գարդմանի նույնացումը մեկ այլ վարչական միավորի՝ մասնավորապես Ուտիքի հետ:

Հին ու միջնադարյան աղբյուրների քննությունը ցույց է տվել, որ Արշակունյաց թագավորության ժամանակ Գարդմանցոց իշխանությունը տարածվում էր ներկայիս Ծահունյանի շրջանի արևելյան մատույցներից (Կուրակ գետից) մինչև Գուգարքի սահմանները՝ ընդգրկելով ներկայիս Խանլարի, Դաշքեսանի, Գետաբեկի, Ծամբորի, Տավուշի, Թոռուզի, Ղազախի, մասամբ Իջևանի և Նոյեմբերյանի շրջանները, հյուսիսային

<sup>16</sup> З. Бунятов, ALBANICA III.— Известия Ан Аз. ССР, серия общественных наук, Баку, 1964, № 4, стр. 88: Բունիչաթովը Ջավե (Ծավդեք) գավառ անվանումը հասկանում էր Ղազախի, Իջևանի և մասամբ Նոյեմբերյանի շրջանների տարածքը, որը սխալ է: Նշված գավառի տեղադրության մասին խոսք կլինի «Արցախը ըստ Աշխարհացույցի» բաժնում:

<sup>17</sup> Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 282, 294:

<sup>18</sup> Նույն տեղում

սահման նունենալով Կուր գետը<sup>19</sup>: Ղազախի շրջանի հարակցությունը կազմող, գետով անջատված Գարդաբան (Գարդման) շրջանը և արոցը նույնպես, վաղ ժամանակներում, թերևս, Գարդմանցոց մաս էր կազմում:

IV դ. երկրորդ կեսին մի շարք ծայրամասային գավառների հետ Գարդմանը Հայաստանից անջատվում է, բայց շուտով, Պասյի թագավորության ժամանակ (369—374 թթ.), վերագրավվում և կրկին միացվում է Հայաստանին<sup>20</sup>: Պասյ թագավորից հետո Արշակունիների տարածքների մի մասը, որոնց թվում Ուտիքը, վերստին անջատվում է Հայաստանից: Բազմաթիվ վկայություններով հաստատվում է, որ այս ժամանակաշրջանում (IV դ. վերջերին), ինչպես նաև Արշակունյաց թագավորության վերացումից հետո (428 թ.) և հետագայում, չնայած տարածքային որոշ կորուստներին<sup>21</sup>, Գարդմանը շարունակում էր մնալ Հայաստանի կազմում: Ավարայրի ճակատամարտից հետո (451 թ.) այն մոցվում է սկզբում Աղվանից թագավորության, իսկ 461 թ.՝ նորակազմ մարզպանության մեջ:

387 թվականից սկսած Հայաստանի մասնատումը հանգեցրեց Արցախի, Ուտիքի և այլ նահանգների կազմավորմանը V դ. երկրորդ կեսին այն տեսքով, ինչպիսիք ներկայացվում է «Աշխարհացույցում» VII դ. սկզբին: Խոսքն այստեղ, իհարկե, նշված նահանգների անվանումների մասին չէ (որոնք շատ հին ծագում ունեն), այլ դրանց ընդգրկած սահմանադրածքների ճշտորոշմանը՝ նկատել է Ն. Ադոնցը:

Ասպարեզից հեռացած նախկին Գարդմանցոց իշխանությունից մնում է միայն մի փոքր տարածք՝ «Աշխարհացույցի» Գարդման գավառը: Վերջինիս ճշգրիտ սահմանը արևմուտքից Ախնջի գետն է: Իսկ դա նշանակում է, որ Գարդմանը իր մեջ է ներառել Տավուշի շրջանի մի փոքր մասը և Թոռուզի շրջանի կեսը, առանց ընդգրկելու ներկայիս շրջկենտրոնը: Սահմանի ճշտորոշման համար հիմք են ծառայում մի քանի վկայություններ: Այսպես, 1223 թ. Ստեփանոս Ախթամարցու ձեռագիր հիշատակարանում ասված է, որ այն գրված է «ի վանքս Խորանաշատու, ի գաւառիս Գարդմանս»<sup>22</sup>, որն ինքնին վկայում է, որ Տա-

<sup>19</sup> Տե՛ս Մ. Հովհաննեսյան, նշվ. աշխ. էջ 484:

<sup>20</sup> Ծավառոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 297, 322:

<sup>21</sup> Հիմնականում մերձկուրյան հարթավայրային շրջաններում, երբ սահմանագիծը Կուրից տեղափոխվում է մոտ 10 կմ հարավ, Խաղխաղ բաղաբի մոտակայքը Ջեզան (Լոփնաս) գետի ստորին հոսանքում:

<sup>22</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, Երևան, 1984, էջ 136:



վուշի շրջանի հանրահայտ Խորանշատ վանքը գտնվում է Գարդման գավառում: Վանքը տեղադրված է բարձունքում, «Երգելվանք բերդի դիմաց Գարդմանի թիկունքի կողմից»<sup>23</sup>, որից ներքև հոսում է Ախնջի (Խնձորուտ) գետը: Վերջինս Ուտիքի Տուսքուսուակ գավառի արևելյան սահմանն է:

Գարդման գավառի հյուսիսային սահմանը Կուրն է, արևելյանը՝ Ծամբոր գետը, քանի որ ստույգ հայտնի է, որ վերջինս Ուտիքի Ծակաշեն (Սակասեն) գավառի արևմտյան սահմանն է<sup>24</sup>: Գավառն, այսպիսով, տեղադրվում է նշված երկու գետակների (Ախնջի, Ծամբոր) միջնամասում, որի գրեթե կենտրոնում հետագայի Ծամբոր բնակավայրն է: Ինչպես կարելի է եզրակացնել ուշ շրջանի աղբյուրներից, նախկին Գարդմանաձորը փաստորեն ստացել է Ծամբորաձոր անունը, որի մասին վկայում է Ս. Դավրիժեցին. «Դավիթ եպիսկոպոսը, որ Ծամբորի ձորից էր, իշխանական տոհմից, եկավ մնաց այս մեծ (Կապան գետի հովտի Տանձափարախի— Ս. Ս.) անապատում; ապա ելավ գնաց Ծամբորի ձորը և այնտեղ շինեց անապատ, որ կոչում են Չարեքա գետի անապատ»<sup>25</sup>: Սակայն վերջինս բուն Ծամբորի ձորից դուրս է գտնվում է ներկայիս Գետաբեկի շրջանում և Արցախի Քուստիփառնես գավառի մաս է կազմում:

Գարդման գավառի հարավային սահմանը անցնում էր՝ չհասած Գետաբակը, քանի որ վերջինս գտնվում է «ի հիսիսակողմ բերդին Չարեքայ, սահմանակից գաւառին Գարդմանայ, ի հարթավայր տեղուջ, ի գլուխ լայնանիստ ձորոցն Չարեքա»<sup>26</sup>: Դա հաստատվում է նաև պատմիչների վկայություններով:

Կ. Գանձակեցին Հովհան Մայրավանեցի վարդապետի առթիվ գրում է. «Հովհանը գնաց Գետաբակ բերդի կողմերը, իր համար մի լուռ տեղ ընտրեց»<sup>27</sup>, Վարդան Վարդապետը լրացնում է «ի գլուխ Գարդման Գաւառի»<sup>28</sup>, որը նշանակում է, որ նշված Գետաբակը գտնվում է Գարդման գավառի սահմանագլխին: Սահմանը Գետաբակի հա-

րավային կողմից (Ծամբոր գետի վտակի մոտակայքում), Ջագիր գետակի ակունքով անցնում է արևմուտք, մինչև Ախնջի գետը: Գավառի տարածքը կազմում է շուրջ 2000 կմ<sup>2</sup>:

Գարդման գավառը չպետք է նույնացնել այն տարածքի հետ, որտեղ գտնվում են Գարդման անունով բերդն ու գետակը: Կ. Գանձակեցու հիշատակություններից<sup>29</sup> ակներև է, որ Գարդման ասելով շատ դեպքերում հասկացվել է հենց այդ շրջանը: Սակայն, Գարդման անվամբ տեղանունների առկայությունը մի տարածքում, որը համապատասխանում է Արցախի Կողթ գավառին, դեռևս չի նշանակում, որ այն տվյալ Գարդման գավառի մաս է կազմում: Հիշենք, որ Գարդմանի բերդը ըստ Կաղանկատվացու, կառուցվել է VII դարի սկզբին միայն, Միհրանյան Վարդանի կողմից<sup>30</sup>: Այսպիսով, Միհրանյանների գալուց և այս բերդի կառուցումից դեռևս դարեր առաջ Գարդմանը գոյություն ուներ, հետևաբար VII դարում կառուցածը չէր կարող ավելի վաղ նրա կենտրոնը լինել: Արդեն ասվեց, որ նախկինում այս տարածքը նույնպես մտնում էր երբեմնի Գարդմանցոց իշխանության սահմանների մեջ, մի մեծահամբավ ու հզոր իշխանության, որի ազդեցությունը այնքան հիմնավոր է եղել, որ սերնդեսերունդ, դարեր հետո, անգամ այսօր ավանդաբար պահպանվել է Գարդման հավաքական անվան վերագրումը արդեն Գարդմանին չպատկանող մի ամբողջ տարածաշրջանի:

Ուսումնասիրողներից Բ. Հարությունյանը վերջերս լույս տեսած մի հոդվածում<sup>31</sup>, Ստրաբոնյան Ծակաշենի մեջ է ներառում Ծակաշեն (Սակասեն) գավառն ու շրջակա տարածքները, այն համապատասխանեցնում Մ. Խորենացու հիշատակած Գարդմանցոց իշխանությանը, սահմանները տարածելով մինչև Տրոու (Թարթառ) գետի ստորին հոսանքի հյուսիսակողմը<sup>32</sup>:

Իմ կարծիքով, սա միակողմանի մոտեցում է: Նախ, ճիշտ չէր լինի Ծակաշենը հասցնել մինչև Տրոու՝ կլանելով հին Ուտիքի (Ուտի առանձնակ գավառի) մի մասը, իսկ հետո՝ այն համապատասխանեցնել Գարդմանքին: Հիշենք, որ Ուտի գավառի Բագինք (Բագում Սարով) շատ

<sup>23</sup> Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 249:

<sup>24</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 23:

<sup>25</sup> Ս. Դավրիժեցի, Պատմություն հայոց, Երևան, 1988, էջ 201: Ծանոթագրություններում (էջ 537), Վ. Առաքելյանը Ծամբորը նույնացնում է Արցախի Փամակ գավառի հետ:

<sup>26</sup> Ս. Չալալեանց, նշվ. աշխ. էջ 360:

<sup>27</sup> Կ. Գանձակեցի, նշվ. աշխ. էջ 53:

<sup>28</sup> Վարդան Վարդապետ, Հատարումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 62:

<sup>29</sup> Կ. Գանձակեցի, նշվ. աշխ. էջ 123, 144, 175 և այլն:

<sup>30</sup> Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 153: VI դ. վերջերին այստեղ էր հաստատվել պարսից Միհրանյան տոհմը՝ Առանջահիկ հսկ իշխաններին վերացնելու, հայկական տարածքներին տեղ դառնալու և այս ձևով իրականացնելու Պարսկաստանի զավթողական նկատառումները:

<sup>31</sup> Բ. Հարությունյան, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը.— ՊԲՀ, 1994, № 1—2, էջ 260:

<sup>32</sup> Նույն տեղում:



հին գյուղը, որի մասին հիշատակում է Մ. Կաղանկատվացին<sup>33</sup>, երբևէ սակերի հետ չի առնչվել և տեղադրված է Տրտուի հյուսիսակողմում, գետից 15 կմ հեռավորության վրա այն դաշտավայրում, որտեղ նշված գավառն է: Ստրաբոնը գրում է, որ «Սակերը կատարեցին զանազան արշավանքներ... և նվաճեցին Հայաստանի ամենալավ գավառը, որը կոչվեց Սակսեն (Ծակաշեն)»<sup>34</sup>: Եվ այդ գավառը նա տեղադրում է «սահմանակից Աղվանքին և Կուր գետին»<sup>35</sup>, որից, սակայն, չի երևում որ նա զբաղեցրել է հետագայի Գարդմանցոց իշխանության տարածքը:

Ծակաշենը համապատասխանեցնելով Գարդմանցոց իշխանությանը, Բ. Հարությունյանը ըստ էության նկատի է ունեցել նաև Պողոմենոսի՝ Սակսենների և Սիրակենների տեղադրությունները «Պարյուադրես լեռան մոտ»<sup>36</sup>: Բ. Հարությունյանը, նախ Պարյուադրեսը (պետք է լինի Պերիարդես) նույնացնում է ներկայիս Սևանի լեռնաշղթայի հետ<sup>37</sup>, իսկ հետո՝ նրա երկու կողմերում տեղադրում Սակսեններ-Ծակաշենն ու Սիրակեններ: Անկասկած, շատ գայթակղիչ է Սիրակենների մեջ Սիրակեններ տեսնելը, — գրում է նա, — և այն «Սիրակների» ցեղի և Թիրակ գավառի անվան հետ կապելը, սակայն ուսումնասիրողներն իրենց հարց չեն տվել, թե ինչպես են Թիրակն ու Սակսեններ-Ծակաշենը հայտնվել հարևանության մեջ, երբ աշխարհագրական տեսակետից տասնյակ կիլոմետրեր են նրանց միմյանցից բաժանում»<sup>38</sup>: Եվ ուսումնասիրողը Սիրակեններն նույնացնում է Սյունիք նահանգին, անշուշտ նկատի ունենալով նաև նրա երկրորդ՝ Սիսական անունը: Այնուհետև Բ. Հարությունյանը շարունակում է. «Այս սրբագրությունը, որի հավանականությունը վեր է ամեն կասկածից, անուղղակիորեն վկայում է Մեծ Հայքում հաստատված պարթև Արշակունիների վարչական գործունեության մասին»<sup>39</sup>: Իսկ հետո՝ Սակսեններ-Ծակաշենը բերում հասցվում է մինչև Սևանի լեռները, «որովհետև Սիսական-Սյունիքը հյուսիսում Սևան

<sup>33</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ. էջ 74:

<sup>34</sup> Ստրաբոն, Երևան, 1940, էջ 37:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>36</sup> Բ. Հարությունյան, նշվ. հոդվածը, էջ 265:

<sup>37</sup> Պողոմենոսի քարտեզի Ս. Երեմյանի վերակազմության մեջ ևս Պերիարդեսը համապատասխանեցված է ոչ միայն Սևանի, այլև ներկայիս Ղարաբաղյան լեռնաշղթայի հետ, որը չի համապատասխանում պատմական իրողությանը (Տե՛ս ՀՍՀ, մ. 9, Երևան, 1983, 416 էջից հետո):

<sup>38</sup> Բ. Հարությունյան, նշվ. հոդվածի շարունակությունը. — ՊԲՀ, 1995, № 1, էջ 205:

<sup>39</sup> Նույն տեղում:

լեռնաշղթայով, որը Պողոմենոսը կոչում է Պարյուադրես, իրոք սահմանակցում էր Սակսեններ-Ծակաշենին»<sup>40</sup>: Իսկ վերջում պարոն Բ. Հարությունյանը «Արցախը հյուսիսից սահմանակցում էր Ծակաշենին, արևելքում՝ Արաքսենի դաշտ-Ուտիքին, հարավում՝ Կասպիանե-Կասպքին, որը II դարում հայտնի է Կոլթենե աղավաղված գրությամբ և արևմուտքում՝ Կոմիսենե-Սիսակենե-Սյունիքին: Հիշյալ աշխարհներից Սակսեններն... Տրդատ I-ի վարչական վերակառուցումների ժամանակ ստանում է Գարդմանցիք անունը, սակայն Պողոմենոսը ավանդույթի ուժով օգտագործում է առավել հին Ծակաշեն կամ Սակսեններ անունը»<sup>41</sup>:

Այստեղ ամեն ինչ հնարովի է:

Անկասկած գայթակղիչ է Պերիարդեսի մեջ Սևանի լեռներ տեսնելը և ըստ այդմ էլ Սյունյաց տարածքները հանձնել սիրակների, սակերին էլ տեղ դարձնել հյուսիս-արևմտյան Արցախին՝ ստեղծելով մի երևակապական պատմություն: Հարց է ծագում, եթե Սիրակեններ Սյունիքն է, Պերիարդեսն էլ Սևանի լեռնաշղթան, այդ դեպքում ի՞նչ գործ ունի Թիրակի (Սիրակ) հարթավայրը (ըստ Ստրաբոնի Σιρακ, նաև Sirak) ներկայիս Ալազան և Իորի գետերի միջև՝ Կուրի ձախ ափին<sup>42</sup>: Մինչ այդ, Բ. Հարությունյանը Սյունիքի հետ էր նույնացրել<sup>43</sup> Ստրաբոնի հիշատակած Կոմիսեններ:

Այդուհանդերձ, Պերիարդես ասելով, Պողոմենոսը նկատի էր ունեցել ներկայիս Արագածի լեռնազանգվածը, որից արևմուտք Թիրակի դաշտավայրն է (Թիրակ գավառը): Դա շատ պարզ երևում է նաև ոչ միայն Պողոմենոսի, այլև տվյալ ժամանակաշրջանի իրավիճակը ներկայացնող մի շարք այլ քարտեզներից, որտեղ նշված լեռը գրեթե հյուսիս-հարավ ուղղությամբ անգամ հատում է Արաքս գետը ներկայիս Բաղրամյանի շրջանով, հարելով Թուրքիայի սահմաններում գտնվող Կոլքի լեռներին: Ընդ որում, Պերիարդեսի ձախ լանջին տեղադրված է Թալին (Thalina), աջ կողմում՝ Արմավիր (Armauira) և Բասալա (Casala) բնակավայրերը<sup>44</sup>: Ծիշո է նշված քարտեզներում Սիրակենների

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 206:

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ. էջ 472—473 և համապատասխան քարտեզները:

<sup>43</sup> ՊԲՀ, 1994, № 1—2, էջ 263—264:

<sup>44</sup> Տե՛ս 1520, 1552 (Ստրաբոն), 1653 (Փարիզ), 1667 (Ամստերդամ) թթ. և 17 դ. (Նյուրեմբերգ) հրատարակված քարտեզները. — Sarkis Boghossian, Armenian iconography, Paris, 1987, p. 13—29:

տեղադրությունը մոտավոր է, նշված լեռան գագաթնագծի աջ կողմում՝ ներկայիս Գուգարք-Կարմիրի շրջան հատվածում, սակայն պարզ է, որ դա վերաբերում է Արագածից արևմուտք գտնվող Ծիրակին, նկատի ունենալով ոչ միայն նրա առկայությունն այդ տարածաշրջանում, այլև Պողոմենուսի քարտեզի վերակազմության մեջ Ս. Երեմյանի ճիշտ տեղադրությունն<sup>45</sup> ու պատմական այլ տվյալներ:

Ըստ Ն. Ադունցի, Ծիրակը և Աշոցքը հիշեցնում են այն լեռնական ցեղերը, որ հիշատակվում են Ստրաբոնի մոտ (*Σιράκων και Ἀόρσση φῶ-λα*, Str. p. 506), որոնք Միոսիև և Կասպից ծովերի միջև ընկած տարածության վրա թափառող ցեղերից ամենամեծաթիվն ու ամենաուժեղն էին և հայերի հետ ունեին սերտ հարաբերություններ<sup>46</sup>: Այդ ցեղերը հյուսիսից իջնելով հարավ, զբաղվում էին հնդկական և բարեդո-նական ապրանքների առևտրով՝ դրանք ստանալով հայերից և մարե-րից<sup>47</sup>: Այդ բարյացակամ հարաբերությունների շնորհիվ էլ ըստ էության նրանց մի մասը հաստատվում է այն վայրում, որ հետագայում կոչվեց Ծիրակ և Աշոցք:

Սակայն, նշված գրեթե բոլոր քարտեզներում Սակասենեի տեղա-դրությունը բացարձակ սխալ է: Պողոմենուսի քարտեզի 1520 թ. հրա-տարակության մեջ այն ընդհանրապես չի նշված, 1552 թ. քարտեզում տեղադրվում է Պերիարդեսի արևմտյան կողմում (ներկայիս Ծիրակի և Գյումրիի տեղում), 1663 թ. քարտեզում՝ Արաքս գետի մոտ, գրեթե Կասպից ծովի ափին, 1667 թ. քարտեզում՝ Արաքս գետի վրա, իսկ Նյուրեմբերգի քարտեզում (XVII դ.)՝ Արաքս գետից հարավ<sup>48</sup>:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես են Ծիրակն ու Սակա-սենե-Թակաշենը հայտնվել հարևանության մեջ, ապա պետք է ասել, որ այդ երկու մարզերը տարածքային առումով իրոք հարևաններ չէին, թեև հայտնի է, որ սակերն ու սիրակները ի սկզբանե նույն տարածա-շրջանի հարևան ցեղերից էին, որի վկայությունն էլ Սակասենե-Թակա-շենի մոտ գտնվող վերոհիշյալ Ծիրակի դաշտավայրի առկայությունն է Ալազան գետի հովտում, Կուրի ձախ ափին, որն էլ ըստ էության, դար-ձել էր Պողոմենուսի և հետագա քարտեզագիրների շփոթմունքի պատ-ճառը, ցեղային հարևանությունը վերածելով առանձին՝ տարածքային

(մարզային) հարևանության, որի արդյունքում փաստորեն Սակասենեն տեղադրվել է սխալ տեղ, սակերին երբևէ չպատկանած տարածքնե-րում: Գոնե Սակասենեի Ստրաբոնյան տեղադրությունը (Ստրաբոնը, ի տարբերություն Պողոմենուսի, շրջագայել է Հայաստանում և նկարագրել աչքով տեսածը) պիտի որ հուշեր հետազոտողներին (այդ թվում Բ. Հարությունյանին) ճիշտ հետևություն անելու:

Կամ արդյո՞ք Արցախը հարավից սահմանակցվում էր նրա հարավ-արևելյան մասում գտնվող Կասպիանե-Կասպին: Մի՞թե Պողոմենուսը Կոլթենեն չէր տարբերում Կասպենեից: Չէ՞ որ Կասպենեն նույնպես հիշատակվում է նրա իսկ քարտեզում, թեև ոչ որպես մարզ: Պողո-մենուսը գրում է. «Արաքս գետի մոտ Կոլթենե և նրանից ներքև Սոդու-կենե»<sup>49</sup>: Այս դեպքում Կոլթենեն համապատասխանում է Գողթն գա-վառին, որից ներքև, Տիգրիսի վտակ Զավ (Զաբ) գետի մոտ, Ծավդեք-Զարդիկենե է, որը, սակայն, չի նշված Պողոմենուսի և վերոհիշյալ բո-լոր քարտեզներում: Եվ այդ տեսակետից, տարօրինակ է թվում, թե ինչպե՞ս կարող է Կոլթենե-Կասպենեից ներքև գտնվողը նույնանալ Արցախի հետ<sup>50</sup>, երբ վերջինս գտնվում է դրա հյուսիսային մասում, տասնյակ կիլոմետրեր հեռավորության վրա:

Իրականում, Պողոմենուսի Կոլթենեն գտնվում է Սևանա լճից վերև և հիմնականում համապատասխանում է աշխարհագրության Կողթ գա-վառին, որը տարածվում է Սևանի լեռնաշղթայի մոտ, որից ներքև՝ Սո-դուկենե-Սողթն է:

Այսպիսով, Սևանի լեռնաշղթայի (պարոն Բ. Հարությունյանի Պարյուտդրեսի) երկու կողմերում տեղադրվում են Կոլթենե և Սոդու-կենե մարզերը, որը հիմնավորվում է նաև նույն Պողոմենուսի և այլ քար-տեզներով: Օրինակ, 1520 թ. քարտեզում նշված մարզերը տեղադրված են Սևանա լճի մոտ, 1653 թ. քարտեզում Կոլթենեն լճից վերև է, Սոդու-կենե-Սողթը՝ լճից հարավ և այլն:

Ըստ Ստրաբոնի «Հայաստանի մարզերից են Փավենեն և Կոմիսե-նեն և Օրքիստենեն, որը դուրս է բերում մեծաքանակ այրումի»<sup>51</sup>:

Այստեղ Օրքիստենեն նույնանում է Արցախի հետ (ավելի ճիշտ նրա հարավային հատվածին), որը պատմագիտության մեջ ապացուց-ված է: Ըստ Բ. Հարությունյանի՝ մյուս երկուսը (Փավենեն և Կոմիսե-նեն) նույնանում են՝ առաջինը Մարդպետականին (որի տարածքները

<sup>49</sup> ՊՌՀ, 1994, № 1—2, էջ 265:

<sup>50</sup> Տե՛ս Բ. Հարությունյանի նշվ. հոդվածը.— ՊՌՀ, 1995 թ., № 1, էջ 192:

<sup>51</sup> Ստրաբոն, էջ 55:

<sup>45</sup> Տե՛ս ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 416:

<sup>46</sup> Ն. Ադունց, նշվ. աշխ. էջ 472:

<sup>47</sup> ἐνεπορεύοντο καμῆλοι τὸν Ἰνδικὸν φόρτον καὶ τὸν Βαβυλωνίον παρὰ τε Ἀρμε-νίων καὶ Μηδῶν διαδεχόμενοι. Str. p. 711.

<sup>48</sup> Armenian iconography, p. 13—29.

համապատասխանեցվում է Փայտակարանին)՝ Արաքս գետից հարավ, իսկ երկրորդը՝ (Կոմիտեեն)՝ Սյունիքին<sup>52</sup>: Սակայն նման պնդումները համոզիչ չեն:

Նախ, Փավենեն պետք է փնտրել Կուր-Շրախյան միջագետքում, նկատի ունենալով Ստրաբոնի վերոհիշյալ (Սակասենե, Արաքսենե և այլն) մարզերի տեղադրությունը և նրա ներկայացրած տվյալները, որոնք իրոք վերաբերում են Մեծ Հայքի այս տարածաշրջանին: Փավենե-Փավենենն նույնացնելով Մարդպետականին, Բ. Հարությունյանը չի բացառում, որ նրա անվան ծագումը կապված լինի անտառների ու դաշտերի, հովիվների ու հոտերի հովանավոր հոռոմեական Faunus աստծո հետ<sup>53</sup>, որը, սակայն, իմ կարծիքով, չէր կարող համապատասխանել անտառագործի ու անշուք Մարդպետականին:

Գտնում են, որ Փավենեն պետք է տեղադրված լինի հետագայի Գարդմանցոց իշխանության հիմնական տարածքներում՝ ներկայիս Ծախումյանի շրջանի արևմտյան մասույցներից մինչև Աղստև գետը, առանց ընդգրկելու Մերձկուրյան հարթավայրային տարածքները, որտեղ տեղադրվում էր Սակասենեն:

Փավենե-Փավենենն իր ֆունկցիոնալ իրոք համապատասխանում է նշված տարածքին, որտեղ և տեղադրված էր աշխարհացույցյան Փառենես (Փավենս), Փառնա (Փավնա), նաև Փառնես, Փառիսոս անուններն ունեցող գավառը: Պերիարդեսի հարցը քննելու ժամանակ ասվեց, որ սակերը (Սակասեն-Ծակաշեն) այս կողմերում անելիք չունեն և համոզիչ փաստարկներով դրանք (սիրակների հետ) գտան իրենց իսկական տեղը: Ո՞ւմ է մնում սակերից «ազատագրված» այդ տարածքը, եթե ոչ հիշյալ Փավենենին:

Եթե Ստրաբոնը առաջին դեպքում Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան երկրամասերը ներկայացնում է հաջորդական շարքով (Արաքսենեի դաշտ-Սակասենե-Գուգարք գծով), որն այլ կերպ էլ չէր կարող լինել, քանզի ներկայացնում էր Հայաստանի՝ Կուրի երկայնքով տարածված գավառները կամ երկրամասերը (գետից ձախ Հայաստան չի եղել), ապա կարելի՞ է դրանից բխեցնել և «ստեղծել» անպայման մեկ ուրիշ «անընդհատ շարք»<sup>54</sup>, վերջինս դիտելով փաստարկ և ըստ այդմ էլ Փավենեն տանել անհավանական մի վայր:

<sup>52</sup> ՊԲՀ, 1994, № 1—2, էջ 263—264:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 263, նաև՝ *И. Дворецкий, Латинско-русский словарь, Москва, 1986, ст. 320.*

<sup>54</sup> ՊԲՀ, 1994, № 1—2, էջ 264:

Ըստ էության ճիշտ չէ նաև Կոմիտեեն-Սյունիք նույնացումը, նկատի ունենալով նաև, որ աշխարհագրական դիրքով այն չի համապատասխանում Սյունիքին: Կարծում են, որ Կոմիտեեն տեղադրվում է հետագայի Ծավդեացվոց իշխանության տարածքների վրա, մասնավորապես Կուրակ գետից Թարթառ ընկած հատվածում, ներառյալ այժմյան Քարվաճառի շրջանը: Դրա վկայությունն այստեղ՝ Մոավի լեռնաշղթայի վրա գտնվող Գյամիշ (Գոմիս) լեռնագագաթի սոկայությունն է, որի անունը անկասկած կապ ունի Կոմիտեենի հետ (Գյամիշ-Կամիս, Գոմիս-Կոմիս): Քանի որ երկրների, ինչպես նաև մեծ բնակավայրերի անունները հետագայում պահպանվում են տվյալ վայրում գտնվող նշանավոր լեռների, նույնիսկ գետերի անվանումների մեջ:

Փավենեն, Կոմիտեեն, Օրքիստենեն սահմանակից, Ստրաբոնի կողմից հերթականությամբ ներկայացվող, հիմնականում հետագայի Արցախ նահանգի տարածքը զբաղեցնող Հայոց Արևելից կողմանց մարզեր են: Սա է ճշմարտությունը:

Այսպիսով, Գարդմանցոց իշխանությունը ի սկզբանե (I դար) իր մեջ էր ներառել Ստրաբոնյան Սակասենե, Փավենե մարզերը: Պողոսմենոսի ժամանակ (մ. թ. II դար) համեմակոնեպս մինչև IV դարի երկրորդ կեսը, այդ իշխանությունը ներկայացնում է տարածքային կորուստներով՝ Փավենեի արևելյան հատվածում ձևավորվում է Կոլթենե-Կողթմարզը, իսկ բուն Սակասենե-Ծակաշենը (Գանձակի շրջակայքը) անջատվում, հանդես է գալիս որպես առանձին միավոր՝ Գարդմանքից դուրս: Այդ են վկայում հատկապես Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկությունները, երբ Պապի թագավորության ժամանակ վերագրավվեցին մի շարք գավառներ, որոնց թվում Գարդմանցոց իշխանության մեջ չմտնող Կողթ և Ծակաշեն գավառները<sup>55</sup>:

## 2. ԾԱՎԴԵՆԱՑՎՈՑ ԻԾԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս իշխանության մասին, բացի Խորենացուց, հիշատակում են նաև Ագաթանգեղոսը, Եղիշեն, Ուխտանեսը և ուրիշներ: Ագաթանգեղոսը գրում է. «Այնժամ թագավորը շուտափույթ և երկյուղածությամբ... հավաքեց երկրների գլխավոր նախարարներին ու կուսակալներին: ...Տասնմեկերորդը Սյունյաց երկրի իշխանը, տասներկուերորդը՝ Ծավ-

<sup>55</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 323, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1984, էջ 104:



դեից երկրի իշխանը, տասներեքերորդը՝ Ոսիացոց երկրի իշխանը»<sup>56</sup>...: Այստեղ աշխարհագրական դիրքով Ծավդեիցը համապատասխանում է Արցախին:

Ըստ Սո. Կանայանի, Ծավդեացվոց աշխարհն ու Ծովդեացիք (Մ. Խորենացու նախօրինակը եղել է Ծովդեացիք) նույնը չեն: Կա Ծավդեից աշխարհ հարավում (որի անունը կապվում է Տիգրիսի վտակ Զավ գետի հետ) և Ծովդեացիք հյուսիսում, որը Սյունյաց Սոսք-Սոդք գավառն է<sup>57</sup>:

Ս. Երեմյանը ընդունում է Ծովդեացիք-Սոսք նույնացումը և Ծավդեացվոց իշխանությունը համարում նույն Սոդք գավառը: Նրա կարծիքով Ծավդեացի անունը առաջացել է ոչ թե գավառի անունից, այլ, ընդհակառակը, գավառը և նրան տիրող իշխանական տոհմի անունը առաջ է եկել նրա կենտրոնի՝ Ծաղ-Սաղք գյուղաքաղաքի անունից, որի «անվան ձևը էթնիկական անուն է և կարող է ենթադրել տալ, որ հիրավի այստեղ բնակեցվել է ծավդեացի ցեղը կամ տոհմը»<sup>58</sup>: Ս. Երեմյանը գտնում է, որ դեռևս Տիգրան Մեծի օրոք Սևանի ավազանում (այժմյան Սոդք գյուղում) կազմվել է փոխարքայություն-սատրապություն և իր կենտրոնի՝ Ծաղք-Սավդք («Ծոդք-Սոդք») անունով կոչվել «Ծավդեացվոց իշխանություն»<sup>59</sup>:

Բ. Ուրուբաքյանը նույնպես Սոդքը նույնացնում է Ծավդեից իշխանության հետ, ծագումնաբանական կապ տեսնելով Սոդք կամ «Սաղք» և «Ծաղք» անունների միջև, այն համարելով Արցախի իշխանաձևիտը<sup>60</sup>: Ըստ նրա, Սոդքից գավառը Արցախի կազմում էր դեռևս Ծավդեից իշխանության ժամանակներում, իսկ մի այլ անիթով գտնում է, թե Արցախը Ծավդեից աշխարհ է կոչվել միջնադարում<sup>61</sup>, այնինչ հայտնի է, որ IV դարի վերջին այն այլևս գոյություն չուներ: Ծավդեք-Սոդք անունների մեջ ընդհանրություն են տեսնում նաև այլ ուսումնասիրողներ<sup>62</sup>:

<sup>56</sup> Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1963, էջ 447:

<sup>57</sup> Սո. Կանայան, Անհայտ գաւառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 12-14:

<sup>58</sup> Ս. Երեմյան, «Ծավդեացվոց իշխանություն».— ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1980, № 7-8, էջ 45-48:

<sup>59</sup> Սո. Կանայան, Կապույտի իշխանությունը X-XVI դդ., Երևան, 1975, էջ 36, նույնի Դրվագներ... էջ 8, Պլատոն-աշխարհագրական ճշգրտումներ.— ԲԵՂ, 1971, № 1, էջ 185 և այլն:

<sup>60</sup> Բ. Ուրուբաքյան, Արցախի պատմությունը, Երևան, 1994, էջ 9:

<sup>62</sup> Ն. Տեր-Մինասյան, Երիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին (Երևան,

Մ. Բարխուտարյանը հիշում է մի ավանդություն, ըստ որի Սև հոներից-Ալաններից անջատված մի հատված գաղով Հայաստան, Արտաշես թագավորի ժամանակ բնակություն է հաստատում Սոդ գավառում և գավառը նրանց անվամբ կոչվում է Ծովդ: «Բայց թե ինչպես Ծովդն փոխում է Սոդ... անհայտ է մեզ»<sup>63</sup>, — իր տարակուսանքն է հայտնում տեղագրողը: Եվ իրոք, կան անժխտելի փաստարկներ, որոնք վկայում են, որ Ծավդեից իշխանությունն ու Սոդքը նույնը չեն, այլ՝ առանձին վարչական միավորներ: Ըստ էության թյուրիմացության հիմք է ծառայել այն շփոթը, որ ստեղծվել է Սավդք (Սեբեոսի մոտ՝ «Սաղա քաղաքագիւղ»), Սոդ, Ծոդ, Զոդ, որը վերաբերում է Սոդքին և դրա հետ կապ չունեցող՝ Ծավդեից, Ծովդեացվոց, Ծավդեացվոց, «Ծոդացոց» (ըստ Վարդան Վարդապետի) և Զավդեք անվանումների միջև:

Այսպես, «Զորանամակի»<sup>64</sup> հավաստմամբ հյուսիսային դուռը պաշտպանողների մեջ էին «Կասպեցի, Ուտեացի, Ծաղեացի», իսկ արևելյանը՝ «Սիւնի, Սոդացի»: Եթե Ծավդեքը Սոդք գավառն է, ինչն՝ ունի տրամադրում էր 1000 զինվոր, իսկ Սոդքը՝ 50: Որովհետև Ծավդեքը ավելի մեծ երկրամաս Արցախն է, իսկ Սոդքը Սյունիքի կազմի մեջ մտնող ընդամենը մի փոքրիկ գավառ:

Ս. Ունաչյանը, քննելով այս հարցը, ներկայացնում է այդ երկու վարչական միավորների տարբերությունների այլ ապացույցներ. «Ծավդեք անունը  $\delta > \text{Ս}$  և  $\text{ա} > \text{Օ}$  հնչյունափոխությամբ Սոդք կարող էր դառնալ միմիայն միջնադարում, սունվազն X դարից հետո: VII դ. այնպիսի հեղինակավոր աղբյուրներ, ինչպիսիք են՝ «Աշխարհացոյցը», Սո. Օրբելյանի «եկեղեցահարկի ցուցակները» և Մ. Կաղանկատվացին, չէին պահպանի Սոդք, Սոսք, եթե նույն գավառանունը լիներ «Ծաղեք» Սաղեք»:

Միևնույն գավառանունը մի քանի դար չէր կարող երկու անուն կրել, կամ մեկը պիտի լիներ, կամ մյուսը: V դարում մինչև VIII դարը Սոդք անունը գրվել է Ռ-ով, ուստի այն  $\text{ա} > \text{Օ}$  փոխանցումից չէ:

Հունարենում  $\delta$  հնչյուն չի եղել, հետևապես Ծավդեքը կգրեին Սավդեք, մանավանդ-որ հունարենում չկա  $\text{au}$  (աւ) երկբարձրի Օ-ի

1989), ծանոթագրություններ, էջ 415, ՀԱՍՏԱՆԻ և ՄԵՍՊՈՒՏԻԱԿԻ շրջանների պատմություն, Երևան, 1989, էջ 326, Բ. Հարությունյան, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը.— ԲԵՂ, 1995, № 1, էջ 204, Markwart, Eranschahr, Berlin, 1901, p. 158:

<sup>63</sup> Մ. Բարխուտարյան, Պատմություն Արցախի, Ե., էջ 19:

<sup>64</sup> Ն. Արոնց, Աշխ. աշխ. էջ 282:

փոխանցումը: Բայց Պլինիոսը գրել է sodi, իսկ Պաղոսենոսը՝ sodouce-nae, երկուսի մոտ էլ անվանահիմքը Sod է, որը նույն Սոդք գավառանունն է»<sup>65</sup>:

Գիտնականը Սոդքը կապում է Սոդեր ցեղի հետ: Ըստ նրա, գեղներից (Գեղարքունի) անշատվելուց հետո, տեղի ցեղը ստացավ Սոդեր անունը, իսկ տարածքը՝ ցեղանվամբ՝ Սոդք: Այդ պրոցեսը տեղի է ունեցել մ. թ. ա. II դարում<sup>66</sup>:

Որ «Ծավդեպն» ու «Սոդիքը» նույն չեն, վկայում է նաև «Աշխարհացույցը»<sup>67</sup>:

Ս. Ումառյանը Ծավդեպից իշխանության նստոցը տեղադրում է Արցախի Մարտունու շրջանի ներկայիս Ծովատեղ գյուղի տեղում (նախկին Ծավդեպ), որը գտնվում է 120 կմ<sup>2</sup> շրջագծով բլուրների լանջերին սփռված բազմաթիվ գյուղերի կենտրոնում, լճի ափին, որից էլ ստացել է ծավ, ծով հիմքով (Ծավդեպ, Ծովդեպ) անունը: Ծավդեպ անունը միջնադարում ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է Ծաւատեղ (դէք՝ տեղ), ապա Ծվատեղ: Գյուղի լիճն այժմ ցամաքել է և տեղը ճահճուտ է, որտեղից էլ բխում են վարարակները: Ծվատեղ գյուղի դիմաց եղել է մի հիմնավորց բերդ (այժմ՝ ավերակ), որին տեղացիները անվանում են Սնգրատեղ: Սա նույնպես հնագույն Սնգրադեպ անունն է: Ամրոցի անվանահիմքը պարսկական ծագում ունի, սակգ նշանակում է «քար», ուստի այն եղել է «քարաբերդ»<sup>68</sup>:

Հայտնի է, որ Արցախի այս հատվածն իրոք առանձնանում է անհիշելի ժամանակներից մարդու գոյությունն ու գործունեությունը հավաստող պատմական բնակատեղիներով՝ ոչ հեռու գտնվող Ազոխի հին քարե դարի բնակատեղին, ներկայիս Ֆիզուլու մոտ գտնվող, «Թաղված եկեղեցի» մոզոնված շուրջ 8000 ամյա բազմաշերտ բնակատեղին և այլն, սակայն, «Աշխարհացույցի» Ծավդեպ գավառը (Զաւէ անվամբ) տեղադրվում է Արցախի հյուսիսում, որին կանդրադառնալով «Արցախը ըստ Աշխարհացույցի» բաժնում, ուր կենդակացվեն գավառները:

Ծավդեպցվոց իշխանության տեղադրության, սահմանների մասին աղբյուրներում ստույգ տեղեկություններ գրեթե չկան: Միայն Վարդան Վարդապետի մոտ է (այն էլ հրատարակչի ծանոթագրության մեջ) հի-

<sup>65</sup> Ս. Ումառյան, Սյունիքը Դիցարան, Երևան, 1981, էջ 60:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>67</sup> Ա. Արրահամյան, Ծիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 353:

<sup>68</sup> Ս. Ումառյան, նշվ. աշխ. էջ 60:

շատակվում՝ «Ծավդեպ երկիր յարևելից Կուր գետոյ, յաշխարհին Աղուանից կամ սահմանակից նմին»<sup>69</sup>:

Կարելի՞ է արդյոք հիմք ընդունել այս միակ տեղեկությունը և իշխանության սահմանը տարածել մինչև Կուր գետը: Հնարավոր է, եթե թեկուզ մեկ փաստարկով հիմնավորում ստանար:

Այսպես, ստույգ հայտնի է, որ Ծավդեպցվոց իշխանությունը հյուսիս-արևմուտքից հարում է Գարդմանցոց իշխանությանը, սահման ունենալով Կուրակ գետը: Հետևաբար այդ իշխանությունը կարող էր Կուրին հասնել միակ՝ հյուսիս-արևելյան կողմից (եթե նկատի ունենանք, որ Կուրակ գետը մեծ թեքությամբ հոսում է դեպի արևելք, ներկայիս Մինգեչաուրի և Եվլախի գրեթե միջնամասով թափվում Կուր գետը), այն էլ համեմատաբար նեղ շերտով (Կուրակ և Ինջա գետերի հովիտներով), քանի որ անմիջապես հարավակողմում Խորենացու հիշատակած հին Ուտիք գավառն է: Այս հատվածում՝ ներկայիս Ծահունյանի շրջանում, նրա հյուսիսային և արևելյան նախապեղծային տարածքներում է տեղադրված Զաւէ (Ծավդեպ) աշխարհացույցյան գավառը (որի մասին կիսովի հետագա էջերում), որն ինքնին փաստարկ է Ծավդեպցվոց իշխանության՝ դեպի Կուր տարածված լինելու հնարավորության մասին: Կամ ի՞նչն է նկատի առնվել, երբ Հայաստանի այս կամ այն իշխանությունները կցվել են այս կամ այն կողմի պաշտպանությանը (օրինակ, ինչպես նշվեց, Սյունիքը, Սոդքը պաշտպանում էին Հայաստանի արևելյան սահմանները, իսկ Գարդմանը, Ծավդեքը, Ուտիքը և այլն՝ հյուսիսային): Կարծում են, որ ինչքան էլ «Զորանամակը» ներկայիս տեսքով արհեստական (պայմանական) բնույթ կրեր (որպես հետագայում, ստենք VI դ. ստեղծված փաստաթուղթ), այդուհանդերձ, դրա ստեղծման, զորամասերի տարածքային բաժանման համար որոշակի հիմքեր պիտի որ լինեին, որ, ասենք, Ուտիքը, Ծավդեքը և Գարդմանը մտցվեր հյուսիսակողմի պաշտպանությանը: Դա սահմանների պաշտպանության տարածքային սկզբունքն է, որը չնայած նշված փաստաթղթում շատ դեպքերում խախտված է, խառնված իրար, բայց կոնկրետ՝ նշված իշխանությունների դեպքում պահպանվում է: «Զորանամակում» հյուսիսային հատվածի պաշտպանության մեջ են մտցված Կուրի ավազանի ամենահզոր իշխանությունները, որոնց թվում՝ Ծավդեպցվոց իշխանությունը, որը եթե մինչև Կուր սահման չունենար, միգուցե, օրինակ, Սոդքի հետ ներգրավվեր այլ կողմի պաշտպանությանը:

<sup>69</sup> Վարդան Վարդապետ, Հավաքումն պատմութեան, էջ 30:



Նկատի ունենալով վերոհիշյալը, հնարավոր է համարվում Ծավ-  
դեացվոց իշխանության սահմանակցումը Կուր գետին, թեև այս հարցը  
առավել մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունի: Կարծում եմ, որ  
հարավային սահմանը Արաքս գետն է, նկատի ունենալով վերոհիշյալ  
Ծովատեղի անժխտելի առնչությունը այդ իշխանությանը: Սակայն, չի  
բացատրվում, որ այն, ավելի ուշ, սահմանափակվեր մինչև Կարկառ գե-  
տը ընկած տարածքով, հաշվի առնելով, երկու Հաքանդների պատմու-  
թյունը, որոնց մասին աղբյուրներում ստույգ տեղեկություններ գրեթե  
չեն պահպանվել:

Ըստ Բ. Հարությունյանի, Ծավդեք անունը Արցախում է հայտնվել  
հարավից, ծագելով Ծավդեք-Ջարդե երկրանունից<sup>70</sup>, որի մասին հիշա-  
տակում է Եղիշեն, անդրադառնալով պարսից Հազկերտ II թագավորի  
հավատափոխության հրովարտակին<sup>71</sup>: Գրեթե նույն միտքն էր ակնար-  
կում նաև Ստ. Կանայանը, Ծավդեացվոց իշխանության սահմանները  
տարածելով Ծամբոր գետից մինչև Կարկառ<sup>72</sup>:

### Յ. ԳՍՐԳՍՐԱՅՎՈՅ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՍՐԳՍՐԱՅՎՈՅ ԳՍՇՏ

Գարգարացվոց իշխանության և դաշտի տեղադրության հարցում  
ուսումնասիրողների կարծիքները կարելի է բաժանել երկու խմբի:

Այսպես կոչված «Նախատվետական» գիտնականներ, որոնք  
առանձին անճշտություններով հանդերձ, հաստատ գիտեն և առանց  
որևէ տարակուսանքի ցույց են տալիս դրանց իսկական տեղը և «Սո-  
վետական», որոնք ձգտում են ամեն կերպ այդ իշխանությունն ու դաշ-  
տը հեռու պահել Հայաստանի, մասնավորապես՝ Արցախի սահմաննե-  
րից, անկողմնակալ պատմությունը խառնելով քաղաքականության հետ:

Ինչևէ, հայկական աղբյուրներում Գարգարացիներին առաջին ան-  
գամ, ինչպես նշվեց, հիշատակել է Մ. Խորենացին՝ թվարկելով Հայկ  
Նահապետի ժառանգներից սերված Կուր-Երասխյան միջագետքի իշ-  
խանությունները: Իսկ հետո պատմահայրը նկարագրում է Գարգարաց-  
վոց դաշտում տեղի ունեցած նակատամարտը. «Իսկ Տրդատ թագավո-  
րը Հայաստանի բոլոր (գորքերով) Գարգարացվոց դաշտն իջնելով՝

<sup>70</sup> Տե՛ս Բ. Հարությունյան, նշվ. հոդվածը, ՊԲՀ, 1995, № 1, էջ 202:

<sup>71</sup> Եղիշեն, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 21:

<sup>72</sup> Ստ. Կանայան, նշվ. աշխ. էջ 12—13:

հանդիպում է հյուսիսականներին և նակատամարտ է տալիս»<sup>73</sup>: Հա-  
յոց թագավորը ջարդում է թշնամուն, սպանում նաև նրանց թագավորին,  
իսկ հետո հետամուտ լինելով՝ հալածում է մինչև հոնաց աշխարհը  
(Կասպից ծովի արևմտյան ափին, Դերբենդի մոտերքը— Ս. Ս.)<sup>74</sup>:

Հայկական աղբյուրներից Գարգարացիներին հիշատակում են նաև  
Թ. Արծրունին, Մ. Կաղանկատվացին, Ս. Տարոնացին (Ստողիկ), Վար-  
դան Վարդապետը և ուրիշներ:

Ուսումնասիրողներից Հ. Համբարյանը Խորենացու Գարգարացոցը  
համարելով Ագարանգեղոսի Գարգարացիների հետ (վերջինիս նախ-  
օրինակը եղել է Գարգարացոց Գուգարացոցի փոխարեն), հանգել է  
այն եզրակացության, որ դրանք «Գուգարացիների» գրչական աղավա-  
ղումն են և նախընտրել է «Գուգարացվոց» ձևը<sup>75</sup>: Փաստորեն ժխտելով  
Գարգարացվոց իշխանության առկայությունը Կուր-Երասխյան միջա-  
գետքում, վերջինիս տեսակետը պաշտպանել է Բ. Ուլուքաբյանը՝ Խո-  
րենացու «Գարգարացոցը» համարելով «ակնհայտ թյուրիմացություն»,  
որ Գարգարացվոցի փոխարեն պետք է լինի Գուգարացվոց և որ դա  
իբր ապացուցված է հայագիտության մեջ<sup>76</sup>: Այնուհետև, առանց որևէ  
համոզիչ կովանի, նա Գարգարացվոց դաշտը տեղադրում է Կուրի ձա-  
խափնյակում. «Եթե այդ դաշտը Կուրից հարավ լիներ,— գրում է Ուլու-  
քաբյանը,— ապա Խորենացին անպայման կհիշեր, որ Տրդատը գետը  
անցնելով է հալածում: Գարգարացվոց դաշտը կարող էր լինել միայն  
ու միայն այնտեղ, ուր գարգարներն ապրում էին, կամ երբևէ ապրել  
են: Կուրից հարավ ոչ մի աղբյուր չկա»<sup>77</sup>:

Վ. Առաքելյանը Գարգարացվոց դաշտը տեղադրում է Գուգար-  
քում<sup>78</sup>: Բայց այդ դեպքում դճվար թե կարիք լիներ «հյուսիսականնե-  
րին» Գուգարքից քշել մինչև Կասպից ծով, Դերբենդից հյուսիս, որտեղ  
գտնվում է հոների հայրենիքը<sup>79</sup>:

<sup>73</sup> Մ. Խորենացի, Հայոց պատմություն, էջ 149:

<sup>74</sup> Նույն տեղում:

<sup>75</sup> Հ. Համբարյան, Գարգարացի՞ք թե՞ Գուգարացիք.— Հանդես ամսօրեայ, 1910,  
էջ 241—242:

<sup>76</sup> Բ. Ուլուքաբյան, Արցախի պատմությունը, էջ 16, Խաչենի իշխանությունը,  
էջ 56: Իրականում «Գարգարացվոցը» աղավաղում չէ, նման իշխանություն էլ  
որի մասին վկայում են շատերը, այդ թվում Մ. Խորենացին, որի նախադրություննե-  
րի ցանկում Գարգարքն ու Գուգարացը ներկայանում են առանձին-առանձին՝  
18. Ծավդեցի, 19. Գարգարք... 22. Գուգարաց (Տե՛ս Ն. Աղոնց, նշվ. աշխ. էջ 292):

<sup>77</sup> Լրաբեր հասարակական գիտությունների, 1968, № 1, էջ 57:

<sup>78</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ. ծանոթագրություններ, էջ 278:

<sup>79</sup> Նույն տեղում:



Գարգարացվոց դաշտի տեղադրությունը մանրամասն ուսումնասիրել է Ա. Պետրոսյանը, որը չընդունելով նշված տեսակետները, այն տեղադրում է ներկայիս Միլի դաշտավայրում, Բալլականի մոտ<sup>80</sup>: Այստեղ է տեղադրում նաև Ս. Երեմյանը<sup>81</sup>: Վերջիններիս ժխտում է Ա. Հակոբյանը, դաշտը տեղադրում Կուրի ձախափնչակում<sup>82</sup>, հիմնվելով ոչ բավարար համոզիչ փաստերի վրա: Բ. Հարությունյանը նույնպես ստիժ է ունեցել Գարգարացիներին անդրադառնալու, որոնց իշխանությունը տեղադրում է Փայտակարան քաղաքի և հարակից շրջանների տարածքում<sup>83</sup>: Սակայն մի այլ տեղ<sup>84</sup>, նա գարգարացիներին բնակեցնում է Կուրի ձախափնչակում, նույն վայրում տեղադրելով նաև Գարգարացվոց դաշտը: Ժխտելով Գարգարացվոց իշխանության անկախությունը Կուր-Երասխյան միջագետքում, Բ. Հարությունյանը հարցնում է, «թե ինչպե՞ս է Մ. Խորենացու «Պատմության» մեջ հայտնվել Գարգարացվոց իշխանությունն անունը, երբ տարածքային ստումով Կուրի և Երասխի միջագետքում ազատ տարածքներ չեն մնում: Եվ արդյո՞ք այս կողմերում եղել է գարգարացիների բնակչությունն ու իշխանությունն»<sup>85</sup>: Այնուհետև, մեջ բերելով մի շարք ենթադրություններ, նա Խորենացու հիշատակած իշխանությունները վերափոխում է կուսակալությունների, որ, իբր, Տրդատ I-ը դեռ մինչև ալանական ներխուժումը, ստեղծել էր Ուտեացվոց, Գարդանցվոց և Ծավղեացվոց ռազմական կուսակալությունները ի հակակշիռ Գարգարացիների նոր ձևավորված իշխանության, հակազդելու վերջիններիս՝ Այսրկովկաս ներխուժելուն ու հաստատվելուն<sup>86</sup>:

Թ. Արծրունին Գարգարացվոց դաշտին ու իշխանությանը անդրադարձել է IX դ. 50-ական թվականների դեպքերի կապակցությամբ, երբ

<sup>80</sup> Ա. Պետրոսյան, Գարգարացվոց դաշտի տեղադրությունը.— Լրագեր, 1976, № 7, էջ 69: Միլը հին Մոխանքն է: Արդյո՞ք կարող էր Խորենացին այն շփոթել Գարգարացվոց դաշտի հետ:

<sup>81</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ. էջ 46:

<sup>82</sup> Ա. Հակոբյան, Գարգարացիները ըստ անտիկ և հայկական աղբյուրների.— ՊԲՀ, 1982, № 4, էջ 126, Албания-Алуанк в греко-латинских и древне-армянских источниках, Ереван, 1987, ст. 67—72.

<sup>83</sup> Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կազմությունը.— ԲԵՀ, 1976, № 2, էջ 82:

<sup>84</sup> Բ. Հարությունյան, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը.— ՊԲՀ, 1995, № 1, էջ 195, 201:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 193:

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 197, 202:

«Բուղան վերցրեց իր զորքերի բազմությունը, իջավ Գարգարացվոց դաշտը և գնաց մտավ Պարտավ Մեծ քաղաքը»<sup>87</sup>: Պատմիչը մի այլ առիթով էլ գրում է, որ «(Հիսեն)...գնաց և հասավ Պարտավ, Գարգարացվոց աշխարհը»<sup>88</sup>: Մ. Կաղանկատվացին համառոտ ներկայացնում է Խորենացու շարադրանքը<sup>89</sup>, իսկ Վարդան Վարդապետը հյուսիսականների դեմ ճակատամարտի վայր էր համարում Գարգարացվոց գավառը («ի Գարգարացվոց գաւառին»)՝<sup>90</sup>: Այս կարծիքին համամիտ է Մ. Չամչյանը. «Գարգար գաւառ մեծ յաղուանս հայոց յաշխարհին ուտեացոց»<sup>91</sup>: Վրացական աղբյուրներն էլ են Գարգար գավառ հիշում, որն ընկած է Խաչենի և Բալլականի միջև, այժմյան Լեռնային Ղարաբաղին հարող նախալեռնային տարածքներում. «Ապա վրաց միացյալ ուժերն ելան Գեղարքունիք (Գեղարքուն) և՛ անցնելով Խաչենն (Խաչիանն)՝ իջան Կարկառ (Ղարղարի) երկիրը. հասնելով Բալլական (Բաղուն)՝ ավերեցին ամբողջ Առանը... Իսկ Կարկառից (Ղարղարից) վեց օր ման եկան մինչև Ծամբոր (Ծանբոր)»<sup>92</sup>: Մ. Ջալալյանը «Գարգարացվոց աշխարհում» է տեղադրում Աղղամի շրջանի Բայաթ ավերակ քաղաքատեղին<sup>93</sup>: Մ. Բարխուտարյանցի «Գարգարացվոց դաշտը» համապատասխանում է Կարկառ գետի ստորին հովտին, իշխանությունը՝ Միլի դաշտավայրին, ներառյալ Վարդանակերտ, Բալլական և Լամբարան քաղաքները<sup>94</sup>:

Ղ. Ալիշանը գարգարացիներին տեղադրում է Ուտի աշխարհում, որտեղ գտնվում է «Բուն գաւառն Ուտի Առանձնակ և երկիրն Գարգարացվոց»<sup>95</sup>, ինչպես նաև Բալլականի շրջակայքում, որպես «բնիկ երկիր Գարգարացվոց»: Լեռն նույնպես Գարգարացվոց դաշտը տեղադրում է Ուտիքում. «Իսկ Ուտիք նահանգում ապրող ցեղերից Արցախի

<sup>87</sup> Թ. Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985, էջ 277, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 358:

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 337:

<sup>89</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ. էջ 21:

<sup>90</sup> Վարդան Վարդապետ, Հավաքումն պատմության, էջ 40:

<sup>91</sup> Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, Գ, Երևան, 1984, հատուկ անունների ցանկ, էջ 141:

<sup>92</sup> Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1963, էջ 14:

<sup>93</sup> Մ. Ջալալեանց, Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Ա, Տիփլիս, 1842, էջ 197:

<sup>94</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 21, Պատմություն Աղղունից, Ա, էջ 18—19:

<sup>95</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց մեծաց, էջ 90:

սահմանակից էին... Գարգարացիները (Ոստի Առանձնյակի մեջ, որ Պարտավ մայրաքաղաքն էր)»<sup>96</sup>: Ըստ Ն. Ադոնցի, «Գարգարական դաշտ կոչվում էր հին Ոստին կամ Օտեման՝ Պարտավ քաղաքի հետ միասին»<sup>97</sup>: Գարգարներին Կուրից հարավ է տեղադրում նաև Իրանցի պատմաբան Ռեզան. «Ինչ վերաբերում է գարգարների բնակավայրին, կարծվում է, թե նրանք ապրում էին Կուր գետի հարավային հարթավայրերում, Գարգար գետի ոլորտում»<sup>98</sup>:

Ինչպես տեսնում ենք, հարցին անդրադարձողների գերակշռող մասը վստահորեն Գարգարացվոց դաշտն ու իշխանությունը տեղադրում է Կուրից հարավ, Ոստիքի վարչական կենտրոն և սկզբնական բնակավայր Ոստի առանձնակ գավառում, որտեղ Պարտավն է: Եվ իրոք, Կուրի ձախափնչակում տեղադրելու համար լուրջ հիմքեր չկան, իսկ տրամաբանությունն ու փաստերը դրա օգտին չեն խոսում: Այսպես, եթե այդ դաշտը Կուրի ձախափնչակում լիներ, որը Հայաստանի սահմաններից դուրս է, հազիվ թե Տրդատ թագավորը զորք հավաքեր և գնար նրանց դեմ: Թշնամին պիտի խախտեր Հայաստանի սահմանը, մտներ նրա տարածքը, որ Հայոց թագավորն էլ, պատմիչի խոսքերով ասած, «իջներ» նրանց դեմն առնելու: Պետք է ուշադրություն դարձնել «իջնել» բառին: Տրամաբանությունը հուշում է (իսկ տեղանքին ծանոթ մարդիկ դա կհաստատեն), որ եթե այդ դաշտը գտնվեր Կուրի ձախ ափին, ապա Հայոց թագավորը պետք է այնտեղ «իջներ» Կովկասյան լեռներից, որտեղ Տրդատը անելիք չունի: Արդյո՞ք հնարավոր է հայկական լեռնաշխարհից «իջնել» Կուրի ձախափնչակ, Կովկասյան լեռների ստորոտում փոված մի դաշտավայր, որի ստույգ տեղը «ձախափնչակի» կողմնակիցները դեռ չեն պարզել<sup>99</sup>: Եվս մի կարևոր նկատառում. Գարգարացվոց դաշտը Կուրի ձախափնչակում կամ Փայտակարանում տեղադրողները անուշադրության են մատնել կամ չեն ցանկանում ընդունել ամենակարևորը՝ Խորենացու հաղորդածը Գարգարացվոց և մյուս իշխանությունների մասին: Իսկ նա ներկայացրել է Կուրից հարավ բն-

<sup>96</sup> Լեո, երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 146, 148:

<sup>97</sup> Ն. Ադոնց, Հայոց նախարարության ծագումը, Պեդուր, 1949, էջ 48:

<sup>98</sup> Էնանթոլյան Ռեզա, Ազարբայջան և Առան, Երևան, 1994, էջ 87:

<sup>99</sup> Կուրի ձախափնչակում առկա են երկու հիմնական դաշտավայրեր — Աղվանքի (Աղվանից դաշտ), որը ներկայիս Ալազան-Ադրիչաչի դաշտավայրն է (175 կմ երկարությամբ) և Ծիրվանի դաշտավայրը (150 կմ երկարությամբ)՝ դեռևս III դաշրում հայտնի «Ծարավան» անվամբ, որոնցից ոչ մեկը «Գարգարացվոց» անունը չի կրել:

կած ժողովրդին ու իշխանությունները (որոնց թվում՝ Գարգարացվոցը) և ոչ թե ձախափնչակի, ընդգծելով դրանց հայկական ծագումը, Հայկ նահապետի ժառանգներից սերված լինելու պարագան: Պարզ է, որ եթե Կուրը Հայաստանի սահմանն էր, այդ իշխանությունն ու դաշտը (սնանավանդ հայկական) Կուրից հյուսիս՝ Հայաստանից դուրս չէր կարող լինել: Ուրեմն պետք է տարրերել բուն Աղվանքում ապրող, բայց ոչ աղվանական այդ ցեղերին, որոնք, ըստ մեր պատմիչների, Գուգարներ<sup>100</sup> էին կոչվում և նրանց չխառնել աջափնչակի Գարգարացվոց իշխանության հետ, որը զուտ աշխարհագրական բնորոշում ունի, ինչպես որ ներկայացրել է մեր պատմահայրը: Դա, կուպիտ ասած գրեթե նույնն է, երբ ասենք «Ղարաբաղցոց իշխանություն» և մի 500 տարի հետո մեկը վեր կենա և սկսի ապացուցել, որ այնտեղ հայեր չեն ապրել, այլ ղարաբաղցիներ:

Այսպիսով, հիմնականում ընդունելի են Թ. Արծրունու, Վարդան Արևելցու, Ղ. Ալիշանի, Լեոյի, Ադոնցի տեղադրությունները:

Գարգարացվոց դաշտը այժմյան Ղարաբաղյան դաշտավայրն է, որը շուրջ 80 կմ երկարությամբ ձգվում է հյուսիսից հարավ՝ սկսած Գերան (Կուրան) գետից մինչև Միլի դաշտավայրի եզրամասը՝ իր մեջ ընդգրկելով ներկայիս Բարդաչի շրջանն ամբողջությամբ, տարածքներ Եվլախի, Թարթառի, Աղդամի շրջաններից և Աղջաբեդու շրջանի մի մասը՝ մինչև շրջկենտրոն: Փաստորեն հին Ոստիքի հիմնական տարածքները գտնվում են այդ դաշտի վրա, որի միջով հոսում են Թարթառ, Խաչեն և Կարկառ գետերը: Բացի այդ, այն հետևությանն ենք հանգել, որ Լեռնային Ղարաբաղից արևելք ընկած միջազետքի ամբողջ հարթավայրային տարածքները Գարգարացվոց իշխանության մաս են կազմել: Իսկ դա նշանակում է, որ այդ իշխանությունը իր մեջ էր ներառել Ոստի առանձնակ, Առանոտ, Տրի, Ռոտ պարսյան (Ոստիքի) և Պիանք, Մուխանք (Արցախի) գավառները:

Առանձին ուսումնասիրողներ (Մ. Բարխուտարյանց, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի հեղինակները)<sup>101</sup> և հարակից շրջանների տալիս են Գարգար անունը, ըստ էության նկատմամբ Արցախին տալիս են Գարգար անունը, ըստ էության նկատմամբ Գարգար անվամբ տեղանունների առկայությունը, որը, տի ունենալով Գարգար անվամբ տեղանունների տարածքում և շրջակայքում, նման հարցերում որոշիչ չէ (Հայաստանի տարածքում և շրջակայքում տասնյակ Գարգարներ կան՝ բնակավայրեր, գետեր և այլն):

<sup>100</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 29:

<sup>101</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 21, Տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 808:

Եթե ազգն ապրել է պատմական զարգացման մի անխուսափելի պրոցես՝ կազմավորվել է տարբեր ցեղային, էթնիկական այլևայլ տարրերից, ապա Հայկական բարձրալիանդակում հաստատված բազմաթիվ ցեղեր անհետացել են՝ իրենց անունները ավանդելով այս կամ այն վայրին, անգամ գավառների ու նահանգների: Եվ միայն աշխարհագրական անունների մեջ է պահպանվել հիշողությունը նրանց մասին: Օրինակ, ասպարեզից հեռացան ալարողները, սասպեյրները, փասիաները, թողնելով Այրարատ, Սպեր, Տալք, Բասեան անունները<sup>102</sup>: Չկան նաև Սիրակները (Շիրակ) և գոգերը (Գուգարք), որոնք սարմատական ցեղեր էին<sup>103</sup>: Գեղերից ծագել է Գեղարքունի անունը: Սակերը նվաճեցին Հայաստանի գավառներից մեկը՝ որ կոչվեց Սակասեն (Շակաշեն)<sup>104</sup>: Բաղքը կապ ունի Բաղասականի հետ, ծագում է լեռնական բաղասնիք ցեղից<sup>105</sup>: Պարսկական ցեղերի (մասնավորապես պարրասիների) անունն է կրում Պարսկանք Արցախի գավառը<sup>106</sup>: Աղահեճը կապվում է լաֆին փոքրիկ ժողովրդի հետ, որի մնացորդները ապրում են Դաղըստանի հարավային մասերում, Քաշաթաղը՝ քաշ ցեղի, որն ապրել է Էլամի հյուսիս-արևմտյան լեռնային վայրերում: Սրանց մի մասը ձուլվել է մի մասն էլ, Մակեդոնացու արշավանքի ժամանակ, տեղահանվել և հաստատվել էր Կասպից ծովի արևմտյան ափերին և Սյունիքում<sup>107</sup>:

Մոխանքը՝ Արցախի գավառներից մեկի անունը, ծագում է Կասպից ծովի ափերին ապրող ցեղերից մեկի անունից՝ մոխուներից (Մուդան դաշտ՝ մուղերի դաշտ), որոնք ազգակցություն ունեն մոկսերի (Մոկք) հետ<sup>108</sup>:

Կասկածից դուրս է նաև Գարգարացվոց տեղանվան Էթնիկական ծագումը: Ըստ Ադոնցի, սրանք այն լեռնականներն էին, որոնք բաղասնիք և այլ ցեղերի հետ (Կուրի ձախափնյակից) Հայաստան ներխուժեցին Խոսրով Կոտակի թագավորության ժամանակ (330—338 թթ.), որոնց Փավստոսը հիշում է Գուգարներ անվամբ<sup>109</sup>:

<sup>102</sup> Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 438:

<sup>103</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, 6. Ա, Երևան, 1944, էջ 73, Ն. Ադոնց, Ազգ. աշխ. էջ 472—473:

<sup>104</sup> Ստրաբոն, էջ 37:

<sup>105</sup> Ն. Ադոնց, Ազգ. աշխ. էջ 471:

<sup>106</sup> Նույն տեղում, էջ 473:

<sup>107</sup> Ս. Ունտյան, Ազգ. աշխ. էջ 64:

<sup>108</sup> Ն. Ադոնց, Ազգ. աշխ. էջ 438, 473:

<sup>109</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 29:

Կարելի է դեռ բազմաթիվ օրինակներ բերել համոզվելու, որ Հայաստանի մի շարք տեղանուններ կրում են այս կամ այն կորած-անհետացած ցեղի անունը:

Այսպիսով, փորձեցինք ճշտել Խորենացու հիշատակած Հայոց Արևելից կողմանց բոլոր երեք իշխանությունների (Գարդմանցոց, Ծավդեացվոց, Գարգարացվոց) զբաղեցրած տարածքները: Դա կարևոր էր նաև այն տեսակետից, որ նպաստեց գտնելու «անհետացած» Գարգարացվոց իշխանության տեղը, որն ինչպես տեսանք, թեև զբաղեցնում էր Ուտիքի հիմնական տարածքը, առանձին վարչական միավոր չէ (նաև «Զորանամակի» տվյալներից ելնելով): Պարզվեց նաև Գարդմանցոց իշխանության տեղը՝ որպես Ուտիքից անկախ առանձին վարչական միավոր: Խոսվեց նաև առանձին վարչական միավոր Ծավդեացվոց իշխանության մասին:

Այսբանից հետո ո՞ւր մնաց «Զորանամակում» հիշատակվող «Ուտեացիներ», որը Գարդմանքի և Ծավդեքի հետ հավասարազոր միավոր էր կազմում:

Ելնելով «Զորանամակի» և «Գահնամակի» տվյալներից, ինչպես նաև այլ աղբյուրների ընձեռած հնարավորություններից, այն հետևությանն ենք հանգում, որ «Զորանամակի» «Ուտեացիներ» փաստորեն Գարգարացվոց իշխանությանը փոխարինող նախարարությունն է: Կոստել կարելի է, որ եթե տարածքները նույնն են կամ տվյալ ժամանակաշրջանում Գարգարքը մտել է Ուտիքի մեջ, զորքն էլ կարող էր հանդես գալ Ուտիքի անունով, որպես ուտեացի, ինչպես-որ ներկայանում է «Զորանամակում»: Պետք է ուշադրություն բերել այն հանգամանքին, որ Խորենացու մոտ ուտեացիներ էր իշխանությունների կողքին ներկայանում է որպես ազգ և ոչ իշխանություն<sup>110</sup>: Բացի այդ, պետք է նաև նկատի ունենալ, որ Աշված բոլոր երեք իշխանություններն իրենց գոյությունը դադարեցրել են ոչ միաժամանակ: Օրինակ, Ծավդեացվոց իշխանությունը վերացվել էր IV դ. երկրորդ կեսին, Գարդմանցոց իշխանությունը (չնայած տարածքային որոշ կորուստներին) իր գոյությունը պահպանեց ավելի ուշ՝ մինչև Ավարայրի ճակատամարտը (V դ. 50-ական թվականները), իսկ Գարգարացվոց իշխանությունը դադարեց գոյություն ունենալ մինչև IV դարը (հավանական է II դարում), իր տեղը զիջելով Ուտիքին: Համեմայնդեպս, 72 թ. (այսինքն I դարում) հյուսիսականների դեմ ճակատամարտի վաղ դարձած «Գարգարացվոց դաշտ»

<sup>110</sup> Մ. Խորենացի, Հայոց պատմություն, էջ 72:



հիշատակությունը պատմիչների մոտ, չի վկայում գարգարների՝ այստեղ, ավելի ուշ հաստատվելու մասին: Ահա թե ինչու Գահնամակն ու Զորահամակը, որոնք IV—V դդ. հայկական իշխանությունների գահերեցության իրավիճակն են վերարտադրում<sup>111</sup>, ի տարբերություն մյուս երկու իշխանությունների (Գարդմանի և Ծալդեքի), չեն հիշատակում Գարգարքը:

Ստրաբոնը (մ. թ. ա. 63-մ. թ. 23) Ուտիք-Օտենայի մասին (որպես մարզ կամ գավառ, ստանձին վարչական միավոր) չի հիշատակում, թեև թվարկում է Հայոց Արևելից կողմանց վարչական կազմավորումները, այդ թվում Սակասենե-Շակաշենը: Կոնկրետ տեղեկություններ չկան նաև նրա ժամանակակից այլ հեղինակների մոտ:

Ուտիք-Օտենայի առկայության մասին են վկայում I դարի երկրորդ կեսի և II դարի առաջին հեղինակներ Պլինիոսն ու Պտղոմեոսը, որոնց ժամանակ այդ վարչական միավորը արդեն կար և տարածվում էր Կուրի աջ ափին, ընդ որում, Արաքսը սահման էր Օտենայի և Ստրապատականի միջև<sup>112</sup>: Սակայն, դժվար չէ կռահել, որ տվյալ ժամանակաշրջանի Ուտիքի սահմանները աշխարհացույցյան Ուտի առանձնակ գավառի սահմաններից այն կողմ (որտեղ տարածվում էր Սակասենե-Շակաշենը) չէին անցնում: Դա երևում է նաև Պտղոմեոսի և այլ քարտեզներից:

Այսպիսով, Ուտիք նահանգը II դարում տարածվում էր՝ սկսած Կուր և Արաքս գետերի միախառնման տեղից (Արաքսենեի դաշտ՝ հետագա Միլի-Մուղանի դաշտավայր), ընդգրկելով «Աշխարհացույցի» Ռոտ պարսյան, Տրի, Առանոտ և Ուտի առանձնակ գավառների տարածքը: Այս վիճակը (տարածքային առումով), ինչպես վկայում են վաղ շրջանի հայկական աղբյուրները, պահպանվում էր նաև IV դարում:

Այս ամենից հետո, միաժամանակ, մի այլ հարց է ծառայում. եթե Արշակունյաց թագավորության ժամանակ Ուտիքի վիճակը սա էր (այսինքն երկատված-մասնատված՝ ոչ միասնական) և այդ թագավորության վերացումից հետո էլ, փաստորեն ոչ մի ինքնուրույնություն կամ տարածքային ամբողջականություն չի ունեցել, այդ դեպքում նա ե՞րբ

<sup>111</sup> А. Аковян, Албания—Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, ст. 64.

<sup>112</sup> Կ. Աղոնց, նշվ. աշխ. էջ 467:

է ընդհանրապես անկախ եղել և վերահսկել «իր» ամբողջ սահմանները:

Նման հարցադրումները կասկածի տակ են դնում Ուտիք միասնական նահանգ-վարչական միավորի իրականությունն ընդհանրապես՝ առաջնությունը տալով նահանգների բաժանման պայմանականությանը:

#### ԱՐՅԱԽԸ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

Համաձայն «Աշխարհացույցի», Արցախը Մեծ Հայքի տասներորդ նահանգն է, ունի 12 գավառ: Նոր հրատարակության մեջ<sup>113</sup> դրանք ներկայանում են հետևյալ հաջորդականությամբ. 1. Մյուս Հաբանդ, 2. Վայկունիք, 3. Բերդաձոր, 4. Մեծիրանք, 5. Մեծկուսանք, 6. Հարնըլանք, 7. Մուխանք, 8. Պիանք, 9. Պարսկանք, 10. Քուստի, 11. Փառնես, 12. Կուլթ:

Ամենիցապես ստենք, որ այս ցանկը լիարժեք չէ: Հին հրատարակություններում և ձեռագիր օրինակներում գավառների թվում էր Սիսականը (Սիսականի Ուսում, Սիսականի կոտակ), որն այստեղ չկա: Այն դուրս է թողնվել և վերագրվել Մյուս կամ Փոքր Հաբանդին (այդ մասին խոսք կլինի ստորև): Հանելով 12 գավառների ցանկից, ուսումնասիրողները Քուստիփառնես գավառը (որը «Աշխարհացույցի» առանձին՝ Ուտիքի գավառների հետ խառը ցանկերում հանդես է գալիս նաև երկատված՝ Քուստի, Փառնես, բայց այլ աղբյուրներով հաստատվում է նրա մեկ միասնական գավառ լինելու իրողությունը)<sup>114</sup>, կիսել դարձրել են երկուսը՝ լրացնելով գավառների քանակը (12 հատ): Բ. Ոլորբաբյանը իրավացիորեն, չի ընդունում այդ երկատվածությունը և իր ցանկում<sup>115</sup> այն համարում է մեկ միասնական՝ Քուստիփառնես գավառ: Բայց այդ դեպքում 12 գավառները մեկով պակասում է: Բ. Ոլորբաբյանը Մյունիքի Սողք գավառը մտցնում է Արցախի մեջ, անշուշտ նկատի ունենալով, որ այն միջնադարում Արցախի մաս է կազմել: Նա, փաստորեն այս ձևով կիսով չափ ուղղում է նախկին ուսումնասիրողների բացթողումը, եթե նկատի ունենանք, որ Սողքն ու Սիսական Ուսանը մի ամբողջություն էին կազմում: Սակայն, բոլոր դեպքերում,

<sup>113</sup> Ա. Ծիրակաջի, Մատենագրություն, թարգմանությունը, ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 295:

<sup>114</sup> Բազմավեպ, 1911, էջ 258, «Աշխարհացույցի» 1865, 1881, 1944 թ. հրատարակությունների 12 գավառների ցանկերը, Ատ, հ. 1, Երևան, 1966, էջ 160 և այլն:

<sup>115</sup> Բ. Ոլորբաբյան, Արցախի պատմությունը, էջ 10:

ըստ «Աշխարհացույցի», Սողքը Սյունիքի մասն է և դա պետք է ընդունել: Սողքը չէր կարող Արցախի իշխանանիստը լինել<sup>116</sup>: Զարմանալի է, թե Արցախի իշխանները բնական ապահով բազմաթիվ վայրերը թողած ինչո՞ւ պիտի ընտրեին աննպաստ ու անապահով մի վայր, այն էլ հարևան նահանգի սահմաններում:

Բ. Ոլուրաբյանը մի կողմից Սյունիքի այդ գավառը մտցնում է Արցախի մեջ (նման տրամաբանությամբ ինչո՞ւ Արցախի մեջ չմտցնել, ասենք, Ուտիքի Գարդմանաձորը՝ հարակից տարածքներով, որոնք IX դարից հետո, մի քանի դար Արցախի իշխանների տիրապետության տակ էին և ընդհանրապես ինչո՞ւ ենք նշված գավառը Ուտիքի մաս համարում, երբ այն 1000—1500 տարի Ուտիքի «երեսը» չի տեսել), իսկ մյուս կողմից, Սողքի «սեփականությունը» համարում Թարթառի հովիտը, «որտեղ նշանավոր էր... Զերմուկը, որ կոչվում էր նաև «Բաղանիք արքունականք»<sup>117</sup>:

«Աշխարհացույցի» նոր հրատարակության մեջ, ընդհանուր ցանկում<sup>118</sup>, չկա նաև Զավե (Զավդեք, Ծավդեք) գավառը, թեև այն հպանցիկ, որպես Արցախի գավառ, հիշվում է Ս. Երեմյանի մոտ<sup>119</sup>: Եթե առաջին դեպքում ուսումնասիրողները պարզապես չեն գտել բուն Սիսականի տեղը, այն շփոթելով Մյուս կամ Փոքր Հաբանդ կոչված Փոքր Սյունիքի հետ, ապա Ծավդեքի դուրս թողնելու պատճառն ըստ էության նրա անհիմն նույնացումն էր Սողքի հետ:

Այսպիսով, 12 գավառների վերոհիշյալ ցանկում 10-րդը պետք է լինի Սիսական Ոստանը, 11-րդը՝ Քուստիփառները: Ինչ վերաբերում է Ծավդեքին, ապա այն ներգրավված է ոչ հիմնական գավառների թվում և, ինչպես կտեսնենք, Մեծկողմանք գավառի մաս էր կազմում:

**ՄՅՈՒՍ ՀԱՌԱՆՎ.**— Արցախի նշանավոր գավառներից է, ընդգրկում է ավելի քան 2200 կմ<sup>2</sup> տարածություն: Առաջին անգամ հիշատակում են Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին: Ղ. Ալիշանը տեղադրում է Ամարասի մոտակայքում, ինչպես նաև՝ Կարկառի հովտում, նրա աջ ու ձախ ափերին, հյուսիսային սահման համարելով Ծուշին<sup>120</sup>:

Բ. Ոլուրաբյանը մի դեպքում գավառի սահմանները հասցնում է

<sup>116</sup> Բ. Ոլուրաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 36:

<sup>117</sup> Բ. Ոլուրաբյան, Արցախի պատմությունը, էջ 11:

<sup>118</sup> Ս. Շիրակացի, Մատենագրություն, էջ 291:

<sup>119</sup> Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 52:

<sup>120</sup> Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 92—106:

Կարկառից Դիզափայտ և Քիրսից մինչև Մուղանի արևմտյան եզերքը<sup>121</sup>, իսկ մի այլ դեպքում՝ նրա մեջ է ներառում Մարտունու, Հաղորոթի և մասամբ Ասկերանի շրջանների տարածքները, գավառի նշանավոր կետեր համարելով Ամարասն ու Գոշավանքը, Գորոզ բերդը<sup>122</sup>: Ս. Երեմյանը Մյուս Հաբանդը համարում է Արցախի կենտրոնական գավառը՝ 2550 կմ<sup>2</sup> տարածությամբ, սահմանների մեջ ներառելով «հետագա Դիզակի և Վարանդայի շրջանների տերիտորիան»<sup>123</sup>: Նշված բոլոր տեղադրությունները մոտավոր են: Իսկ ահա Մ. Բարխուտարյանցի տեղադրությունը ստույգ է. «Գավառն, որ ընկած է Ղուրուչայի ձախ և Կարկառ գետակի աջ ափերի, Դիզափայտ և Քիրս լեռնաշղթայի գագաթնագծի և դաշտաբերանի մեջ, ստացած է Մյուս Հաբանդ կամ Հաբանդ-Ամարաս անունները»<sup>124</sup>:

Գոշավանքն ու Գորոզ բերդը Ղուրուչայի (Իշխանագետ) աջ կողմում են, հետևաբար Մյուս Հաբանդի մեջ չէին կարող մտնել: Բացի այդ, «Արցախի պատմությունը» գրքի 44-րդ էջից տեղեկանում ենք, որ արաբ զորավար Բուղան 28 անգամ հարձակվել է Գոտիչ ամրոցի վրա, իսկ հետո պարզվում է, որ արաբները բախվել են Գորոզ բերդին<sup>125</sup>: Ընդ որում, Գոտիչը սխալմամբ տեղադրվում է Տող և Տումի գյուղերի թիկունքում, իսկ մի այլ դեպքում՝ այդ գյուղերի արանքում<sup>126</sup>: Այնուհետև, Գոտիչ և Գորոզ ամրոցները նույնացվում են<sup>127</sup>: Իրականում, Գոտիչ կամ Տող բերդը գտնվում է Գոշավանքի թիկունքին, իսկ Գորոզը՝ Տումի գյուղից արևմուտք<sup>128</sup>:

Եվս մի նկատառում. Ինչպես արդեն նշվեց, «Աշխարհացույցի» նոր հրատարակության մեջ Արցախի Սիսական գավառը դուրս էր թողնել: Թյուրիմացության հիմքն ըստ էության Սիսականի Կոտակ (Սիսական, Սիսականի Ոստան, նաև Փոքր Սյունիք) և Մյուս Հաբանդ (Փոքր Հաբանդ, Փոքր Սյունիք) գավառների անվանումների նույնականությունն է, որը տեղ է գտել ոչ միայն «Աշխարհացույցի» նոր հրա-

<sup>121</sup> Բ. Ոլուրաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 31:

<sup>122</sup> Բ. Ոլուրաբյան, Արցախի պատմությունը, էջ 10:

<sup>123</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ. էջ 70:

<sup>124</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 23:

<sup>125</sup> Մ. Ոլուրաբյան, Արցախի պատմությունը, էջ 44:

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 134:

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 46, 134, 141:

<sup>128</sup> Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 90, 99:

տարակույթունում<sup>129</sup>, այլև մի շարք ուսումնասիրողների մոտ<sup>130</sup>: «Աշխարհացույցի» մասնագետ Ս. Երեմյանը գրում է. «Մյուս Հաբանդ (Սիսական-ի-Ռատան, Սիսական-ի-Կոտակ)... 571 թ. երբ ամբողջ Արցախը միացվեց Այունիքին և Մյուս Հաբանդը դարձավ Մյունյաց նախարարության կենտրոն, այս գավառը կոչվում է նաև Սիսական-ի-Ռատան կամ Սիսական-ի-Կոտակ: Վերջինս հոմանիշ է Փոքր Մյունիք անվան»<sup>131</sup>:

Այստեղ անհասկանալին ու տարօրինակը ոչ թե Արցախի (իրականում նրա հարավային հատվածի) միացումն է Մյունիքին, այլև այն, թե ինչպես Մյուս Հաբանդը դարձավ Սիսական-ի-Ռատան կամ Սիսական-ի-Կոտակ, երբ դրանք առանձին տեղեր զբաղեցնող վարչական միավորներ էին: Բազմաթիվ հավաստի վավերագրեր (հատկապես վիմական արձանագրություններ) ճշտորոշում են Սիսական (Սիսականի Ռատան, Սիսականի Կոտակ) գավառի ճիշտ տեղը, բացահայտում ոչ միայն երկու գավառների նույնացման անհիմնավորությունը, այլև «Աշխարհացույցի» վերակազմության մեջ տեղ գտած վրիպումները: Այսպես, 830-ական թվականների դեպքերի առիթով տեղեկացվում է, որ Բաբանից ապստամբվածները ամրացան Գորոզ բերդում և տասներկու տարի տիրեցին Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ-Ամարաս, Պազկանք, Միսանք և Տրի գավառներին<sup>132</sup>:

Սիսականի՝ որպես առանձին գավառի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Մ. Չամչյանը. «Սիսական գավառ, որ էր առանձին նախարարություն Սիսականաց՝ Արցախ աշխարհի՝ առ սահմանոք Սիւնեաց»<sup>133</sup>: Եվս մի օրինակ. «...զի են և Փոքր Սիւնիք՝ առանձնակ աշխարհ, որոյ և գլխաւոր գաւառն կոչի Սիսական, արտաքոյ սեփական Սիսականիս մերոյ, մասն Արցախոյ, սակաւ ինչ և սորին իսկ, յոլորսս ծովուն Գեղամա»<sup>134</sup>:

<sup>129</sup> Ա. Ծիրակացի, Մատենագրություն, էջ 290—291, 295:

<sup>130</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 257, Ս. Ռումուչյան, Սյունիքը դիցարան, էջ 60 և այլն:

<sup>131</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ. 70:

<sup>132</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 256: Ծանոթագրություններում (էջ 291) Վ. Առաքելյանը Սիսականը նույնացնում է Մյունիքի Ծղուկ գավառի հետ, Հաբանդ-Ամարասը՝ Դիզակի, Պազկանքը՝ Վարանդայի հետ, իսկ Տրին համարում է Արցախի գավառ, որոնք հետո են ճշմարտությունից:

<sup>133</sup> Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, Գ, Երևան, 1984, հատուկ անունների ցանկ, էջ 184:

<sup>134</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վեներտիկ, 1893, էջ 532:

Այս վկայություններն հուշում են, որ Սիսականը կապ չունի ոչ միայն Մյուս Հաբանդի հետ, այլև հանդիսանում է որպես Մյունիքից անջատ, նրա կողքին գտնվող առանձին վարչական միավոր:

Որ Սիսական Ռատանը Մյուս Հաբանդը չէ, վկայում է նաև «Աշխարհացույցը»: Մի կողմ թողնելով նոր հրատարակության մեջ արված «շտկումները», նշենք, որ «Աշխարհացույցի» հին հրատարակությունների մեջ հիշյալ գավառը, որ հանդես է գալիս նաև Սիսական, Հսոխասկան<sup>135</sup>, գՍիսականիս գՎոտակ<sup>136</sup> անուններով, Արցախի 12 գավառների ցանկում ըստ հերթականության տասներորդն է, ի տարբերություն առաջին տեղում գտնվող Մյուս Հաբանդի: Եթե նշված գավառները ցանկերում (այն էլ վեց տեղ) ունեն տարբեր անուններ և հակադիր տեղեր են զբաղեցնում (12 գավառների ցանկերում), կարելի՞ է արդյոք դրանք շփոթել իրար և նույնացնել:

Աղբյուրների պատմա-համեմատական ուսումնասիրությունից հանգել են այն հետևության, որ «Աշխարհացույցի» Սիսական (Սիսականի Ռատան, Սիսականի Կոտակ) գավառը գտնվում է ոչ թե Մյուս Հաբանդի տեղում կամ նրա մոտակայքում, Կարկառի վրա<sup>137</sup>, կամ Արաքսի ափին<sup>138</sup>, այլև այժմյան Քարվաճառի արևմտյան և հարավ-արևմտյան (հիմնականում Ծարը շրջակայքով) և Սևանա լճի արևելյան տարածքներում (Սողքը՝ հարակից տարածքներով):

Սիսականի Ռատան, Սիսականի Կոտակ անվանումներն իրոք վկայում են Մյունիք նահանգի սահմաններից դուրս, առանձնացված տեղում եղած Ռատանի մասին (դա պարզվում է նաև նշված փաստաթղթերով), որը «հուշում է, որ այդտեղ վաղնջական ժամանակներից Սիսական իշխանների կողմից պետք է հիմնադրված լինի մի հզոր քաղաք կամ դղյակ»<sup>139</sup>:

Սեդրակ Բարխուդարյանը իրավացիորեն գտնում է, որ Ծարը միացած է եղել Սողքին<sup>140</sup>, բայց տարակուսելի է հիմնադրվածը, թե ամ-

<sup>135</sup> Մովսեսի Խորենացու Մատենագրությունը, Վեներտիկ, 1865, էջ 606—609:

<sup>136</sup> Աշխարհացույց Մովսեսի Խորենացու, Վեներտիկ, 1881, էջ 33, Ա. Արքաբանյան, Ծիրակացու մատենագրությունը, էջ 348, 350:

<sup>137</sup> Տե՛ս Բ. Ուլուբաբյանի քարտեզները «Դրվագներում» և «Արցախի պատմությունը» գրքի մեջ:

<sup>138</sup> Տվյալ ժամանակաշրջանի իրավիճակը ներկայացնող պատմական բոլոր քարտեզներում:

<sup>139</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 47:

<sup>140</sup> Դիվան հայ վիմագրության, V Երևան, 1982, էջ 217:



բողջ Վայկունիքը միջին դարերում Սյունիքի մաս է կազմել<sup>141</sup>: Վայկունիքի՝ պատմական Սյունիքի մաս չկազմելը հաստատվում է ոչ միայն նույն Օրբելյանի տվյալներով<sup>142</sup>, այլև այլ բազմաթիվ՝ հատկապես վիմական արձանագրություններով: Դեռ ավելին, բազմաթիվ հավաստի վավերագրերով ապացուցվում է, որ Սողթն իր շրջակայքով երբեմն մտել է Արցախի կազմի մեջ:

Մ. Կաղանկատվացին գրում է, որ Արցախի Սահլ իշխանը՝ Հայկի տոհմից, Սյունիքի տերն էր և գրավել էր Գեղամա գավառը<sup>143</sup>:

Պարզ է, որ այստեղ Սահլը տերն էր ոչ թե «Փոքր Սյունիք» կոչված Արցախի կամ Խաչենի, ինչպես կարծում է Բ. Ուլուբաբյանը<sup>144</sup>, այլ նշված Սիսականի կամ Սիսական Ոստանի, որն, ինչպես ասվեց, միջնադարում նաև Փոքր Սյունիք էր կոչվում:

Սահլ Սմբատյանի կողմից Սողթի և նրա շրջակայքի գրավումը այլ նպատակներից բացի (օրինակ, տիրելու դեպի Փառխոս տանող ամենահարմար ճանապարհը) վկայում է այդ հողերի նկատմամբ Արցախի իշխանների ունեցած հավակնությունների մասին (եթե նկատի ունենանք, որ այն Արցախի նշված տարածքի հետ մի ամբողջություն է կազմել): Սահլի թոռ Գրիգոր Ատրներսեհյանը ևս (Մեծ Մասրիկ գյուղի խաչքարի 881 թ. արձանագրության մեջ) հանդես է գալիս որպես Սյունյաց ու Աղվանից իշխան<sup>145</sup>: Թարգմանչաց վանքի 1232 թ. ավետարանում Գրիգոր Մեծ իշխանը տերն էր «Փոքր Սյունյաց, Հանդաբերդ, Ականա և բարձր ծովակին Գեղամա, Սոթից մինչև Ծաղուագայ»<sup>146</sup>: 1430 թ. արձանագրությամբ Ծանկեի որդի Սայտին էլ է հանդես գալիս իր նախնիների ավանդական տիրողոսով՝ «Տեղեացս տէր և

<sup>141</sup> Արցախի, Ծաքիի և Փառխոսի իշխանությունները IX—X դդ, ՊԲՀ, 1971, № 1, էջ 73:

<sup>142</sup> Սո. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 263:

<sup>143</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ. էջ 266:

<sup>144</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 71:

<sup>145</sup> Գիվան հայ վիմագրության, IV, Երևան, 1973, էջ 334: Հայտնի է նաև, որ IX—X դարերում Գեղարքունիքում և Սողթում տիրապետում էր Սյունյաց նախարարության Փոքր գյուղի իշխանական տոհմը, որն աստնձնապես հզորացավ Մարիամ Բագրատունու և նրա որդիների իշխանապետության ընթացքում, առանձնապես երբ Կոթ բաղաբազույրը Գրիգոր Սուփան II-ի ժամանակ դարձավ վարչական կենտրոն: Այնուհետև այս գավառները մտել են Բագրատունյաց թագավորության կազմի մեջ, իսկ XII դարի վերջերից հետո տիրապետել են Օրբելյան և Պողոսյան նախարարական տները, ու շրջնադարում (XV—XVII դդ.)՝ Ծահնագարյանները:

<sup>146</sup> Մ. Բարխուտարյան, Արցախ, էջ 290:

պարոն Փոքր Սիսեաց, Ականա, Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչ ի Ծաղուագայ»<sup>147</sup>:

Վկայություններ կան նաև Ա. Դավրիժեցու «Պատմության» մեջ, որտեղ պատմիչը գրում է. «Սույն թվին (1588 թ.) վախճանվեց մեր մեծ ու երանաշնորհ վարդապետ Հովհաննեսը, որ Փոքր Սյունիք կոչված Ծար գավառից էր, սուրբ Առաքյալ Թադեի վանքից. Դոփի և Հասանի տոհմից որդին էր Զհանշահ կոչված մի ազնվական և բարի մարդու: ...Նրա պատվական մարմինը թաղված է Գեղամա երկրի Վասակաշեն (այժմ Վարդենիս—Ս. Ս.) գյուղում, Սարգիս Վարդապետի գերեզմանի մոտ»<sup>148</sup>: Այս տեղեկությունը մեկ անգամ ևս հավաստում է Փոքր Սյունիքի (Սիսականի կոտակ) իսկական տեղը:

Քննելով երկու Հաբանդների (Սյունյաց և Արցախի) աղոտ պատմությունը, հանգել եմ այն համոզման, որ IV դ. վերջերին, Ծավդեացվոց իշխանության վերացումից հետո, նրա տարածքների մի մասի վրա ձևավորվում է նշված Սիսական առանձին վարչական միավորը՝ իր մեջ ներառելով ոչ միայն Արցախի հարավային (Կարկառից Երասխ) և հարավ-արևմտյան գավառները, այլև Սյունիքի՝ Արցախին սահմանամերձ տարածքները: Ըստ էության, նշված Սիսական Ոստանն էլ դառնում է այդ կազմավորման իշխանակետը: Այդ վարչական առանձին կազմավորումը, որի ստեղծման մասին աղբյուրներում ստույգ տեղեկություններ չկան, ձևավորվել է ոչ թե 555 կամ 571 թթ. (տես Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 250), ինչպես ընդունված է պատմագիտության մեջ<sup>149</sup>, այլ ավելի վաղ, հնարավոր է 387 թ. Հայաստանի բաժանումից հետո, երբ նման միջամտությունները չէին բացառվում, կամ, գուցե, Պապի թագավորության ժամանակ, երբ նման միջոցառումները կարելի էր հակադրելու տեղական իշխանությունների կենտրոնախույս ձգտումներին: Երևի թե դրա արդյունքն է Հաբանդ անվամբ երկու գավառների առկայությունը: Դրա վկայությունն է նաև Մ. Խորենացու «Փոքր Սյունիք»<sup>150</sup>-ը, որն առաջին անգամ շրջանառության մեջ

<sup>147</sup> Նույն տեղում, էջ 408:

<sup>148</sup> Ա. Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 477:

<sup>149</sup> 571-ը (որի մասին նշում է նաև Ս. Երեմյանը) մեկ այլ պատմություն է, երբ Սասանյան Պարսկաստանի դեմ ապստամբական շարժմանը չմասնակցելու համար Սյունիքի Վահան իշխանը Սյունիքն անջատեց Հայաստանից, որին միացվեց նաև սահմանակից Արցախի մի մասը: Այդ անջատված վիճակը տևեց գրեթե 70 տարի (571—640 թթ.)— Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 256—257:

<sup>150</sup> Մ. Խորենացի, Հայոց պատմություն, էջ 167:

դնելով, պատմահայրը, փաստորեն, վերապատմել է Գրիգորիս Եպիսկոպոսի սպանության և թաղման եղերեթության մասին Փավստոս Բուզանդի հաղորդումը<sup>151</sup>, վերջինիս ակնարկած Հաբանդը փոխարինելով Փոքր Սյունիքով:

Սակայն, ըստ էության, նորաստեղծ այդ վարչական միավորը երկար չի գոյատևում, քանի որ Արշակունյաց թագավորության վերացումից հետո, Արցախը (թեև ոչ անմիջապես) կցվում է Աղվանից մարզպանությանը՝ հանգեցնելով նախկին վարչական համակարգի վերացմանը, Սյունիքի հետ ունեցած նախկին սահմանների վերականգնմանը: Փոքր Սյունիք կոչված երկրամասից Արցախում մնում է միայն նրա անունը հավաստող մի փոքրիկ գավառ՝ այն էլ հին Վայկունիքի տարածքում, որն «Աշխարհացուցում» ներկայանում է որպես առանձին գավառ, պահպանելով Սիսական, Սիսական Ոստան, Փոքր Սյունիք անունները: Իսկ Սողքի հատվածը մնում է Մարզպանական Հայաստանի կազմի մեջ, «Աշխարհացուցում» նշահարվելով որպես Սյունիքի գավառ:

Մյուս Հաբանդը՝ հարակից տարածքներով կարճ ժամանակով է միայն անջատվել Արցախից, հետևաբար, երկմտելի է այն տեսակետը<sup>152</sup>, թե այդ գավառը միացվել է Սյունիքին և Ծավղեք-Արցախի մեջ չի մտել:

**ՎԱՅԿՈՒՆԻՔ.**— Այս գավառի անվան ծագման մասին հիշատակություններ կան մասնավորապես Մ. Խորենացու մոտ: Տիգրան Մեծը միջագետքից «անմիջապես դիմում է Պաղեստինացոց աշխարհը (Հրեաստանը— Ս. Ս.) Պողոնյան Կղեպատրայից վրեժ առնելու՝ նրա Դիոնիս որդու գործած հանցանքի համար իր հոր (Արտաշեսի) դեմ: ...Հրեաների Աղեքսանդրիա կամ Մեսադիմա թագուհին... մի գանձ տալով (Տիգրանին) այնտեղից հետ դարձրեց: Որովհետև (Տիգրանը) լսել էր, թե Վայկուն անունով մի ելուզակ վրդովում է Հայոց աշխարհը, գրավելով այն Ամուր լեռը, որ մինչև այսօր էլ այդ ելուզակի անունով կոչվում է Վայկունիք»<sup>153</sup>: Ըստ Ապպիանոսի, Սալլուստիոսի և Մենանդի, այդ ելուզակը հոռոմեական զորավար Լուկուլլոսն է եղել, որը այդպես էր կոչվում Հայաստանի վրա հանկարծակի, գաղտուկ ու գողա-

<sup>151</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 25—27:

<sup>152</sup> ՊԲՀ, 1995, № 1, էջ 206:

<sup>153</sup> Մ. Խորենացի, Հայոց պատմություն, էջ 83: Նախօրինակում (Տիփիս, 1913, էջ 129) Ամուրը մեծատառով է, իբրև հատուկ անուն: Այն հետագայում խեղաթուրվել-դարձվել է Օմար (Ամուր-Օմուր-Օմար): Հանգամանորեն տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» № 90, 1994, մայիսի 13, առաջին էջ):

բարո հարձակման պատճառով, վրդովելով հայոց երկրի խաղաղությունը և հարկադրելով Տիգրանին վերադառնալու Հայաստան (մ. թ. ա. 69 թ.)<sup>154</sup>:

Ղ. Ալիշանը Վայկունիքը տեղադրում է այն սահմանների մեջ, որտեղ ներկայիս Քարվաճառն է՝ սակայն առանց սահմանազատելու այնտեղ գտնվող Սիսական Ոստանը<sup>155</sup>: Իսկ ըստ Բ. Ուլուբաբյանի, Վայկունիքը տարածվում էր «Թարթառ գետի վերին ավազանի այն մասում, ուր Դադիվանքն է՝ այժմյան Քելբաջարի կամ Քարվաճառի շրջանի հյուսիս-արևելյան հատվածում և Խաթրավանք, Վաղուհաս, Չափար և հարևան գյուղերը Մարտակերտի շրջանի հյուսիս-արևմտյան լեռնաստանում»<sup>156</sup>: Այդ դեպքում հարց է ծագում. եթե Վայկունիքի զբաղեցրած տարածքը դա է, որտե՞ղ են Վայկունիքի լեռները, որտե՞ղից, ըստ Ուլուբաբյանի, սկիզբ է առնում Կարկառ գետը<sup>157</sup>: Տեղադրությունն անստույգ է, քանի որ այդ վայրում, սկսած ներկայիս Յանշաղ բնակավայրից, որտեղից սկիզբ է առնում Թարթառի այժմյան Մելդան վտակը, մինչև Թրդի (ներառյալ Հաթերքը) տարածվում է «Աշխարհացուցում» հիշատակվող Մեծկողմանքի Ռոստակ գավառը<sup>158</sup>, որի մասին ստույգ տեղեկություններ է հաղորդում նաև Աղվանից պատմիչը, երբ երկու եպիսկոպոսներ «գալիս են Մեծ կողմանքի Ռոստակ գավառը», այնտեղից անցնում Չղախյան հովիտը՝ Տրտու գետի ափին<sup>159</sup>:

Տեղադրությունն անորոշ է նաև «Խաչենի իշխանությունը X—XVI դդ» գրքում, որտեղ ուսումնասիրողը Վայկունիքը հարավից սահմանակցում է «Վայոց ձորին՝ Ջերմուկի մոտերքում», իսկ հյուսի-

<sup>154</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, Ա, էջ 188—189:

<sup>155</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 15:

<sup>156</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 10:

<sup>157</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 11: Ըստ Ուլուբաբյանի, Կարկառը սկիզբ է առնում Վայկունիքի և Բերդաձորի լեռներից, Թարթառը՝ Սևանի արևելյան ափի լեռնային ջրագույացումներից, Խաչենագետը՝ Սևանի արևելյան ափի Վայկունիքի սարավանդներից (բոլորն էլ անիրական են):

<sup>158</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 24, Մտ. Կանայեանց, Աշխ. աշխ. էջ 128: Ղ. Ալիշանը Ռոստակը տեղադրում է Թարթառ և Ինջա գետերի միջև (Տե՛ս Ղ. Ալիշան, Արցախ, էջ 37):

<sup>159</sup> Մ. Կաղանկատվացի, Աշխ. աշխ., էջ 160: Ծանոթագրություններում (էջ 285), Վ. Առաքելյանը Ռոստակը սխալմամբ նույնացնում է Ռոտի առանձնակ գավառի հետ:

սից՝ Ծամբոր և Կուրակ գետակների ակունքներին<sup>160</sup>: Նույն սխալ տեղադրությունն է տրված նաև Հայաստանի հանրագիտարանում<sup>161</sup> և տեղանունների բառարանում<sup>162</sup>, ուր նշված երկու գետակների ակունքները դիտվել են ավազաններ, փաստորեն այդ գավառի մեջ ներառելով երբեմնի Գարդմանցոց իշխանության մի մասը:

Սխալ է նաև այս տարածաշրջանի Ականա և Հավթախաղաց ամրոցների տեղադրությունը: Ղ. Ալիշանը, ենթադրաբար, Ականան փնտրում է Հանդաբերդի և Գեղամա ծովի մոտերքում<sup>163</sup>, Բ. Ուլուբաբյանը՝ «Վերին Խաչենի տարածքում»... հին Վալկունիքի կամ այս ժամանակների Ծարի արևելյան մասում<sup>164</sup>: Նույն վրիպյալ տեղեկատվությունն է նաև տեղանունների բառարանում<sup>165</sup>: Բայց չէ՞ որ Ականան ներկայիս Ումուդլու գյուղի մոտ գտնվող ամրոցն է (որը հայտնի է գրեթե ցանկացած տեղացու), որը գտնվում է «Հաթերքի հյուսիս-արևելյան կողմում, Բալի սարի ստորոտում»<sup>166</sup>: XV դ.՝ Սալտիի վերոհիշյալ արձանագրությունից ևս ակնառու է ամրոցի տեղը. «Ես Սալտի... Տեր և պարոն Փոքր Սիւնեաց, Ականա և Հաթերքոյ»:

Կ. Գանձակեցու մոտ նույնպես Ականան Խաչենում է, Ջուրբերդի մոտ, Թարթառի հովտում<sup>167</sup>: Ամենայն Հայոց Կաթողիկոս Փիլիպպոսի Հայրապետական մի կոնդակում (XVII դ.) Ականան հիշվում է Հաթերք, Ծանկաթաղ, Գյուլաթաղ, Մոխրաթաղ և այլ գյուղերի շարքում<sup>168</sup>: Նըշենք նաև, որ մինչև գրեթե վերջերս, Ումուդլու գյուղը Արխանա էր կոչվում<sup>169</sup>, որը Ականայի աղավաղումն է, իսկ արխը (թուրքերեն) և ակը նույն իմաստն ունեն:

Ծիշտ չի տեղադրվում նաև Հավթախաղաց ամրոցը: Բ. Ուլուբաբյանը չընդունելով Մ. Բարխուտարյանցի տեղադրությունը (Դադի վանքի դիմաց, Թարթառի աջ ափին)<sup>170</sup>, Հավթախաղացը տեղադրում է Ծա-

րում<sup>171</sup>, մերթ ևուրեղ նույնացնում Ներքին Խաչենի Կաչաղակաբերդ ամրոցի հետ<sup>172</sup>: Նկարագրելով մոնղոլների նվաճումները, քաջագիտակ պատմաբանը գրում է, որ ներքին խաչենցիները ամրացել էին երկու անոնիկ բերդերում՝ Հավթախաղացում ու Խոխանաբերդում: Բայց սկզբնաղբյուր Կ. Գանձակեցին հայտնում է, որ «...շատերը ամրացել են ապահով վայրերում, որոնց տեղի անմատչելիության պատճառով հավթախաղաց էին կոչում»<sup>173</sup>: Այսպիսով, պատմիչի խոսքը Հավթախաղաց անվամբ ամրոցի մասին չէ, այլ այն մասին, որ Արցախում դժվարամատչելի և բարձրադիր առանձին ամրոցներ իրենց հիմնական անունները ունենալուց բացի, հաճախ կոչվում էին հավթախաղացներ: Օրինակ Կաչաղակաբերդը միաժամանակ կոչվում էր Մխատան Հավթախաղաց<sup>174</sup>: Հավթախաղացներ կան նաև Թարթառի հովտում և Հադրութի շրջանում: Եվս մի թյուրիմացություն. Ս. Բարխուտարյանը Հավթախաղացը Թարթառի հովտից տեղափոխում է Լաչինի շրջան<sup>175</sup>:

Ս. Երեմյանը Վալկունիքը տեղադրում է Ծար ավանի մոտ<sup>176</sup>, իսկ Մ. Բարխուտարյանցը՝ «Հարճանք և Ծար գավառի սահմանների մեջ»<sup>177</sup>, այսինքն ներկայիս հյուսիսային Լաչինում, որի մի մասն է սակայն Վալկունիքի մեջ մտել: Իսկ Ս. Երեմյանի տեղադրությունը վերա-

<sup>171</sup> ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 120: Սխալը կրկնված է նաև Տեղանունների բառարանում (հ. 2, էջ 845):

<sup>172</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 136: Ղ. Ալիշանը, Գր. Տեր-Հովհաննիսյանը նույնպես Կաչաղակաբերդը շփոթում են Թարթառի Հավթախաղացի հետ, վերջինիս տվյալները վերագրում Կաչաղակաբերդին (տե՛ս Ղ. Ալիշան, Արցախ, էջ 79, Գ. Տեր-Հովհաննիսյանց, Բաղդասար Մետրոպոլիտ Հասան Զալալյանցի համատու կենսագրություն, փորձ, 1880, № 5, էջ 135):

<sup>173</sup> Կ. Գանձակեցի, նշվ. աշխ. էջ 192:

<sup>174</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժգ, Երևան, 1984, էջ 199:

<sup>175</sup> Ս. Բարխուտարյան, նշվ. հոդվածը.— ՊԲՀ, 1971, № 1, էջ 73: Ի՞նչն է այս-

տեղ տարակուսելին: Մեր ժամանակների ուսումնասիրողները, թվում է, տարված լինելով հայտնություններ անելու մոլուցքով, աշխատում են ամեն կերպ ցուցադրել իրենց ստավելությունը մյուսների նկատմամբ: Հոգ չէ, թե ուղեկոչվում է պատմական ճշմարտությունը: Այլապես ինչո՞ւ է, օրինակ, անտեսվում Մ. Բարխուտարյանցը, որը XIX դարի վերջերին, ոտքով, ձիով շրջագալել է գրեթե ողջ Առդրկովկասը, մեկ առ մեկ գրի առել աչքով տեսածը, ունկնդրել տեղացիներին, մատնանշել կապը, մեկ առ մեկ գրի առել աչքով տեսածը, ունկնդրել տեղացիներին, մատնանշել բնակավայրերի, ամրոցների ճիշտ տեղը: Ոչ ոք անվերապահ չի ընդունում այս կամ այն ուսումնասիրողի կարծիքը, ստավելապես և սխալը, բայց եթե ժխտվում է ինչ ոք տեսակետ, ապա պետք է որ բացահայտվի ճշմարիտը:

<sup>176</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ. էջ 82:

<sup>177</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 27

<sup>160</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 34:

<sup>161</sup> ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 120:

<sup>162</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 845:

<sup>163</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 17:

<sup>164</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 215:

<sup>165</sup> Տեղանունների բառարան, հ. 2, էջ 845:

<sup>166</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 212:

<sup>167</sup> Կ. Գանձակեցի, նշվ. աշխ. էջ 258:

<sup>168</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 48:

<sup>169</sup> Г. Кочарян, Нагорный Карабах, Баку, 1925, ст. 51.

<sup>170</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 211, 427:



բերում է Սիսականին (Սիսական Ոստան), որն, ինչպես ասվեց, զբաղեցնում էր հին Վաչկունիքի հարավ-արևմտյան և արևմտյան հատվածները՝ սկսած Թարթառի ակունքից մինչև հյուսիս՝ մերձ Սողքի սահմաններին, ներառելով գետի ձախափնայկը: Սիսականը գրեթե այդ վայրում է տեղադրում նաև Մ. Բարխուտարյանը<sup>178</sup>: Ղ. Ալիշանը Ծարը նույնացնում է այժմյան Իստիսու վայրին, փաստորեն բուն Սիսականին<sup>179</sup>, վերջինս տեղադրելով «Վաչկունիքից հարավ-արևելք», իրականում Վաչկունիքի տեղը<sup>180</sup>:

«Աշխարհացույցի» Վաչկունիքը Սիսական Ոստանի արևելյան կողմում է, Թարթառի աջ ափին, նրա գլխավոր Թուրխու վտակի լեռնային բազուկներով անջրպետված հատվածում, հյուսիսային սահման ունենալով նույն Թարթառ (Տրտու) գետը, որից հյուսիս և հյուսիս-արևելք Մեծկողմանք գավառն է: Արևելյան սահմանը Ղարաբաղյան լեռնաշղթան է, որից այն կողմ՝ Մեծառանք գավառը: Արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից Վաչկունիքը սահմանակցվում է Սիսական Ոստանին, հարավային կողմից՝ Հարճյանք գավառին:

Գուշավանքի XIII դարի մի արձանագրության մեջ, նշված վանքին պատկանող հողատարածությունները ձգվում էին նաև Վաչկունիս-Վաղազնագետով<sup>181</sup>: Վաղազնագետը Լաչինի շրջանի հյուսիսային կողմում է, որտեղ Վաղազին գոյում է, որից հյուսիս, Քարվաճառի շրջանի հարավ-արևելյան կողմում՝ Վաչկունիս-Վաչկունիքի ստորին տարածքներն են:

Նշված սահմաններում Վաչկունիքի զբաղեցրած մակերեսը կազմում է մոտ 800 կմ<sup>2</sup>:

Միջնադարում Վաչկունիքը կոչվել է նաև Վերին Վաչկունիք<sup>182</sup>: Կարծում են ոչ թե ի տարբերություն Վաչոց ձորի (իբրև ներքին Վաչկունիք, որտեղից Վաչկունիքը այնքան էլ մոտ չէ), ինչպես գտնում է Ղ. Ալիշանը<sup>183</sup>, այլ որ ավելի հավանական է, այն պատճառով, որ Վաչկունիքի ստորին՝ հարավ-արևմտյան մասը զբաղեցնում էր Սիսական (Սիսական Ոստան), հետագայի Ծար գավառը: Ի դեպ, գրեթե բոլոր ուսումնասիրողները չեն զանազանում հատկապես Վաչկունիքն ու Ծարը՝ դրանք նույնացնելով: Իրողությունը, կարծում են, հետևյալն է. Կար հին Վաչկունիք մեծ գավառը, որը զբաղեցնում էր ներկայիս Քարվաճառի շրջանը: Նրա հարավ-արևմտյան մասում IV դ. երկրորդ կեսին ձևավորվում է Սիսական Ոստանը, որը Սողքի հետ մի ամբողջություն էր կազմում: X դարից հետո այս Սիսական Ոստանը ստանում է Ծար անունը: Այնպես-որ, եթե ըստ «Աշխարհացույցի» ենք մոտենում խրճորին, ապա պետք է ընդունել որ Ծար (նախկին Սիսական Ոստան) և Վաչկունիք գավառները նույնը չեն: Հետևաբար, «Ծար գավառը ոմանք նույնացնում են... Արցախի Սիսական կամ Սիսական Ոստան գավառի հետ»<sup>184</sup> ոչ թե Ծարի իշխանության սահմանների փոփոխականության պատճառով, ինչպես կարծում են մեր բառարանագետները, այլ այն պատճառով, որ Ծարը նույն Սիսական Ոստանն է: Հետևաբար, սխալ է նաև, երբ գրում են, որ Ծարը XV դարից է իշխանանիստ<sup>185</sup>: Զարմանալի է, մի կողմից վկայակոչում են Գրիգոր Մագիստրոսին (XI դ.), որը խոսում է այդ «թագավորական քաղաքի» մասին<sup>186</sup>, իսկ հետո իշխանանիստ համարում XV դարից: Իրականում, Սիսական-Ծարը առնվազն IV դարից, երբ ձևավորվել էր այդ Ոստանը, իշխանանիստ էր:

**ՀԱՐՃԼԱՆՔ.** — Կոչվում է նաև Հարճյանք և Հաջլեանք<sup>187</sup>: Այս գավառի մասին քերն են խոսում և կարծես թե անորոշ է նրա տեղը: Բ. Ուլուբաբյանը Հարճյանքի մասին հիշում է միայն իր կազմած սխեմատիկ քարտեզում (տեղադրված «Դրվագներում» և «Արցախի պատմության» մեջ)՝ տեղակայելով Մարտունու, Հադրութի և Կուրաթլուի տարածքների վրա: Ս. Երեմյանը Հարճյանքը տեղադրում է Քյոնդալանչայ կոչվող գետի հարավային եզրի տարածության մեջ<sup>188</sup>, որը նույնպես սխալ է: Հիշենք, որ նա այդ տարածքն արդեն մոտցրել էր Մյուս Հաբանդի մեջ<sup>189</sup>:

Իմ կարծիքով գավառի ճիշտ տեղադրությունը նշել է Մ. Բարխուտարյանը՝ Հարճյանքը տարածելով Ծուշի-Գորիս ճանապարհի և Հակարի գետի միջև, ուր գտնվում է Հանիլար կամ Հանի Սամլու գյու-

<sup>178</sup> Նույն տեղում:

<sup>179</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 19:

<sup>180</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>181</sup> Դիվան, V, էջ 183:

<sup>182</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ. էջ 256:

<sup>183</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 50:

<sup>184</sup> Տեղանունների բառարան, հ. 2, էջ 845:

<sup>185</sup> Նույն տեղում:

<sup>186</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրոպոլ, 1910, էջ 221, Հմմտ.

Ղ. Ալիշան, Արցախ, էջ 19—20, Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ. էջ 278:

<sup>187</sup> Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ. էջ 305:

<sup>188</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ. էջ 62:

<sup>189</sup> Նույն տեղում, էջ 70:

ղը<sup>190</sup>: Վերջինս Լաչինի շրջանի հյուսիսակողմում է, Հակարիի ձախ ափին: Ուրեմն Հարճլանքը (Հաջլեանք) գրադեցնում է Լաչին ավանից հյուսիս, Հակարի (Աղվանո) գետից ձախ ընկած հողերն ու Կարկառի ակունքից (որտեղ Ջառխտն է) մինչև Հակարի՝ աջակողմյան եզերքը: Հյուսիսային կողմից սահմանակից է Վաչկունիքին (նրա հարավահայաց լեռներով), արևմուտքից՝ Սյունիք նահանգին, սահման ունենալով Հակարի-Աղվանոն, հարավից՝ Բերդաձոր գավառին, արևելքից՝ Ղարաբաղյան լեռնաշղթային, որից այն կողմ Մեծադանքն է:

Այսպիսով, Լաչինի շրջանի մոտ 60 տոկոսը մտնում էր Հարճլանքի մեջ: Հետևաբար սխալ է Սյունիքի Աղահեճ գավառը (իսկ վերջերս՝ Քաշաթաղը) նույնացնել Լաչինի շրջանին<sup>191</sup>: Արցախում ոչ Քաշաթաղ կար, ոչ էլ Խոժոռաբերդ: Սահմանը Սյունիքի հետ անցնում էր ինչպես սավեց «Ի Ադուանոյ գետո մինչ ի Երասխն»<sup>192</sup>: Ուրեմն, ներկայիս Լաչինի շրջանին վերագրված մի շարք տեղանունների (Քաշաթաղ, Աղահեճ և այլն) հարցը պետք է վերանայել և վերականգնել պատմական ճշմարտությունը:

Սյունիքի Աղահեճը գրադեցնում էր հիմնականում Լաչինի շրջանի Հակարի գետի աջափնյա տարածքները Ծիծեռնավանքի շրջանում<sup>193</sup> և սահմանակից էր Արցախի Հարճլանք գավառին:

**ԲԵՐԴԱՋՈՐ.**— Պատմիչներից Բերդաձորի մասին հիշատակում է Մ. Կաղանկատվացին<sup>194</sup>, երբ հայ ապստամբները Եսայի իշխանի գլխավորությամբ, հարձակվելով Բաբելին փոխարինած Ռոստոմ զորավարի վրա, ջարդում են նրա բանակը և 12 տարի տիրում Արցախի մեծ մասին, այդ թվում՝ Բերձոր (Բերդաձոր) գավառին:

Մ. Բարխուտարյանցն ու Բ. Ուլուբաբյանը Բերդաձորը տեղադրում են Երասխ և Հակարի գետերի միջև, Քիրս և Դիզափայտ լեռների հարավահայաց և մինչև Սյունիքն ընկած սահմաններում<sup>195</sup>: Սակայն, 20 տարի հետո Բ. Ուլուբաբյանը այլ որոշում է կայացնում՝ գավառի սահմանները տարածելով «Ջերմուկի կողմերից մինչև Արաքսի ափը,

<sup>190</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 25:

<sup>191</sup> Ս. Երեմյան, ճշվ. աշխ. էջ 9, Մ. Բարխուտարյան, ճշվ. հոդվածը, էջ 73—74 (ՊԲՀ, 1971, № 1), «Ազգ» 8. 07. 95 թ.:

<sup>192</sup> Դիվան, V, էջ 183 (Հմմտ., «Ազատամարտ», 1993, № 40):

<sup>193</sup> Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 399 (գլուղերի ցուցակ):

<sup>194</sup> Մ. Կաղանկատվացի, ճշվ. աշխ. էջ 256:

<sup>195</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 25, Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 35, ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 420:

այժմյան Ծուշիի, Լաչինի, Կուրաթլուի շրջանները»<sup>196</sup>: Տեղանունների բառարանում<sup>197</sup> նույն տեղադրությունն է, սակայն Բերդաձորը սխալմամբ համապատասխանեցվում է Ջերբայիլի շրջանին: Հուսալի չեն նաև Ղ. Ալիշանի և Ս. Երեմյանի տեղադրությունները: Առաջինը «տեղավորում է» Մուսլ լեռան արևելյան կողմում (Ծահունյանի, Մարտակերտի հատվածում)<sup>198</sup>, երկրորդը՝ Քարվաճառի շրջանում, Բերդաձորը դարձնելով Վերին Խաչեն<sup>199</sup>:

Պատմա-աշխարհագրական քննությունը ցույց է տալիս, որ Բերդաձոր գավառի հարավային սահմանը մինչև Արաքս չի հասել, որ այն տարածվում էր մինչև Զինգիանակապ գետը, որը Հակարիի ձախակողմյան ամենամեծ վտակն է, որից այն կողմ տարածվում է Պարսկանք գավառը: Գավառը արևմտյան կողմից սահմանակից է Սյունիքին (Հակարի-Աղվանո գետով), հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմից՝ Հարճլանք գավառին, սահման ունենալով Հակարիի Հազարագետ վտակը, որի ակունքը Ջառխտ բնակավայրի մոտերքում է: Արևելյան կողմից սահմանակցվում է ներկայիս Ղարաբաղյան լեռնաշղթային (Դիզափայտ և Քիրս լեռներով): Այս սահմանների մեջ Բերդաձորի տարածքը կազմում է մոտ 450 կմ<sup>2</sup>:

**ՄԵԾԻՐԱՆՔ (ՄԵԾԱՌԱՆՔ).**— Միջին դարերում կոչվում էր նաև Ներքին Խաչեն կամ պարզապես Խաչեն<sup>200</sup>: Բ. Ուլուբաբյանը գտնում է, որ այս վերջին՝ Խաչեն անվանումը հատկապես X—XII դարերից տիրապետող է դառնում և փոխարինում էր Արցախին<sup>201</sup>: Սակայն սա, ինչպես Փոքր Սյունիքի դեպքում, վերաբերում է Արցախի մի հատվածին միայն: Արցախն ամբողջությամբ երբեք Խաչեն չի կոչվել և չէր էլ կարող կոչվել: Բացի այդ, աղբյուրներով (հատկապես վիմագիր) չի հիմնավորվում, որ Հասան Ջալալը երբևէ ամբողջ Արցախի գահերեց իշխանն է եղել: Հետևաբար նրա տիրույթները չէր կարող տարածվել մինչև Մուխանք և Արաքսի հոսանքը<sup>202</sup>: Նա ընդամենը տերն էր Միջնարցախի, ավելի ստույգ՝ մինչև Կարկառ՝ Ծուշին էլ հետո, որը ներա-

<sup>196</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 10:

<sup>197</sup> Տեղանունների բառարան, հ. 1, էջ 665:

<sup>198</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 26:

<sup>199</sup> Ս. Երեմյան, ճշվ. աշխ. էջ 44:

<sup>200</sup> Վարդան Վարդապետ, Հավաքումն պատմության, էջ 84, 140:

<sup>201</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 32:

<sup>202</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 87—89:

ում էր «Աշխարհացույցի» Մեծկողմանք, Մեծառանք, Սիսական Ուտան (Ծար), Վաչկունիք գավառները:

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում խաչեն գավառը ներկայացվում է անհիմն տիտղոսավորումներով: Այսպես, IX—XIII դդ. խաչեն անունով է կոչվել ամբողջ Արցախը<sup>203</sup>: Խաչենը կոչել են նաև Փոքր Սյունիք: Արևելքից նրա սահմանները հասցվել են մինչև Կուր գետը: Խաչենի կազմում են համարվել Փառխոս, Կողթ գավառները, ինչպես նաև Գարդմանի ամրոցը: Խաչենի իշխանության արևելյան սահմանը տարածվում է մինչև Մուխանք դաշտը: IX դ կեսից խաչենը գրավում էր Ոստիքի հարավային և արևմտյան գավառները: Խաչենի մեկիքությունը սահմանակից է արևելքից Գյուլիստան գավառին, հարավից Բալուջա գետին, արևմուտքից՝ Սևանա լճի ավազանին: Խաչեն ներքին.— երբեմն այդպես է կոչվել Գյուլիստանի մեկիքությունը, թեև դրանք տարածքով իրար չեն համընկնում:

Կան նաև այլ մոլորություններ, որոնց կանդրադառնամ հետագա էջերում: Հարկ եմ համարում այստեղ միայն նշել հինգ հիմնական մեկիքությունների ճիշտ սահմաններն ըստ Բ. Ուլուբաբյանի.

Գյուլիստան՝ Կուրակ գետից Թարթառ, Զրաբերդ՝ Թարթառից Խաչենագետ, Խաչեն՝ Խաչենագետից Կարկառ, Վարանդա՝ Կարկառից մինչև Քիրսի հարավակողմը, Դիզակ՝ Քիրսից մինչև Երասխ<sup>204</sup>:

Ս. Երեմյանը Մեծառանքը տեղադրում է Խաչենագետի վերին ավազանում<sup>205</sup>: Ավելի ստույգ են Ս. Բարխուտարյանցի և Բ. Ուլուբաբյանի տեղադրությունները՝ Թարթառ (Տրտու) և Կարկառ գետերի միջև, Քիրսի լեռնաշղթայից մինչև Մարտակերտի շրջանի արևելյան սահմանները<sup>206</sup>: Այդ տարածքներն է մատնանշել նաև Ղ. Ալիշանը<sup>207</sup>: Բ. Ուլուբաբյանը գավառի նշանավոր կետեր է համարում Գանձասարի և Ս. Հակոբա վանքերն ու Խոխանաբերդը<sup>208</sup>: Բայց ո՞ր մնացին Խաչենի իշխանության վարչական կենտրոնում գտնվող Խաչեն-Կաչաղակաբերդը, ինչպես նաև նշանավոր Ծիկաքար և Կարկառ (Շուշի) ամ-

<sup>203</sup> Տեղանունների բառարան, հ. 2, էջ 665—666:

<sup>204</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 133:

<sup>205</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 66:

<sup>206</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 24, Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 31, Արցախի պատմությունը, էջ 10: Իրավանում, Մարտակերտի արևելյան հարթավայրային տարածքները մտնում էին Ոստիքի Ոստի ստանձնակ գավառի մեջ:

<sup>207</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 69—92:

<sup>208</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 10:

րոցները: «Արցախի պատմությունը» գրքում Բ. Ուլուբաբյանը Խաչենի իշխան Սահլ Սմբատյանին համարում է Արցախ-Խաչենի տերը IX դ. առաջին կեսում, որի տիրությունը ձգվում են Սևանի արևելյան ափից մինչև Մուխանք<sup>209</sup>, ընդ որում, Մուխանքի տակ հասկանալով ներկայիս Մուղանի դաշտը<sup>210</sup>, որը, սակայն, գտնվում է Կասպից ծովի ափին (միջազգետքից դուրս), արցախյան լեռնաշխարհից մոտ 100—150 կմ հեռավորության վրա: Այնուհետև նա գրում է, որ «աղբյուրները հանգամանորեն պատմում են, թե ինչպես Սահլն իր փոքրաթիվ զորախումբով արաբներին շարդեց Ծիկաքար բերդում՝ այժմյան Շուշի քաղաքի տեղում<sup>211</sup>: Ըստ նրա, բռնավորները, որ եկել էին Պարտավ մայրաքաղաքից, ասպատակեցին Ամարասը, շարունակեցին արյունոտ երթը դեպի արևմուտք և հազար հոգի գերեզման, ամրացան Ծիկաքար բերդում: Այստեղ խառնաշփոթի շարան է: Նախ, Սահլը գործնականում Արցախ նահանգի տեր երբեք չի եղել, ուր մնաց հասներ Մուխանք: Ստորև կոտենենք, թե վերջինս հարակից շրջաններով ում էր պատկանում Սահլի իշխանության ժամանակ: Իսկ այժմ մեկ անգամ ևս ուշադրություն եմ հրավիրում այն պարզ իրողության վրա, որ Ծիկաքարը Շուշին չէ: Փորձելով ամեն կերպ Շուշին նույնացնել Ծիկաքարի հետ, խեղաթյուրվում է անգամ Կաղանկատվացու հաղորդումը:

Պատմիչն աներկմիտ տեղեկացնում է, որ հարձակվողները Պարտավից դուրս գալով, «ավարի ենթարկեցին Ամարաս գավառը, և, մոտ հազար հոգի գերեզմաններով, ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում է Ծիկաքար»<sup>212</sup>: Իսկ դա՝ Մեծիրանքի սահմանը այժմյան Աղդամի մոտ է, որտեղ, Խրամորթի թիկունքում (նախկին Քարագլուխ գյուղի տեղում), Ծիկաքար ամրոցն է, որին տեղացիները այժմ էլ նույն անունն են տալիս: Շուշին, այսպիսով, Մեծառանքի սահմանից 35 կմ խորքում է գտնվում<sup>213</sup>: Բացի այդ, այլ աղբյուրներով ապացուցվում է,

<sup>209</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>210</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>211</sup> Նույն տեղում, էջ 43, 141, ՀՍՀ, հ. 8, 1982, էջ 599, «Երկիր» 12. 05. 92 թ.

№ 88:

<sup>212</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 255:

<sup>213</sup> Պատմիչը չի ասել բնավ, թե հարձակվողները Ամարասից թեքվեցին արևմուտք: Ինչ կարիք կար հազար գերիների շարանով թեքվել արևմուտք, անտատապատ, դժվարանցանելի, խորդուբորդ արահետներով կամ կածաններով Ամարասից անցնել Շուշի՝ երկրամասի խորքը: Բայց չէ՞ որ վերջին հաշվով նրանք պիտի մեկնեին եղման վայրը՝ Պարտավ վարչական կենտրոնը: Կարիք կա՞ր արդյոք Ամարասից Պարտավ մոտ 50 կմ ճանապարհը 150 հարձակ:



որ այդ հարձակվողները արաբներ չեն եղել, այլ իսլամ աղանդավորներ՝ տանիկ-քուրտանացիներ (պարսիկ խուրամիտներ)՝ Բաբելի հեռավորներ, որոնց Շիկաքարի մոտ դիմագրավում է Սահլ Սմբատյանը իր քաջագոր եղբայրներով, ոչնչացնում կամ փախցնում, իսկ գերիներին ազատ արձակում<sup>214</sup>: Եվ իրոք, սկսած 817 թվականից, խուրամիտական ապստամբները պատուհաս էին դարձել ոչ միայն Խալիֆայության, այլև հայ իշխանների համար: Արաբական զորքերը մեկը մյուսի հետևից պարտություններ էին կրում՝ կորցնելով զգալի տարածքներ (Ապրպատական, Փայտակարան, Մուխանք, Կուրի աջակողմյան տարածքներ և այլն): Այդ ժամանակ, Ամարասը ապստակելուց առաջ, Պարտավն էլ ապստամբ-աղանդավորների ձեռքին էր, նրանց հենակետն ու կենտրոնատեղին էր: Արաբ զորավար Ափշինին միայն 836 թ. հաջողվեց գրավել այն: Նշենք նաև, որ Բաբելի ապստամբության ճնշման ժամանակ Խալիֆայության զորքերի հետ միասին կռիվներին մասնակցում էին նաև հայ նախարարներն ու նրանց զորքերը<sup>215</sup>: Մնում է միայն ավելացնել, որ Բ. Ուլուբաքյանը իր իսկ կազմած սխեմատիկ քարտեզում (գետեղված «Արցախի պատմությունը» գրքի մեջ), Շիկաքարը տեղադրել է ճիշտ տեղում<sup>216</sup>:

<sup>214</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 255, Մ. Ասրի, Ժամանակագրություն, էջ 365, Յ. Քիրտեան, Բաբակ և Սահլ իսկ Սնպատ.— Բազմալեպ, 1858, մարտ-մայիս, էջ 72—73 և այլն:

<sup>215</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. ք, էջ 33, 227:

<sup>216</sup> Նույն գրքի 55—56-րդ էջերում հեղինակը կրկին անդրադառնալով Սահլ Սմբատյանին, աղբյուրներում հիշատակվող Խաչենի ամրոցը տեղադրում է Թարթառի հովտում (տե՛ս նաև Խաչենի իշխանությունը, էջ 45), առանց նշելու տեղը, իսկ Թարթառի հովտի Հավթախաղացը՝ Խաչենագետի հովտում (նույնպես առանց տեղը նշելու), որտեղ տեղակայում է նաև Կաչաղակաքերդը: Իրականում Կաչաղակաքերդը նույն Խաչենի բերդն է՝ Քոլատակ և Բարսառ-գյուղերի միջև (այս մասին հանգամանորեն տես ԼՀԳ, 1990, № 1): Մտաբերենք, որ երբ մոնղոլները 1238 թ. մտան Խաչենի սահմանները «Որ էր ամրոցն Խաչենոյ» (Մ. Չամչյանց, Հայոց պատմության, Գ, էջ 210), Հասան Ջալալը ստիպված նահանջում և ամրանում է Գանձասարի դիմացի Խոխանաքերդում (Մ. Չամչյանց, նույն տեղում), որը Խաչեն-Կաչաղակաքերդին հաջորդող և նրանից արևմուտք գտնվող միակ նշանավոր ամրոցն է Խաչենագետի հովտում: Միգուցե կարծում են, թե մոնղոլները Սևանի կողմերից են մտել Խաչեն: Բ. Ուլուբաքյանը գրում է. «Խաչեն բերդ-ամրոցն էր նահանգի կենտրոնում: Այնտեղ էր նստում մեծ իշխան Սահլ Սմբատյանը... Այդ նա էր, որ 838 թ. արաբների ձեռքը հանձնեց հայր Սահլի կողմից գերված բռնավոր Բաբելին» (Արցախի պատմությունը, էջ 55—56): Այդ ո՞ր հայր Սահլի մասին է խոսքը: Այդ տա-

Մեծառանք-Խաչենի ամրոցներից է Կարկառը, որի մասին տեղեկություն է հաղորդում Կ. Գանձակեցին<sup>217</sup>, հիշատակելով Արցախի XIII դ. նշանավոր ամրոցների շարքում: Աղբյուրների պատմահամեմատական ուսումնասիրությունների և հատկապես տեղագնությունների հիման վրա, միայն վերջերս ենք հանգել այն եզրակացությանը, որ Կարկառը Շուշին է<sup>218</sup>:

Այսպիսով, Մեծառանք գավառը տարածվում է՝ հյուսիսային կողմից մինչև Թարթառ գետը (սահմանակցվելով Մեծկողմանք գավառին), հարավից՝ Մյուս Հաբանդին, արևմուտքից՝ Ղարաքաղյան լեռնաշղթային, որից այն կողմ՝ Վայկունիք և Հարճլանք գավառներն են, իսկ արևելքից սահմանակցվում է Ուտիք նահանգի Ուտի առանձնակ և Առանոտ գավառներին: Նշված սահմաններում գավառի տարածքը կազմում է մոտ 1600 կմ<sup>2</sup>:

րիներին մեկ Սահլ կար, որն էլ նստում էր Շիկաքարում (ինչպես այդ մասին ասվեց): Ինչ կարիք կա պատմություն սարքել, այս անգամ Սահլին տանել «նստեցնել» Թարթառի երևակայական Խաչենի բերդում, որի չեղած տեղը, բնականաբար, ոչ ոք չի կարող պարզել:

<sup>217</sup> Կ. Գանձակեցի, նշվ. աշխ. էջ 258:

<sup>218</sup> «Երկիր» 2.09.94 թ. № 169, «Ալիք» 12.10.94 թ. և այլն: Նշենք, որ Շուշին ամրոց-բնակավայր էր ոչ թե XVIII դարից, ինչպես կարծում են շատերը, և ոչ էլ XIII դարից՝ ըստ Կ. Գանձակեցու կամ XV—XVI դերերից (համաձայն առանձին վիճագիր արձանագրությունների), այլ շատ ավելի վաղ, առնվազն Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանից:

Եվս մի նկատառում կապված այս գավառի հետ. Շ. Սմբատյանը, զարմանալիորեն, մի կողմից Կարկառ գետը համարում է Արաքսի վտակը, նրա ափին «տեղավորում» Փայտակարան քաղաքը, իսկ հետո՝ Փայտակարան նահանգը տեղակայում է Կուր-Երասխ գետերի միջև (այսինքն Արցախի և Ուտիքի տարածքում), սահմանները տարածելով նաև մինչև Կասպից ծովի ափերը՝ Արաքսի աջափնյակը (տե՛ս նշվ. աշխ. էջ 186):

Տեղանունների բնութարանում (հ. 1, էջ 336) անտատագուրկ Ասկերանը ներկայացվում է անտատապատ վայրում, երկրորդ հատորում (էջ 640) Խանաքաղը Ասկերանից հեռու է 6 կմ (3-ի փոխարեն), Ստեփանակերտից՝ 4 կմ (18-ի փոխարեն), իսկ 27-րդ էջից իմանում ենք, որ Քարազուլիս—Ստեփանակերտ հեռավորությունը 24 կմ է, Քարազուլիս—Շուշի՝ 25,5 կմ:

Ստեփանակերտ—Շուշի հեռավորությունը դառնում է 1,5 կմ (11-ի փոխարեն): Բազմաթիվ են նման կարգի միավորները: Սա էլ հո գիտություն չէ, որ մեր քթի տակ եղածը այդպես ենք ներկայացնում, էլ չենք խոսում հարակից շրջանների տասնյակ հազարավոր տեղանունների մասին, որոնցից շատերի պալականությունը չի կարող կասկած հարուցել:

**ՄԵԾԿՎԵՆՔ (ՄԵԾ ԿՈՂՄԱՆՔ).**—Մ. Բարխուտարյանցի հավատամանք, «Գավառն, որ ընկած է Մուավ բարձր լեռնաշղթայի, Դաշուաբերանի, Թրդի և Թարթառ ջրերի ձախ և Կուրակ գետակի աջ ափերի մեջ, ստացած է Մեծկողմանք, Մեծկուանք... անունները»<sup>219</sup>: Գրեթե այս սահմաններում են տեղադրում նաև Ղ. Ալիշանը, Բ. Ուլուբաբյանը<sup>220</sup>, բայց ստաջինը սխալմամբ այդ գավառի մեջ է ներառել Մեծառանքը, այն խառնելով Քուստիփառնեսի հետ<sup>221</sup>:

Մեծկողմանքի տեղը հայտնապես ակնարկում է Մ. Կաղանկատվացին: Նրա ասելով, խազարները «հասան խորածորերով հարուստ, անատառախիտ ու անտառներով ստառ Արցախ երկիրը՝ Մեծ Կվյանք գավառը», որտեղ խումբը բաժանվեց երկու մասի. «ստաջին մասը... նստեց այն տեղում, որ կոչում են Աստղաբլուր, այսինքն հյուսիսային կողմում, իսկ երկրորդ մասը բանակեց Տրտու գետի այն կողմը, անտառապատ հովտի հարավային մասում՝ Չղախ անվանված տեղում»<sup>222</sup>:

Երկու տեղավայրերն էլ գտնվում են Թարթառ (Տրտու) գետի ափին, Աստղաբլուրը՝ ձախ, հետևաբար Մեծկողմանքում, Ականայի մոտ<sup>223</sup>, իսկ Չղախը՝ աջ կողմում: Հետևաբար, վերջինս չափտի փընտրել Մեծկողմանքում<sup>224</sup>, քանի որ այն գտնվում է «Մեծիրանքի վիճակում»<sup>225</sup>, իսկ ըստ Ղ. Ալիշանի՝ Կուսապատի մոտ<sup>226</sup>: Այնուհետև Մ. Կաղանկատվացին շարունակում է. «Ապա հրամայում է խաչապայծառ տապանակով... ճանապարհել Մեծ Կվյանքի վերնակողմ գավառը բարձր լեռը՝ իր մենաստանի վայրը՝ Գլխովանքը»<sup>227</sup>: «Ահա նրանք գալիս հասնում են Միջնարցախ գավառը: Նրան գտնում են Գլխովանքի իր մենաստանում»<sup>228</sup>:

Ա. Երեմյանը Մեծկողմանքը տեղադրում է Իջևանի շրջանում<sup>229</sup>:

<sup>219</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 24:

<sup>220</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 10:

<sup>221</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 38—40:

<sup>222</sup> Մ. Կաղանկատվացի, Ազվ. աշխ., էջ 78:

<sup>223</sup> Ա. Զալպեանց, Ազվ. աշխ., Բ, էջ 233:

<sup>224</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 32, Վ. Առաքելյանի ծանոթագրությունները Մ. Կաղանկատվացու Ազվ. աշխ. մեջ (էջ 285):

<sup>225</sup> Մ. Կաղանկատվացի, Ազվ. աշխ. էջ 160:

<sup>226</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 69:

<sup>227</sup> Մ. Կաղանկատվացի, Ազվ. աշխ. էջ 166:

<sup>228</sup> Նույն տեղում, էջ 182 (Ազված վանքը ներկայիս Թալիշ (Ուտեկան) գյուղի մոտ գտնվող Հոռեկա վանքն է Մեծկողմանք գավառում):

<sup>229</sup> Ա. Երեմյան, Ազվ. աշխ., էջ 66:

որը հեռու է իրականությունից, իսկ հանրագիտարանում՝ Մուավ լեռան լանջերից հարավ և արևելք՝ դուրս թողնելով ներկայիս Ծահույանի շրջանը<sup>230</sup>: Բոլոր դեպքերում վերջինս Մեծկողմանքի (հետևաբար Արցախի) մաս էր կազմում: Եվ այս տեսակետից զարմանալի է, երբ Ուտիքի Աղուե (Աղվեհ, Աղվան) գավառը տեղադրում են այստեղ<sup>231</sup>, անհետևողականություն ցուցաբերելով: Ներկայիս Ծահույանի շրջանում՝ Ինջա գետից մինչև Կուրակ (արևելյան հարակից նախալեռնային տարածքներով) տեղադրվում է «Աշխարհացույցի» ընդհանուր ցանկերում (ոչ հիմնական գավառների թվում) հիշատակվող, բայց զարմանալիորեն նոր հրատարակությունից դուրս թողնված Արցախի Զավե (Զավ(դ)ե(ք), Ծավդեք) գավառը, որը վերոհիշյալ Ռուստակի հետ մտած էր Մեծկողմանքի մեջ: Այս գավառը իրավացիորեն ներկայիս Ծահույանի շրջանում՝ Զելվա բնակավայրի մոտակայքում է դնում Ղ. Ալիշանը<sup>232</sup>: Սակայն նրա նույնացումը Ռուստակի հետ<sup>233</sup> վրիպում է, քանի որ «Աշխարհացույցում» երկուսն էլ հիշատակվում են և դրանց ստույգ տեղը հայտնի է:

Մ. Բարխուտարյանցը Զավե գավառը տեղադրում է ներկայիս Ղազախի, Նոյնբերյանի, Իջևանի և Դիլիջանի շրջաններում<sup>234</sup>, որը բացարձակ սխալ է, քանի որ նշված տարածքները Արցախի կազմի մեջ չէին:

Այսպիսով, Զավե (Ծավդեք) գավառը (մոտ 750 կմ<sup>2</sup>) զբաղեցնում էր ներկայիս Ծահույանի շրջանը՝ հարակից նախալեռնային տարածքներով: Հիշենք, որ տեղանունների բառարանի ստաջին հատորում (էջ 906) Գյուլիստանի բերդը կրում է նաև Զելվա անունը, որը, սակայն, երկրորդ հատորում սխալմամբ տեղադրվում է Խաչեն գավառում: Նույն տեղում հիշատակվող Զելվա գավառը դարձյալ սխալմամբ համապատասխանեցվել է մերթ Խաչեն, մերթ Մյուս Հաբանդ գավառների<sup>235</sup>: Բայց այդ դեպքում հարց է ծագում, եթե Ծավդեքը գրավում է

<sup>230</sup> ՀԱՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 434:

<sup>231</sup> Ա. Երեմյան, Ազվ. աշխ., էջ 34: Տե՛ս նաև տեղանունների բառարանը, հ. 1, էջ 196: Այստեղ Աղվեհը տեղադրվում է Ուտիքում, կենտրոն ունենալով Գյուլիստանը, իսկ հետո նշվում է, որ «այն հավանաբար նույնն է Արցախի Աղավե գավառի հետ»: Որ Գյուլիստանը Արցախում է՝ հանրահայտ է, բայց հանրահայտ է նաև, որ Արցախն Աղվեհ անունով գավառ չի ունեցել:

<sup>232</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 27, 31:

<sup>233</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>234</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 25:

<sup>235</sup> Տեղանունների բառարան, հ. 2, էջ 291:

վերոհիշյալ տարածքը, այդ դեպքում որտե՞ղ է տեղադրվում Ծահունյանի շրջանին վերագրվող Աղվե (Աղուե) գավառը: Ըստ ամենայնի՝ այժմյան Ղազախի շրջանում, որը ճիշտ հիմնավորվում է նույն «Աշխարհացույցով» և այլ տվյալներով: Այսպես, ըստ «Աշխարհացույցի», Ոսիքի բոլոր ութ գավառները ցանկերում ներկայացված են հետևյալ հաջորդականությամբ. Առանոտ, Տրի, Ռոտպարյան, Աղուե, Տուսբուստակ, Գարդման, Ծակաշեն, Ոսի առանձնակ: Այստեղ, առաջին երեքը (Առանոտ, Տրի, Ռոտպարյան Ոսի առանձնակից հարավ ընկած գավառներն են, որոնք տեղադրվում են նույն հաջորդականությամբ՝ մինչև Արաքս գետը: Մյուս չորս գավառները զբաղեցնում են Ոսի առանձնակից հյուսիս-արևմուտք ընկած տարածքները՝ այժմյան Ղազախի շրջանից սկսած մինչև Ոսի առանձնակ (Ոսոռոստակ), որոնք դարձյալ ճիշտ տեղադրվում են ցանկում նշված հերթականությամբ (Աղուե, Տուսբուստակ, Գարդման, Ծակաշեն՝ մինչև Ոսի առանձնակ): Աղվենը տեղադրվում է Ղազախի շրջանում, Աղսու գետի ստորին հոսանքում՝ արևելյան կողմից սահման ունենալով Հախում (Վարազավան, Հասանու) գետի ստորին հոսանքը: Այն փոխարինում է Ս. Երեմյանի կողմից սխալմամբ այստեղ տեղադրված Գարդմանին: Տուսբուստակը իր մեջ էր ընդգրկել նշված գետից մինչև Ախնջի (Խընձորոտ) ընկած տարածությունը, Գարդմանի մասին արդեն նշվեց (Ախնջիից Ծամբոր), իսկ Ծակաշենը տարածվում էր Ծամբորից մինչև Կուրակ: Կուրակից Խաչենագետ Ոսի առանձնակն է՝ 2800 կմ<sup>2</sup> տարածությամբ<sup>236</sup>:

Այսպիսով, «Աշխարհացույցում» բոլոր գավառները նշված են ըստ հերթականության, հետևաբար սրանց տեղադրության հարցում անիմաստ է ավելորդ էքսկուրսներ կատարելը և որից հետո էլ անգամ չենք տեսնում դրանց ճիշտ տեղադրությունները:

Ծավալվելու համար միայն նշենք, որ Ս. Երեմյանի կողմից Ոսիքի բոլոր ութ գավառների սահմանները «Աշխարհացույցի» վերակազմության մեջ սխալ են որոշված: Առանձին գավառների սահմանները ստույգ չեն (եթե չասենք սխալ են) նաև Մ. Բարխուտարյանցի, Բ. Ուլուբաբյանի և այլոց ուսումնասիրություններում: Այսպես, Մ. Բարխուտարյանցը Տուսբուստակը (Տավուշ) տեղադրում է Աղղամի շրջանում՝ Տիգրանակերտի մոտ, Աղվենը՝ Կուր և Կարկառ գետերի միջև, Կողթը՝ Ծամբոր գետից մինչև Աղսու ընկած տարածքում<sup>237</sup>, իսկ Բ. Ուլուբաբ-

<sup>236</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 118:

<sup>237</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 22—23:

յանը (ինչպես Երեմյանը) Առանոտը տեղադրում է այժմյան Գերան գետի հովտում<sup>238</sup>, Ծակաշենի և Ոսի առանձնակի արանքում, ընդ որում, նշված գետը (որ հին Կուրանն է), դառնում է Առանոտ: Իսկ հետո սխալմամբ այս գավառը հարավից սահմանակցվում է Արցախի Մեծառանք գավառին (Գերանի հովտում գտնվողը չէր կարող Մեծկողմանք և Ոսի առանձնակ գավառների վրայով հասնել Մեծառանք): Առանոտը Ոսի առանձնակին հաջորդող, նրանից հարավ ընկած գավառն է, որին հաջորդում են Տրի և Ռոտպարյան գավառները: Սխալ է նաև Ծակաշենի տեղադրությունը (Զեգամից Կուրակ)<sup>239</sup>, քանի որ այդ դեպքում Գարդմանաձոր գավառի մեծ մասը (Ծամբորն էլ հետը) կանցներ Ծակաշենին: Տրիի տեղադրությունն էլ ճիշտ չէ<sup>240</sup>: «Մնացին Ռոտպարյան և Տրի գավառները»,— գրում է Բ. Ուլուբաբյանը<sup>241</sup>, այն տպավորությունը ստեղծելով, որ բոլոր գավառները տեղադրվել են, մնացել են դրանք: Բայց ո՞ր մնաց Աղվե գավառը, որտեղ է այն տեղադրվում, այդ մասին ոչ մի խոսք:

Աղուե գավառը Ղազախի շրջանում տեղադրելով, նկատի է առնվել նաև Ղ. Ալիշանի հետևյալ հաղորդումը. «Աղուե.— սոքա թոխն հիսխաագոյն քան զայլսն լինել, մինն Տաուշ եւ միւսն Աղստե, քանզի եւ յօրինակս ինչ փոխանակ Աղուէի, գրի Աղսաէր, զոր ուղղելի է Աղստե»<sup>242</sup>:

Իմ կարծիքով Աղստե անունը կապ ունի Աղվանք անվան հետ: Աղվան անունը կրող գետերի առկայությունն ըստ էության ուներ հարևան երկրների (կամ իշխանությունների) հետ սահմանագրաման,

<sup>238</sup> Բ. Ուլուբաբյան, Դրվագներ, էջ 37:

<sup>239</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>240</sup> Նույն տեղում, էջ 38: Լ. Կարագոզյանը Տրին տեղադրում է Տրտուի մոտակայքում (տե՛ս նրա «Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները».— Լրագրեր, 1978 № 10, էջ 62):

<sup>241</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>242</sup> Ղ. Ալիշան, Ոսի.— քաղմավեպ, 1990, № 1—2, էջ 76: «Աղսաէր»-ը հիշատակվում է նաև Ղ. Ինճիճյանի մոտ (տե՛ս Ստորագրություն հին հայաստանեաց, էջ 337): Բացի այդ, միջնադարում (մասնավորապես X—XI դդ) Աղվենը (Աղուե) հիշվում է նաև «Վաղարշապատ կամ Վաղարշ» անուններով (տե՛ս Մ. Զամչյանց, Հայոց պատմություն, Գ, էջ 913), իսկ նշված տեղանունների բառարանի առաջին հատորում (էջ 202)՝ «Աղուտ, Աղուե, Աղվե»: Ս. Երեմյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 34) Աղստեին Լոփնաս անունն է տալիս, որը սակայն ներկայիս Զեգամն է (տե՛ս Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 420):



սահմանների սահմանումն անհատություն (Սյունիքի հետ սահմանում՝ Աղուան-Հակարին, Վրաստանի հետ սահմանում՝ Աղուան-Ալազանը, արևելքում՝ Աղուան-Աղսուն և այլն)<sup>243</sup>:

Եվս մի նկատառում. նկատի ունենալով Մ. Կաղանկատվացու հիշատակած Կաղանկատույք բնակավայրի տեղադրության վերաբերյալ իրարամերժ տեսակետները<sup>244</sup>, նպատակահարմար եմ գտնում անդրադառնալ այս խնդրին՝ հենվելով նույն Կաղանկատվացու տեղեկությունների վրա: Պատմիչը գրում է, որ «հոռմեական անթիվ բազմությամբ զորքը (մ. թ. 624 թ.— Ս. Ս.) եկավ հասավ ու բանակեց Ուտի գավառում, Կաղանկատույք գյուղի սահմաններում գտնվող հեղեղատի մոտ... Այնտեղից մեկնելով բանակեցին Տրտուի հեղեղատին մոտիկ, որ Դյուտական գյուղի մոտ է»<sup>245</sup>: Այստեղ պարզ երևում է, որ Դյուտականը և նրա մոտ գտնվող Մատաղիսը Կաղանկատույքից հետո ընկած և Արցախի Մեծկողմանք գավառի սահմաններում գտնվող բնակավայրեր են (հիշենք Գլխովանքի կապակցությամբ նույն Կաղանկատվացու տրվյալները), հետևաբար Կաղանկատույքը այնտեղ կամ նրանց մերձ չէր կարող լինել:

Հաջորդը. «Երբ թշնամիները վերահասու եղան տեղի ունեցածին, հետապնդեցին փախստականներին... հասան այն լեռան ստորոտի մոտերքը, որ գտնվում է Կաղանկատույք մեծ գյուղի հանդեպ»<sup>246</sup>: Այստեղ հիշատակվող լեռը ձգվում է Մարտակերտի թիկունքով հյուսիս-հարավ ուղղությամբ, որի «ստորոտի մոտերքում» (այսինքն ստորոտը չհասած) գտնվում է Կաղանկատույքը: Իսկ դա համապատասխանում է ներկայիս Թարթառին (Միրբաշիր), որը գետի առավել ընդգծված հեղեղատի մոտ է: Կաղանկատույքի մոտ տեղաբաշխված հոռմեական զորքերի թիկունքում, Տիգրանակերտի շրջանում (Ծահրուլաղ), մոտ 40—45 կմ հեռավորության վրա (որը համապատասխանում է Թարթառ-Մարտակերտ-Ծահրուլաղ հեռավորությանը) տեղավորված էր պարսից զորավար Ծահենի բանակը<sup>247</sup>:

<sup>243</sup> Ս. Ծիրակացի, Մատենագրություն, էջ 290, Ս. Երեմյան, Ազ. աշխ., էջ 34:

<sup>244</sup> Հ. Մանանդյանը Կաղանկատույքը տեղադրում է ներկայիս Մատաղիսի կամ Դյուտականի մոտ (տե՛ս Հննական տեսություն, հ. Բ, էջ 150 կամ Հայաստանի գրվածքային ճանապարհները (Երևան, 1936, էջ 200—202), իսկ որոշ ուսումնասիրողներ՝ Մաղավուզ գյուղի տարածքում:

<sup>245</sup> Մ. Կաղանկատվացի, Ազ. աշխ., էջ 101:

<sup>246</sup> Նույն տեղում, էջ 105:

<sup>247</sup> Պատմություն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 125, կամ պատմություն Սեբեոսի

**ՔՈՒՍՏԻՓՈՒՆԵՍ.**— Մ. Բարխուտարյանը Քուստին և Փառնեսը ստանձին-ատանձին գավառներ է համարում: Առաջինը տեղադրում է գրեթե Տուսքուստակի (Տավուշ) տեղում՝ Ախնջի գետից մինչև Աղսուն<sup>248</sup>, իսկ Փառնեսը՝ «Ծամբոր գետակի միջին օժանդակի և Գեղամա լեռնաշղթայի գագաթնագծի շարունակության և Տավուշ գետակի հարավ-արևելյան օժանդակի (Ախնջիի) ափերի և դաշտաբերանի մեջ»<sup>249</sup>: Փառնեսն այստեղ է տեղադրում նաև Ա. Ալպոյաճյանը<sup>250</sup>: Ս. Երեմյանը ևս Քուստիփառնեսը երկու գավառ է ճանաչում, համամիտ լինելով Մ. Բարխուտարյանցի վերոհիշյալ տեղադրություններին<sup>251</sup>: Հ. Հյուբշմանը եկթադրում է մեկ Քուստիփառնես կամ Քուստիփառնես գավառ<sup>252</sup>: Մեկ գավառ է ճանաչում նաև Բ. Ուլտիաբյանը և նկատի ունենալով, որ Մեծկողմանքն ու Քուստիփառնեսը եկթակա էին մեկ եպիսկոպոսի, սահմանակցում է այս երկու գավառները, որի արդյունքում Քուստիփառնեսի սահմանները տարածվում են «Ղարաբաղյան լեռնաշղթայի լանջով դեպի արևմուտք, մինչև Ծամբորի շրջանի սահմանները, որը և կլինի «Փառնեսայ» կամ հետագայի Փառնեսի գավառը»<sup>253</sup>:

Բացի այդ, ուսումնասիրողը հանրագիտարանում երկու գավառների (Գարդման, Կողթ) թիկունքին գտնվող Փառնեսը սահմանակցում է մոտ 50 կմ հեռավորության վրա գտնվող Ուտիքի Ծակաշեն գավառին<sup>254</sup>, իսկ Ծ. Սմբատյանը Քուստիփառնեսը համարում է Ուտիքի գավառ<sup>255</sup>:

Կան նաև այլ կարծիքներ այս գավառի մասին, որոնց մեծամասնությունը Քուստիփառնեսը մեկ միասնական գավառ է ճանաչում: Այդպես է նաև «Աշխարհացույցի» բոլոր հին օրինակների 12 գավառների ցանկերում: Ծիշտ է, ընդհանուր (Ուտիքի գավառների հետ) ցանկերում դրանք առանձին-առանձին են հանդես գալիս, իրար կողքի, որը սակայն, այլ աղբյուրներով չի հիմնավորվում: Սակայն անտարակույս

Եպիսկոպոսի ի Հերակլոն, ՄԳԲ, 1879, էջ 92, Հ. Մանանդյան, Ազ. աշխ., հ. Բ, էջ 152 և այլն:

<sup>248</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 25:

<sup>249</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>250</sup> Ա. Ալպոյաճյան, Ազ. աշխ., էջ 174:

<sup>251</sup> Ս. Երեմյան, Ազ. աշխ., էջ 88, 90:

<sup>252</sup> Հ. Հյուբշման, Հին հայոց տեղիչ անունները, Վիեննա, 1907, էջ 229:

<sup>253</sup> Բ. Ուլտիաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 34:

<sup>254</sup> ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 811:

<sup>255</sup> Ծ. Սմբատյան, Ազ. աշխ., էջ 239:

է, որ դրանք ի սկզբանէ եղել են առանձին գավառներ, բայց ոչ այն «մակարդակի», որ ներկայացնում են Մ. Բարխուտարյանցն ու Ս. Երեւյանը: Կարծում են, որ Քուստի կարող էր կոչվել գավառի արևմտյան մասը՝ ներկայիս Արծվաշենը իր շրջակայքով, որն ամբողջությամբ բարձրադիր լեռներով անջրպետված լինելով շրջապատից, առաջին հայացքից էլ առանձին տարածքային ամբողջականության տպավորություն է ստեղծում: Սա Քուստիփառնես գավառի մի մասն է: Եվ, ընդհանրապես, Քուստիփառնես գավառը տարածվում էր գրեթե Մ. Բարխուտարյանցի հիշատակած Փառնեսի տեղում՝ Ախնջի-Խնձորուտից մինչև Ծամբոր գետի վերին հոնանքը (ակունքի շրջանում), հարավարևելյան ծայրամասում սահման ունենալով Ծամբորի Խոչքար (Կոչկար) վտակը: Հյուսիսային կողմից իր մեջ էր ներառել Գետաբակը, որը գտնվում է «ի գլուխ Գարդման գավառի»<sup>256</sup>, հարավային սահմանն է Սևանի լեռնաշղթան: Գավառի տարածքը կազմում է մոտ 1200 կմ<sup>2</sup>:

Այսպիսով, պետք է ընդունել անճշտությունը «Աշխարհացուցցի» վերակազմության և նոր հրատարակության մեջ և Քուստիփառնեսը համարել որպես մեկ միասնական գավառ:

Բ. Ուլուքաբյանի վերոհիշյալ տեղադրությունը նույնպես «Աշխարհացուցցի» Քուստիփառնեսին չի վերաբերում, քանի որ մեջ բերված փաստարկները (օրինակ, «Երանելուն Միսայելի հայոց եպիսկոպոսի Մեծի Կողմանցն և Քուստիփառնեսայ նահանգին»)՝<sup>257</sup>, որոնք հիմք են տվել սահմանակցելու նշված երկու գավառները և Քուստիփառնեսը տեղադրելու ավելի մեծ տարածության վրա, վերաբերում են հետ աշխարհացուցցային ժամանակաշրջանին՝ IX դ. վերջերին: Եվ որպես ի գիտություն ուսումնասիրողի ավելացնենք, որ Ղարաբաղյան լեռնաշղթան ձգվում է ոչ թե արևելք-արևմուտք ուղղությամբ, այլ հյուսիս-հարավ՝ Դադի վանքի մոտերքից մինչև ներկայիս Հադրութի շրջանը:

Քուստիփառնես գավառը առավելապես ծաղկում և հզորանում է X դարում, բայց տակավին ոչ թե Քուստիփառնես, այլ Փառխոս անունով: Սահլ Սմբատյանի ժառանգներից, Հավթախաղացը կառուցող Գրիգորի որդի Սահակը, որը Սևադա էր կոչվում, իր հալոնակա տիրույթները ընդարձակելով՝ Սողքի կողմից անցնում է Կուրի հովիտը և տեղ դառնում մի ընդարձակ երկրամասի՝ հիմնադրելով Փառխոսի թագավորությունը: Սա մի ընդարձակ երկրամաս էր, որն ընդգրկում էր

<sup>256</sup> Վարդան Վարդապետ, Հասարակական պատմություն, էջ 62:

<sup>257</sup> Մ. Կաղանկատվացի, Աշխ. աշխ., էջ 261—262, Բազմավեպ, 1911, էջ 258:

Արցախ-Ուտիք նահանգների արևմտյան բոլոր ծայրագավառները՝ Ծամբոր գետից մինչև Դեբեդի ստորին ավազանը, հյուսիսում սահման ունենալով Կուր գետը: Թագավորության կենտրոնատեղին Փառխոս քաղաքն էր, հաստատեղույս պարիսպներով ու բուրգերով շրջապատված ամուր բերդով, որը գտնվում է Ծամբոր գետի վերամասում: Մ. Կաղանկատվացին տեղեկացնում է, որ Սահակ Սևադան տիրեց ոչ միայն Գարդմանին ու Քուսա և Փառնա գավառներին, այլև ամբողջ Ջորագետի (Դեբեդի) ավազակապետների իշխանը դարձավ՝ հետամուտ լինելով գրագիտությանը<sup>258</sup>: Սահակ Սևադային որպես Ջորագետի և Գարդմանի իշխան էր հիշում նաև Ստ. Օրբելյանը<sup>259</sup>: Վերջում ավելացնենք, որ Սահակ Սևադան Բագրատունյաց թագավորության հանդեպ կենտրոնախույս դիրք բռնած նախարարներից էր և չնայած Աշոտ Երկայթ թագավորը իր փեսան էր, նա երկու անգամ ապստամբեց նրա դեմ (Ջորախորում և Տավուշում), մինչև որ բռնվեց և դաժանորեն կուրացվեց 923 թվականին:

**ԿՈՂԹ**— Մ. Բարխուտարյանցը Կողթ գավառը տեղադրում է Ծամբոր գետի ձախ, Կուր և Աղստև գետերի աջ ափերի և դաշտաբերանի մեջ<sup>260</sup>, Ղ. Ալիշանը՝ Գեղամա ծովի ելքի, Ծամբոր և Խոչքար գետերի ակունքների միջև<sup>261</sup>: Այստեղ Մ. Բարխուտարյանցի տեղադրությունը ակնհայտ սխալ է, քանի որ արդեն նշվեց, թե այդ տարածքներում իրականում ինչ գավառներ են տեղադրվում, իսկ Ղ. Ալիշանի նշած տարածքը Կողթ գավառի միայն մի փոքր՝ հարավ-արևմտյան ծայրամասն է կազմում:

Բ. Ուլուքաբյանը իր պատմական աշխատությունների մեջ այս գավառին չի անդրադառնում, սակայն «Արցախի պատմությունը» գրքում գետեղված սխեմատիկ քարտեզում այն տեղադրում է հիմնականում ճիշտ, որը սակայն հակասում է հանրագիտարանի իր բացարձակ սխալ տեղադրությանը: Այստեղ Կողթի մեջ է ներառված Ծամբոր գետի ստվազանը, մինչև Ծամբոր քաղաքը, իսկ արևմուտքում՝ մինչև Տավուշ գետակի հոսանքը<sup>262</sup>:

Գավառը մասամբ ճիշտ է տեղադրում Ս. Երեւյանը, որը գրում է.

<sup>258</sup> Մ. Կաղանկատվացի, Աշխ. աշխ., էջ 267:

<sup>259</sup> Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 189:

<sup>260</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 23:

<sup>261</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 10:

<sup>262</sup> ՀՍՀ հ. 5, Երևան, 1979, էջ 531: Ըստ Ուլուքաբյանի «Կողթն Արցախի ծայրագավառն էր, որով սահմանակցվում էր Ուտիքի և Գուգարաց աշխարհի հետ»:

«Այս գավառումն էին մշակվում «քարախունկի» այսինքն շիրի հանքերը, որ այժմ էլ հայտնի են Ջագիկ կամ Փիփ գյուղի մոտ: Այս գավառի տեղը որոշվում է այժմյան Դաստափորի շրջանում և ընդգրկում է 1100 կմ<sup>2</sup> տարածություն: Մեր տեղադրությունը նշովում է Մխիթար Գոշի ժամանակագրության վկայությամբ. «Ստեփանոս Եպիսկոպոս Կողթ գավառին և քաղաքին Ծամբորոյ» (Ղ. Ալիշան, Հայաստանում, Վեներտիկ, 1901, էջ 385): Կողթ գավառի և Ծամբոր քաղաքի եպիսկոպոսի նստոցը պիտի գտնվեր այժմյան Խաչակապ գյուղի Թարգմանչաց վանքում<sup>263</sup>:

Բայց ինչո՞ւ միայն Դաստափորի շրջանում, որն ընդգրկում է Աերկայիս Կոշկար և Կուրակ գետերի միջնամասը, երբ վերոհիշյալ Խաչակապ գյուղը գտնվում է Ծամբոր գետի աջ կողմում, Կոշկարից ձախ: Այսպիսով Կողթ գավառը ընդգրկում էր Ծամբոր և Կուրակ գետակների միջնատարածքը՝ ներառելով այժմյան Դաշքեսանի (Բարհատի) շրջանն ամբողջությամբ, Խանլարի շրջանի մեծ մասը, որը կազմում է 1650 կմ<sup>2</sup>:

Ըստ անտիկ հեղինակների (Պլինիոս, Պտղոմեոս) Կողթն (Կոլթենե) իրոք այս կողմերում է՝ Սողթի կողքին<sup>264</sup>, որը և համապատասխանում է վերոհիշյալ Ծամբոր և Կուրակ գետերի միջնատարածքին:

Հայկական աղբյուրներից Կողթն առաջին անգամ հիշատակում է Փավստոս Բուզանդը այն ծայրագավառների թվում (Ուտի, Ծակաշեն, Գարդմանաձոր և այլն), որոնք Պապի թագավորության ժամանակ Մուշեղ Մամիկոնյանի միջոցով վերագրավվեցին և կրկին միացվեցին Մեծ Հայքի թագավորությանը<sup>265</sup>:


Մեկ անգամ ևս հիշենք, որ այս գավառի տարածքում է գտնվում Գարդման քերդը (այժմյան Էմիրվար գյուղի մոտ) համանուն գետով, որն էլ ապակողմնորոշել էր շատ ուսումնասիրողների, անգամ պատմիչների՝ Գարդման գավառի տակ հասկացվելով Կողթ գավառի տարածքը: Դա տեղի էր ունեցել ինչպես ճշվեց, Միհրանյանների գալուց և այստեղ՝ Կողթ գավառում Գարդման քերդի կառուցումից և այն կենտրոնատեղի դարձնելուց հետո միայն: «Իսկ Գարդմանի և ուրիշ կողմերի՝ Չարեքի ու Գետաքակի վրա Ղատաղան նույն անունով մի այլ գլխավոր գնաց»,— գրում է Կ. Գանձակեցին<sup>266</sup>, անշուշտ նկատի

<sup>263</sup> Ս. Երեմյան, Աշխ., էջ 60:

<sup>264</sup> Ն. Սողոմոնյան, Աշխ., էջ 471: Տե՛ս նաև Armenian iconography, p. 13—29:


<sup>265</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 323:

<sup>266</sup> Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 175:





# ՄԱՐՈՑՆԵՐ



ունենալով այս Գարդմանը, քանի որ մոնղոլական բանակը, որոնց մեջ էր Ղատաղանի զորքը, այդ ժամանակ գտնվում էր Ծամբորում (այսօր Բուն Գարդմանաձոր գավառում): Հովհաննես Կաթողիկոսն էլ Գարդման գավառ ասելով հասկացել էր Կողթի Գարդմանը, երբ IX դ. կեսերի դեպքերի կապակցությամբ գրում է. «Իսկ Բուխայի երթեալ ընթուկէ զմեծ իշխանն Ստրնէրսեհն, որ բնակեալ էր յամրոցին Խաչէնույ և զայլ ևս զհամազգիս նորա: Եւ անտի չուեալ զնայ ի գաւառն Գարդմանայ՝ և պատնէջ և պաշարումն շուրջ զԳարդման բերդին եղեալ ընթուկէ անտի և զիշխանն Գարդմանայ զԿտրիճն՝ ի կալանս կապանաց արկեալ»<sup>267</sup>:

Ըստ էության նաև այդ էր պատճառը, երբ Մ. Բարխուտարյանցը Գարդմանը համարում էր Արցախի գավառ և նրան վերագրում Կողթ գավառի տարածքը՝ «Կուրակ և Ծամբոր գետակների, դաշտաբերանի և Մոսլվան լեռնաշղթայի գագաթնագծի մեջ»<sup>268</sup>:

**ՄՐԻՍԱՆԸ ԵՎ ՊԻՍՆԸ** գավառները.— Այս երկու հարթավայրային գավառների ստույգ տեղադրությունների մասին աղբյուրներում տեղեկություններ չկան: Ստեղծված պայմաններում պատմական աղբյուրի դեր է կատարում միայն տեղագրող Մ. Բարխուտարյանցը, որը դեռևս XIX դարի վերջերին գտնվելով այդ վայրերում, բնական սահմանագծերով, թեկուզ մոտավոր, ցույց է տվել նշված գավառների տեղադրությունները: «Աշխարհացույցի» 12 գավառների բոլոր հին ու նոր ցանկերում, այս երկու գավառները Պարսկանքի հետ միասին հանդես են գալիս նույն հերթականությամբ, գրավելով Արցախի ծայրամասյին, մերձերասխյան՝ Պարսկաստանին հարող հարավային և հարավարևելյան տարածքները: Մոխանք անունը հուշում է, որ այդ գավառը պետք է լինի ներկայիս Մուղանի դաշտավայրի մոտակայքում: Սակայն, դրա համապատասխանեցումը կամ նույնացումը այժմյան Մուղանին<sup>269</sup> ճիշտ չէր կարող լինել, քանի որ այն գտնվում է Կուր-Երասխյան միջազատքից դուրս, գրեթե Կասպից ծովի ափին և Ուտիք, Արցախ նահանգների սահմաններում չէր: Բայց գավառի Մոխանք շատ հին անունը հուշում է, որ հնում կարող էր այդպես կոչվել ներկայիս Մուղանի շարունակությունը կազմող, սակայն Երասխ գետով անջատված այն տարածքը, որը կոչվում է Միլի դաշտավայր: Քանի որ վերջինս հին ու միջնադարյան աղբյուրներում չի հիշատակվում, իսկ տեղագրա-

<sup>267</sup> Հովհաննես Կաթողիկոս, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 127:  
<sup>268</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 24:  
<sup>269</sup> Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 10:

կան բնույթի առանձին փաստարկներ դրանց նույնացման օգտին են խոսում<sup>270</sup>:

Ահա Մ. Բարխուտարյանցի տեղադրությունը. «Գավառն, որ ընկած է Երասխ գետի ձախ ափի, Վարդանակերտ գավառի և դաշտաբերանի տարածության մեջ, ստացած է Մուխանք... Այժմ Միլին դաշտ անունը»<sup>271</sup>: Ինչպես տեսնում ենք, Մ. Բարխուտարյանցը Մուխանքը տեղադրում է ներկայիս Միլի դաշտավայրում, կողքին տեղ թողնելով սակայն մեկ ուրիշ գավառի՝ իրականում Ուտիքի Ռոտպարսյան գավառին, քանի որ նշված Վարդանակերտը Կուր-Երասխյան միջագետքից դուրս է: Մուխանքի սահմանների ճշտման գործում որոշ պարզություն է մտցնում Բարխուտարյանցի՝ Պիանքի տեղադրությունը՝ «Երասխի և Ղուրուչայ գետակի ձախ ափերի, դաշտաբերանի և Մուխանք գավառի սահմանի մեջ»<sup>272</sup>, որն էլ հիմք է տալիս այս երկու գավառները տեղադրելու ներկայիս Ղուրուչայ (Իշխանագետ) գետից արևմուտք ընկած տարածքներում, դրանց սահմանները որոշելով գետակներով, նախադեռնային բլրաշարերով և այլ բնական սահմանագծերով: Այսպիսով, Պիանք գավառի սահմաններն են կազմում՝ հարավից Երասխ գետը, արևմուտքից Իշխանագետը, որից այն կողմ Պարսկանք գավառն է, հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերից՝ ներկայիս Չախարթու գետակը (սահմանակից Մյուս Հաբանդին), արևելքից՝ մինչև բլրաշարի վերացումը (5—6 կմ Բայլական չհասած): Գավառի հարավ-արևելյան սահմանագծում է ներկայիս Օրջոնիկիձե բնակավայրը: Նշված սահմանների մեջ Պիանքի տարածքը կազմում է մոտ 800 կմ<sup>2</sup>:

Մուխանքը նրան հաջորդող, Արցախի ծայրամասային գավառն է, որը տեղավորվում է հետևյալ սահմանների մեջ. արևմուտքից Պիանք գավառը, հարավից և հարավ-արևելքից Երասխը, արևելքից՝ մինչև բնական սահմանագծի ավարտը (7 կմ ներկայիս Իմիշլի չհասած): Այնուհետև, բլրաշար-սահմանագիծը Իմիշլի մոտակայքից թեքվում է հյուսիս-արևմուտք ուղղությամբ, հասնում ներկայիս Ծորգոյ լճակի հարավակողմը, որը և Մուխանքի հյուսիսային սահմանն է: Գավառի հյուսիս-արևմտյան սահմանի վրա է Չախարթու (Կարասու) գետակը: Այս սահմանների մեջ ընդգրկված տարածքը կազմում է 1250 կմ<sup>2</sup>, ճիշտ

<sup>270</sup> Ըստ Ստրաբոնի (տե՛ս նշվ. տեղանունների բառարանի 1-ին հատորի 400-րդ էջը), Արաքսը հնում Կուրին չի միացել, այլ նրան զուգահեռ հոսելով, թափվել է ուղղակի Կասպից ծովը:

<sup>271</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 22:

<sup>272</sup> Նույն տեղում:

այնքան, որքան սահմանված է Ս. Երեմյանի հաշվարկում<sup>273</sup>, թեև ուսումնասիրողը գավառի ստույգ տեղը չի նշել:

Այսպիսով, Մուխանքը զբաղեցնում է Միլ կոչված հարթավայրի մի մասը միայն:

Ղ. Ալիշանը Մուխանքը խառնում է Վարանդայի և Դիզակի հետ, այն տեղադրում վերջինիս տարածքում<sup>274</sup>: Բացարձակ սխալ է տեղադրում նաև Պիանքը (Շուշիի, Սյունիքի և Երասխի միջև)<sup>275</sup>: Ս. Երեմյանը Պիանքը տեղադրում է Աղդամի շրջանում, Խաչեն և Կարկառ գետերի միջև, նկատի ունենալով այնտեղ գտնվող Բայաթ բնակավայրը, որը սակայն նրա մոտ ներկայանում է Բայան անվամբ<sup>276</sup>: Պիանք գավառի տեղադրության հարցում նույն սխալն է հանրագիտարանում<sup>277</sup>, իսկ Բ. Ուլուբաբյանը ենթադրաբար տեղադրում է Պարսկաստանին սահմանամերձ հարավ-արևելյան տարածքում<sup>278</sup>, թեև սխեմատիկ քարտեզում գավառը հակառակ՝ հարավ-արևմտյան տարածքն է զբաղեցնում:

**ՊԱՐՍԿԱՆՔ.**— Այս գավառի մասին հիշատակություններ կան հունական (Ստրաբոն, Պտղոմեոս) և հայկական աղբյուրներում: Մասնավորապես Մ. Կաղանկատվացին գրում է, որ Հոբ անունով մի քահանա, որ ճգնավոր էր և չափազանց առաքինի կյանք էր վարում, սուսթելական շնորհներ ունենալով, կարողացավ Արցախի Պարսկանք կոչված շատ մեծ գավառը մոլորությունից ետ կանգնեցնել, այն դարձնելով աստվածաճանաչ, երրորդության անճանելի խորհրդին խորհրդակից և պաշտող<sup>279</sup>: Այնուհետև գավառը հիշատակվում է IX դ կեսերի հայտնի դեպքերի կապակցությամբ, երբ Բաբանից ապստամբված հայերը Եսայի իշխանի գլխավորությամբ, ամրանալով Գորոզ բերդում, տիրեցին մի շարք գավառների, որոնց թվում Պարսկանքը<sup>280</sup>:

Ղ. Ալիշանը Պարսկանքը տեղադրում է Քյունդալան (Վարանդա) գետի մոտակայքում, նրա աջափնյա ստորին հատվածներում<sup>281</sup>, իսկ

<sup>273</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 71, 117:

<sup>274</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 114:

<sup>275</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>276</sup> Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 77:

<sup>277</sup> ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 288:

<sup>278</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 11: 152-րդ էջում, Բ. Ուլուբաբյանը վերոհիշյալ Բայաթը տեղադրում է «Կուրի առափնյա տափարակի» վրա:

<sup>279</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 55:

<sup>280</sup> Նույն տեղում, էջ 256:

<sup>281</sup> Ղ. Ալիշան, Տեղագիր հայոց մեծաց, էջ 90:

մեկ այլ գրքում՝ Ամարասից հարավ<sup>282</sup>: Գավառը ենթադրաբար գրեթե այս կողմերում է տեղադրում նաև Բ. Ուլուբաբյանը<sup>283</sup>: Ղ. Ինճիճյանը տեղադրում է այժմյան Բայրազանի շրջակայքում, կապ տեսնելով Պալիզան-Պեյեգան և Պարսկանք անունների մեջ<sup>284</sup>: Ըստ հանրագիտարանի՝ «Տեղորոշումը դեռևս ստույգ չէ, թեև քանիցս հիշատակվում է հայ պատմիչների երկերում, ինչպես նաև՝ «Աշխարհացույցում»<sup>285</sup>: Ս. Երեմյանը Պարսկանքը համապատասխանեցնում է հետագա Վարանդայի շրջանին (ինչպես Մյուս Հաբանդը)՝ 650 կմ<sup>2</sup> տարածությամբ<sup>286</sup>: Բայց քանի որ այս տեղադրությունը ճիշտ չէ, բնականաբար նշված չափն էլ չի կարող ճիշտ լինել, եթե նկատի ունենանք պատմիչի «շատ մեծ գավառ» արտահայտությունը: Ստույգ չի կարելի համարել նաև Մ. Բարխուտարյանցի տեղադրությունը՝ «Երասխ գետի ձախ և Ղուրուչայի աջ ափերի, Հաղրութի և Դիզափայտի լեռնաշղթայի գագաթնագծի մեջ»<sup>287</sup>: Չափազանցված ու խառնաշփոթ է Ս. Ամիրջանյանի տեղադրությունը<sup>288</sup>: Նա մի կողմից գավառը սահմանակցում է Արաքս գետին, արևելքից Մուղանի դաշտին, հյուսիսից Քյոնդալանին (որին Ղուրուչայ է անվանում), արևմուտքից՝ Քիրս և Դիզալի լեռներից մինչև Արաքսի հովիտը ձգվող բարձրությունները, իսկ հետո՝ հյուսիսից սահմանակցում է նաև Խաչենին, հարավից՝ Փայտակարանին, հարավ-արևմուտքից՝ Սյունիքին, արևելքից Պիանք գավառին: Բացի այդ, Ս. Ամիրջանյանը Պարսկանքը, որ Պողոսյանի ժամանակ և միջին դարերում հայտնի էր նաև Դիզալ անունով<sup>289</sup>, խառնում է Մյուս Հաբանդի հետ, վերջինիս աշխարհացույցյան բոլոր սխալ տվյալները (ըստ Ս. Երեմյանի) վերագրում նրան:

Պատմա-աշխարհագրական քննությունը պարզել է Պարսկանք գավառի բռնած տարածքը հետևյալ սահմանների մեջ. հարավից՝ Արաքս գետը, արևելյան կողմից՝ Պիանք գավառը (Իշխանագետով), հյուսիսից՝ Մյուս Հաբանդը՝ Իշխանագետից ձախ, հյուսիս-արևմտյան կողմից սահմանակից է Բերդաձորին (բաժանված է Հակարիի ձախ՝ Զինգիա-

<sup>282</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 107:

<sup>283</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 11:

<sup>284</sup> Ղ. Ինճիճյան, Նշվ. աշխ., էջ 309:

<sup>285</sup> ՀԱՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 196:

<sup>286</sup> Ս. Երեմյան, Նշվ. աշխ., էջ 77:

<sup>287</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 23:

<sup>288</sup> Ս. Ամիրջանյան, Դիզալ.— Գիտություն և տեխնիկա, 1988, № 11, էջ 29:

<sup>289</sup> Տե՛ս ՀԱՀ, հ. 9, 416 էջից հետո գետնդված քարտեզները, նաև Armenian in conography, p. 13—29.

նակապ վտակով ու Դիզափայտի լեռներով): Կողմնորոշման համար ասենք, որ ներկայիս Թումասի (Ամուտեղ) լեռնագագաթը Պարսկանքի մեջ է, իսկ Դիզափայտը՝ 2478 մ բարձրությամբ՝ սահմանագլխին: Զինգիանակապից աջ գտնվող Խծաբերդ, Արիագետիկ, Պետրոսաշեն, Սպիտակաշեն գյուղերը Բերդաձորի տարածքում էին:

Վերոհիշյալ սահմանների մեջ գավառի տարածքը կազմում է մոտ 2000 կմ<sup>2</sup> <sup>290</sup>:

<sup>290</sup> Արցախի հետ կապված մի նկատառում ևս. Վերջերս (1993 թ.) ՀՀ լուսավորության նախարարության «Էկոն» գիտաարտարական պետական ձեռնարկության, աշխարհագրական ընկերության և ԵԱՆՍ Ինտերնեյշնլի միջոցներով և Լ. Վալեսյանի ղեկավարությամբ արտասահմանում հրատարակվել է ՀՀ և ԼՂՀ ուսումնական վարչական քարտեզը: Առաջին հայացքից պատկերավոր ու բարձր մակարդակով տպագրված այս քարտեզը իրականում իր բովանդակությամբ ու գիտափաստագրական ցածր մակարդակով գրեթե չի տարբերվում նախկինում հրատարակված քարտեզներից: Մի կողմ դնելով գուտ աշխարհագրական բնույթի անճշտությունները, անհրաժեշտ են գտնում ուշադրություն հրավիրել հատկապես այնպիսի կոպիտ սխալների վրա, որոնց մասին արցախյան շարժումից ի վեր անընդհատ խոսում են, քնննադատում, որը սակայն հաշվի չի առնվում քարտեզագիրների կողմից: Քարտեզում տեղ են գտել բազմաթիվ նույնանուն բնակավայրեր, որպիսիք իրականում չկան: Առանձին բնակավայրեր (1989—1990 թթ. տվյալներով գոյություն ունեցած) որսս են թողնված: Տեղ են գտել տասնյակ տարիներ գոյություն չունեցող գյուղեր, զգալիորեն խեղաթյուրված են բնակավայրերի պատմական անունները: Այսպես, պատմական և ոչ մի աղբյուր Ղարաբաղում չի հիշատակում Այգեստան անվամբ գյուղ: Իսկ այստեղ ներկայացված է, այն էլ երեք հատ: Մեկը Մարտակերտի շրջանի Չայլուն (պատմական Գետք), մյուսը՝ Ասկերանի շրջանի Բալուջան (Մեղրագետ), իսկ երրորդը՝ Հաղրութի Քոչքեկը: Նշված է երկու Նորագյուղ, որոնցից մեկը վաղուց լքված գյուղատեղի է, ինչպես Քարագուվար, Ուլուբաբը և այլն, որոնք տեղ են գտել քարտեզում: Բայց ահա չկան Գետին գոմեր (Մարտակերտի շրջան), Վերին Ազներ (Ասկերանի շրջան), Հախտուտ (Ծախունյանի շրջան) գյուղերը և այլն: Մարտակերտի Գյուլաթաղը (Գալլաթաղ) դարձել է Վարդաձոր: Ասկերանի Փիրջամալն էլ պարզվում է նույն անունն է կրում, իսկ Հաղրութի Որթնաշատը (Խաղողի որթ) ստացել է Վարդնաշատ աղավաղված անունը: Մարտակերտի շրջանի Զրաբերդի կողքին հայտնվում է Հաղրութի Զրաբերդը, փոխարինելով Մուլքադարա (Մուլքատեր) գյուղին: Այնուհետև հերթը հասնում է ծաղիկներին, որոնք բնականաբար քարտեզ կազմողների տեսադաշտից չեն վրիպել: Ծուշիի և Ասկերանի շրջաններում իրար հետևից ծարձակում են Ծաղկաձոր անվամբ երկու գյուղեր: Ընդ որում, պարզվում է, որ Ասկերանի շրջանում այդպես է կոչվում Ղշաղ գյուղը, որի պատմական անունը ևս հայտնի է՝ Վահկա (Վաքա), գյուղի մոտ գտնվող գյուղատեղիի անունից: Բացի այդ, Մեյտիշենը դարձել է Խաչեն, Վարազաբունը՝ Հերոսաշեն, Խանաբաղը (Զրվեր)՝ Ոսկեվազ, Արիագետիկը՝ Քարինգ և այլն և այլն:

Վան նաև այլ կարգի սխալներ: Մարտալայի և Լեմինավանի միջև սահմանագատում չկա: Նաև վարչականորեն միացած այդ բնակավայրերը քարտեզում պատկեր-



Պատմա-աշխարհագրական վերոհիշյալ ճշգրտումներից հետո, «Աշխարհացույցի» Արցախը արևելյան, հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերից սահմանակցվում է Ոստիք նահանգին, արևմուտքից՝ Սյունիքին, սահման ունենալով Հակարի-Աղվանո գետը, Ռմբուտյան լեռներն ու Աերկաչիս Սևանի լեռնաշղթան՝ տարածվելով մինչև Տավուշի շրջանի արևելյան սահմանները: Հարավային սահմանը Արաքս գետն է:

Արցախ նահանգի ընդգրկած տարածքը այս սահմաններում կազմում է ավելի քան 15500 քառակուսի կիլոմետր:

Սույն քննությունից հետևցնում եմ, որ Արցախի 12 գավառները դասավորված են եղել հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք, հետևյալ հաջորդականությամբ. Մուխանք, Պիանք, Պարսկանք, Մյուս Հարանդ, Բերդաձոր, Մեծառանք, Հարճլանք, Վայկունիք, Սիսական Ոստան, Մեծկողմանք (Ռուսակ և Ծավդեք գավառներով), Կողթ, Քուստիփառնես:

Փորձ է արվել ճշտորոշելու ոչ միայն գավառների սահմաններն ըստ «Աշխարհացույցի», այլև Արցախ և Ոստիք նահանգների, նրանց գավառների սահմանները՝ ըստ «Աշխարհացույցի»: Դյուրությանը կողմնորոշվելու նպատակով քարտեզի վրա ցույց են տրված ժամանակակից ջրային մակերեսները, որոնք անցյալում գոյություն չեն ունեցել:

Ուսումնասիրությանը կցվում է տվյալ տարածքի սխեմատիկ քարտեզը, որի վրա ճշված են Արցախ և Ոստիք նահանգների, նրանց գավառների սահմանները՝ ըստ «Աշխարհացույցի»: Դյուրությանը կողմնորոշվելու նպատակով քարտեզի վրա ցույց են տրված ժամանակակից ջրային մակերեսները, որոնք անցյալում գոյություն չեն ունեցել:

Եթե տրված հաստատումները վիճարկման տեղիք չեն տա, ի վերջո շտկված պիտի համարել Արցախական աշխարհի պատմական աշխարհագրությունը, որն ունի որոշակի կարևորություն հալոց պատմության մեջ առհասարակ: Իսկ եթե սահմանագծային խնդիրների պարզաբանման ուղղությամբ լինեն նոր ու հուսալի առաջարկներ, հեղինակը շնորհակալությամբ կընդունի դրանք:

ված են 2 կմ հեռավորությամբ: Կարկաս գետի ձախ ափին (Աղդամի շրջանում) «հպարտ կանգնած» Բայլագան անունով բնակավայր իրավանում Աղդամի շրջանում գոյություն չունի: Բայլագանը Աղդամից մոտ 70 կմ հարավ գտնվող Աերկաչիս Ժրանով (Բայլագան) շրջկենտրոնն է: Պետք է գրվեր Բայլաթ, որը մի սովորական փոքրիկ գյուղ է, Աղդամից ոչ թե 36, այլ 17 կմ հեռավորության վրա:

Ո՞ւմ եք զարմացնում մեծարգո պարոններ՝ պրոպագանդելով պատահական ու հակագիտական այս անունները, խցկելով դրանք Արցախի տարածքը: Զե՞ որ դրանցով աղավաղում եք մեր պատմությունն ու աշխարհագրությունը, մեր դիմագիծը, վերջապես մեր էությունն ու ինքնությունը, ջուր լցնելով թշնամու ջրաղացին:

## ԱՐՅԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

Դարեր շարունակ Արցախ ներխուժած այլակրոն, վայրենի խաժամուժ ցեղերը իրենց ճանապարհին ոչնչացրել են ոչ միայն բնակավայրեր ու պատմաճարտարապետական քաղաքաբնակ հուշարձաններ, այլև բնիկ հայկականը վերացնելու նպատակով, թարգմանել-աղավաղել են հայահունչ տեղանունները, դրանք ձևափոխել-հարմարեցրել իրենց լեզվի արտահայտչականությանը: Այդ շարժընթացը առավել մեծ թափ է ստացել հատկապես XVII—XVIII դարերում, ինչպես նաև՝ XIX դարի սկզբներին և խորհրդային իշխանության տարիներին: Քարին տակը դարձել է Դաշալթի, Քարագլուխը՝ Դաշբաշի, Բերդաձորը՝ Ղալադարաի, Խոխանաբերդը՝ Օղլանդալասի, Ծովաստեղը՝ Զավադրիս, Ամարասը՝ Աղ Օղլան, Զրաբերդը՝ Զիլարբուրտ, Ծարոտարը՝ Զերտագ, Ագոխը՝ Ագըլքենդ, Վերի շենը՝ Յուխարի Աղջաքենդ, Սխտորաշենը՝ Ծիխտերսուն և այլն և այլն:

Արցախյան շարժումը հասունացրեց նաև տեղանվանափոխության խնդիրը: Ծավալվեց լայն շարժում, որի նպատակն էր հրաժարվել հալոց բնակավայրերի օտարահունչ անվանումներից: Սակայն, այդ ամենը հիմնականում կատարվում էր հապճեպորեն, կարելի է ասել, ավելորդ ոգևորությամբ, որի հետևանքով Արցախի գյուղերին տրվում են կամայական, պատմության հետ քացարձակապես կապ չունեցող անվանումներ: Ծատ դեպքերում, ուղեկցվելով «սազել-չսազելու» սկզբունքով, առանձին մարդիկ իրենք էին միանձնյա որոշում՝ գյուղերին ինչ անվանումներ տալ, իրենց իրավունք վերապահելով «ուժերը չափելու» նաև տեղանունների ստեղծման, սրբագրման պատասխանատու խընդրում: Իսկ տեղական իշխանությունները ոչ միայն հետևողականություն չեն ցուցաբերել նման գործելակերպը՝ քացառելու համար, այլև, առանձին դեպքերում, հաստատել են անհիմն տեղանունների անվանակոչությունները:

Տեղանունների փոփոխությունների ակտմամբ անհրաժեշտ հետև-  
վողականություն չի հանդես բերում նաև մամուլը՝ պրոպագանդելով  
գյուղերին տրվող հակագիտական անվանումները:

Պետք է հիշել, որ պատմական տեղանուններն անփոփոխ են աղա-  
վաղելով, վերափոխելով կամ արմատից հեռացնելով, մենք վիրավո-  
րում ենք ոչ միայն ժողովրդի ազգային ինքնասիրությունը, խախտում  
նրա ինքնաճանաչողությունը, այլև աղավաղում առաջին հերթին պատ-  
մությունը: Բացի այդ, տեղանունների անհիմն ու կամայական փոփո-  
խությունները հետագայում կարող են նոր դժվարությունների տեղիք  
տալ:

Այդ ամենից խուսափելու համար և տեղանունների ճիշտ ընտրու-  
թյան գործի հաջողության ակտուալություններից ելնելով, ստորև ներկա-  
յացնում եմ Արցախի հանրապետության մի շարք բնակավայրերի  
պատմական անվանումները:

#### ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-ՎԱՐԱՐԱԿՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփա-  
նակերտը հնագույն պատմություն ունի: Քաղաքի տարածքում և նրա  
շրջակայքում կատարված հնագիտական հետազոտությունները վկայում  
են, որ այստեղ մ. թ. ա. III—I հազարամյակում բնակավայր է եղել:  
Հետագա դարերում այժմյան քաղաքի տեղում առաջացել են Վարա-  
րակն, Ներքին Ծեն և Սողոմոնի Ծեն գյուղերը:

Վարարակն գյուղատեղիի մի հատվածում, քաղաքի հյուսիսային  
ձորակի ձախ լանջին պահպանվել են Վարարակն աղբյուրը, (XVII դա-  
րի ոճ) Ս. Աստվածածին եկեղեցին, ինչպես նաև գերեզմանոցը:

XVIII դարի վերջին այժմյան քաղաքի հյուսիս-արևելյան կողմում  
հիմնվում է Ծուշվա խանի ձմեռանոցը՝ Խանեն բաղը (Խանի այգի):  
Տարածքը դառնում է խանի «անձնական» սեփականությունը: Վերջինն  
իրեն է ենթարկում նաև նշված գյուղերի տարածքները, մասնավորա-  
պես Վարարակն գյուղը, որը անվանափոխվում է Խանքենդի՝ խանա-  
պատկան բնակավայր (խանի գյուղ): Բայց սա չի նշանակում, թե այս-  
տեղ ապրում էին խանի ցեղակիցները: Պարզապես Ղարաբաղի ինք-  
նակոչ խաները, վարելով հայաչինջ քաղաքականություն, ձգտում էին  
վերացնել այն, ինչ հայկական էր և իրենց հայեցողությամբ փոխում  
էին հայկական գյուղերի անունները՝ նրանց տալիս թուրքական աղա-  
վաղված անվանումներ:

Հայ պատմագիտության մեջ տարածում է ստացել նաև այն տե-  
սակետը, որ Խանքենդին հիմնադրվել է 1847 թ.՝ որպես զորանոց: Սա-  
կայն ուսումնասիրությունները վկայում են, որ նույնանուն բնակավայր  
գոյություն ուներ դեռևս մինչև XIX դարի 20-ական թվականները, ընդ  
որում՝ բնակվում էին միայն հայեր:

Գյուղը կառավարում էր Դավիթ քյոխվան (գյուղապետ): Ղարա-  
բաղի վերջին՝ Մեհտի Ղուլի խանը նշված բնակավայրը նվիրում է իր  
կնոջը՝ Բադրիջանան-Բեգումին: 1822 թ. նոյեմբերին վերջ է տրվում  
խաների տիրահոջակ իշխանությանը, և Մեհտի Ղուլին փախչում է  
Պարսկաստան: Դարի կեսերին ռուսներն այստեղ զորանոց են հիմ-  
նում:

1923 թ. կազմակերպվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար  
Մարզը, որի կենտրոնը հաստատվում է Խանքենդին՝ նոյեմբերի 23-ին  
վերանվանվելով Ստեփանակերտ:

Պետք է սուել, որ Ստեփանակերտը որոշ առավելություններ ուներ  
Ծուշիի նկատմամբ. ծովի մակերևույթից ավելի ցածր է (միջին բարձ-  
րությունը՝ 837 մետր), քան Ծուշին (1300—1500 մետր), հաղորդակ-  
ցության ուղիները ավելի հարմար էին բարձրավանդակի վրա գտնվող  
Ծուշիի համեմատությամբ, քաղաքը հարմար էր հետագայում երկաթու-  
ղի անցկացնելու համար և այլն: Բայց դրանք չէին այն հիմնական  
պատճառներն ու շարժառիթները, որոնք Ստեփանակերտն ինքնավար  
մարզի մայրաքաղաք դարձրին: Սոյրբեջանի կառավարող շրջանները  
նպատակ ունեին վերջնականապես հայաթափել Ծուշին և այն դարձ-  
նել «իրենց քաղաքը»: Այլապես դժվար թե մարզկենտրոն ընտրվեր  
մի կիսավեր բնակավայր, որն այդ ժամանակ (1923 թ.) 10—15 ամբող-  
ջական շինություններ ուներ և ընդամենը 300 բնակիչ:

Մարզկենտրոն դառնալուց հետո, մեկ տարվա ընթացքում մեծ աշ-  
խատանքներ կատարվեցին: Ծառ տներ վերականգնվեցին, կառուց-  
վեցին նորերը, անցկացվեց էլեկտրականություն, շրջանների հետ հաս-  
տատվեց հեռախոսակապ և այլն: 1924 թ. մարդահամարի տվյալներով  
քաղաքում ապրում էր 2467 բնակիչ (ամբողջ մարզում՝ 114 290):

Դառնալով Լեռնային Ղարաբաղի մարզկենտրոն Ստեփանակերտն  
ամուսն է, դառնում արցախահայության արդյունաբերական, մշակութա-  
յին և ազգային կենտրոն:

1. **ԱՍԿԵՐԱՆ.**— Հիմնադրվել է որպես զորանոց: Ներկայիս ամբողջ կառուցվել է XVIII դարի երկրորդ կեսին՝ խանական ժամանակաշրջանում: Մինչ այդ Ասկերանը հանդիսանում էր «...այն Դարպասը, որտեղից այն ժամանակներում լեռնաշխարհ էին թափանցում թուրքերը: Այնուհետև, Ասկերանը, որ Դարպասի խանության մայրաքաղաք Շուշի տանող դարպաս էր ծառայում, նշանակալի դեր է խաղացել XIX դ. սկզբին, Դարպասի՝ Ռուսաստանին միացման ժամանակաշրջանում և ավելի ուշ...»<sup>1</sup>: Շահեն Մկրտչյանի կարծիքով, Ասկերանը նախկին Մայրաքերդն է<sup>2</sup>:

2. **ԱՐԱՆՉԱՄԻՆ.**— Նախկին Վարազարուն<sup>3</sup> գյուղն է՝ «Բուն Վարազ-Տրդատ իշխանի բնակության տեղին»<sup>4</sup>:

Կարծիք է հայտնվում, որ բնակավայրը եղել է Վարազ-Գրիգոր և Վարազ-Տրդատ իշխանների (VII դար) ամառանոցը<sup>5</sup>: Վերջինիս մասին տեղեկություններ է հաղորդում Մ. Կաղանկատվացին<sup>6</sup>:

3. **ԱՐԿԱԹԱՆՈՒՇԵՆ.**— Անվանումն առաջացել է Երկաթալի ձորի անունից<sup>7</sup>:

4. **ԲՍՂԱՐԱՆ.**— Պատմականը՝ Պարեցիկ<sup>8</sup>, համանուն գետի և լեռան անունից<sup>9</sup>:

5. **ԲՍՆՈՒՋԱ.**— Պատմական անունը՝ Մեղրագետ, համանուն գետի անունից, հիշատակվում է Հայաստանի պատմության պետական

<sup>1</sup> Известия азербайджанского археологического комитета, Баку, 1926, № 2, ст. 9.

<sup>2</sup> Շ. Մկրտչյան, Լեռնային Դարպասի պատմաարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 198:

<sup>3</sup> ՀՊՊԿՍ, ֆ, 56, ց. 1, գ. 2914, թ. 84, Ադո, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում, Երևան, 1907, էջ 206:

<sup>4</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 127:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 134, 255, 266 և այլն:

<sup>7</sup> Մատենադարան, ձեռ. 2734:

<sup>8</sup> ՀՊՊԿՍ, ֆ, 57, ց. 1, գ. 3, թ. 97, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 86, Ադո, նշվ. աշխ. էջ 204, Արցախ, էջ 156 և այլն:

<sup>9</sup> Ղ. Ալիշան, Արցախ, Բազմավեպ, Վեներիկ, 1989, № 1—4, էջ 204, Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 156:

արխիվում պահպանվող եկեղեցական կալվածագրերի ցուցակում (1745 թ.)<sup>10</sup>: Ըստ Ա. Բեկնազարյանցի («Գաղտնիք Դարաբաղի», հ. Ա, ՍՊԲ, 1886, էջ 121)՝ Մեծ Խմբատ:

6. **ԴՍՀՐԱՎ.**— XVII դարում՝ Տարխալ<sup>11</sup>: Հիշատակվում է (նաև Կուչարաշի (Քարագլուխ, Բերդիգլուխ—Ս.Ս.) անվամբ<sup>12</sup>:

7. **ԴՍՇԲՈՒԼԱՂ.**— Պատմական անունը՝ Քարաղբյուր<sup>13</sup>:

8. **ԽՍՆԱԲՍԳ.**— Նախկինում (IX—XVII դարերում)՝ Ջրվեր (նաև Ջրհոր), որը հաստատվում է տեղում կատարված ուսումնասիրություններով և 1667 թ. տվյալներով<sup>14</sup>: Ներկայիս Ոսկեվազ շինծու անվանումը Խանաբաղի հետ ընդհանրապես ոչ մի կապ չունի:

1820-ական թվականների տվյալներով<sup>15</sup> գյուղում բնակվում էր 27 ընտանիք, իսկ 1914 թ. պետական-պաշտոնական փաստաթղթերով Խանաբաղը շրջակա մի շարք բնակավայրերի վարչական կենտրոնն էր (78 ընտանիք, 1107 բնակիչ): Խանաբաղի գյուղական համայնքի մեջ էին մտնում Խրամորթ, Քարագլուխ, Փառուխ, Դլիջբաղ (Իփաջոր), Սարդարաշեն և Նորագյուղ (նախկինում՝ Երիցուշեն) գյուղերը<sup>16</sup>:

9. **ԽՍՆՅՔ.**— Հիշատակվում է նաև Խասկ ձևով<sup>17</sup>: Պատմականը Խանձքն է, խանձել, բառից, նաևավանդ-որ «սա նույն ընդ Խանձիկ գիւղ, յորմէ էր Պետրոս կաթողիկոս Աղուանից (Պետրոս Խանձիկցի—Ս.Ս.)՝ ի կես ժէ դարու»<sup>18</sup>:

10. **ՂԱՐԱԲՈՒԼԱՂ.**— Նախկինում՝ Սևաղբյուր<sup>19</sup>, հիմնված է համանուն աղբյուրի մոտ:

11. **ՍԵՅԳԻՇԵՆ.**— Պետք է լինի Սեյտիշեն: Սեյտին (Սեյտի բեկ) Հասան Ջալալ իշխանի տոհմի շտապիղներից է<sup>20</sup>:

<sup>10</sup> ՀՊՊԿՍ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 97:  
<sup>11</sup> ՀՊՊԿՍ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 113:  
<sup>12</sup> Նույնի ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 519:  
<sup>13</sup> Բազմավեպ, 1989, էջ 204, նախախորհրդային քարտեզներ և այլն:  
<sup>14</sup> ՀՊՊԿՍ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 113:  
<sup>15</sup> Описание Карабахской провинции, составленного в 1823 г., ст. 38.  
<sup>16</sup> Приложение к памятной книге Елисаветопольской губернии, 1914 г., ст. 252.

<sup>17</sup> Г. Кочарян, Нагорный Карабах, Баку, 1925, ст. 49.  
<sup>18</sup> Բազմավեպ, 1989, էջ 213, Ադո, նշվ. աշխ. էջ 204:  
<sup>19</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 93:  
<sup>20</sup> Բ. Ոլորբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, էջ 351—354:



12. **ՍԱՐԳԱՐԱՇԵՆ**.— Վաղ սիջնադարում Յրտաջուր, XVII դարում՝ Նոր շեն<sup>21</sup>: Բնակիչները ներկայիս վայրն են տեղափոխվել XVIII դարում, Նոր շեն բնակավայրից (այժմյան գյուղից 1,5 կմ արևմուտք):

13. **ԶԱՆ ՀԱՍԱՆ**.— Նախկինում՝ Զալալ Հասան (Ներքին Խաչենի Հասան Զալալ իշխանի անունից): «Այժմ Զան Հասան՝ ըստ կըրնատման օրինաց Արցախի»<sup>22</sup>: Ըստ Ծ. Մկրտչյանի՝ Մուսկաց<sup>23</sup>:

14. **ՌԻՆՈՒՅԱԲ**.— Անվանումն առաջացել է Զալալ Մեծ իշխանի (Զալալ Գ) թոռ ու Մեջլիսի որդի Ուլուբեկի (XV դ) անունից<sup>24</sup>: Հիշատակվում է նաև Ուրախաչ անվամբ<sup>25</sup>:

15. **ՔԱՐԱԳՆՈՒԽ**.— 822 և 1267 թթ., տվյալներով՝ Ծիկաքար<sup>26</sup>, XVII—XVIII դարերում՝ Քարագլուխ<sup>27</sup>, XIX դարի կեսերին և խորհրդային իշխանության տարիներին՝ Դաշբաշի<sup>28</sup>:

16. **ՔՅԱՌՈՒԿ**.— Ըստ Ղ. Ալիշանի, Գետիկ անվան աղավաղված տարբերակն է (Գետիկ-Քեթիկ-Քյաթուկ—Ս. Ա.)<sup>29</sup>: Սակայն, գյուղի մոտ, ցայսկան բարեկերտում հիշատակվում է Քեթյուկ լեռը<sup>30</sup>:

17. **ՓԱՌՈՒԽ**.— Ըստ Ղ. Ալիշանի՝ Բարուխ<sup>31</sup>, հիշատակվում է XIX դարի սկզբների ռուս-պարսկական պատերազմի ստիթով և հետագա տարիներին<sup>32</sup>: Հ. Անառյանը գրում է. «Փատուխ Խաղբակյան, որդի Վասակի, եղբայր Պապակի, իշխան Խաչենի, 1282 թ.»<sup>33</sup>:

18. **ՂՇԼԱՂ**.— Պատմական անվանումը՝ Վահկա: Ներկայիս գյուղը ձևավորվել է XVIII դարում, մոտակայքում գտնվող Վաքա (Վահկա)

<sup>21</sup> ՀՊՊԿՍ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 118:

<sup>22</sup> Արցախ, էջ 154:

<sup>23</sup> III. Мкртчян, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1988, ст. 152.

<sup>24</sup> Բ. Ուլուբաբյան, Աղ. աշխ., էջ 305, 307, 314:

<sup>25</sup> Տե՛ս Աղ. ֆոնդը, Нагорный Карабах, ст. 49 և այլն:

<sup>26</sup> Մ. Կաղանկատվացի, Աղ. աշխ., էջ 255, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, 1984, էջ 905:

<sup>27</sup> ՀՊՊԿՍ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 118:

<sup>28</sup> ՀՊՊԿՍ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թ. 464:

<sup>29</sup> Բազմավեպ, 1989, էջ 204:

<sup>30</sup> Տե՛ս Карта Елисаветопольской губернии, 1904 г.

<sup>31</sup> Բազմավեպ, 1989, էջ 189:

<sup>32</sup> Описание Карабахской Провинции в 1823 г., ст. 37, В. Потто, Первые добровольцы Карабага, Тифлис, 1902 г., ст. 41.

<sup>33</sup> Հ. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ե, Երևան, 1982, էջ 192:

բնակավայրից վերաբնակության հաշվին: Այսպիսով, դեռևս 1667 թ.<sup>34</sup> հիշատակվող Վաքան Ղշաղի նախկին անվանումն է:

19. **ՎԱՂՎԱՆ**.— Գուցե Աղվա՛ն: Գյուղատեղի, գտնվում է ներկայիս Խանաբադի տարածքում, հիշատակվում է XVII դարի մի շարք գյուղերի շարքում<sup>35</sup>:

20. **ԲԱՇՔԵՆԿ**.— Գտնվում է Ստեփանակերտից հյուսիս-արևմուտք, նախկինում՝ Ավազուտ<sup>36</sup>:

21. **ՔՅՈՍԱՒԱՐ**.— Նույն տարածքի գյուղերից է Ըստ Ծ. Մկրտչյանի՝ Գալլատուն<sup>37</sup>: Սակայն, թվում է, որ սա Քյատուն կյումեր» (Քյատուն գոմեր) բնակավայրն է, որը հիշատակվում է նախախորհրդային բարեկերտում:

22. **ԴԱՂԳԱՂԱՆ**.— Ըստ Ղ. Ալիշանի՝ Տաղտան<sup>38</sup>: Սակայն, չի բացառվում, որ այն Թաղթուն անվան աղավաղումը լինի:

#### ՇՈՒՇԻԻ ԵՐԶԱՆ

1. **ԶԱՌԻՍԼՈՒ**.— Պետք է լինի Զառիստ<sup>39</sup>:

2. **ԼԻՍԱԳՈՐ**.— «Լիսակորսքի, որ ես զօրանիստ պահապանաց ուսաց»,— գրում է Ղ. Ալիշանը<sup>40</sup>: Սակայն, սա նախկին Թթուջուրն է<sup>41</sup>:

3. **ՄԵԾ ԵՆՆ**.— Պատմական Բերդաձոր բնակավայրն է, որի մասին հիշատակություններ կան մի շարք նյութերում<sup>42</sup>:

4. **ՄԱԼԻՔԵՅԼԻ**.— Ծ. Մկրտչյանը գտնում է, որ սա նախկին Բաղին շեն բնակավայրն է, կապված Մելիք Բաղիի (Բաղրի) անվան հետ (հմմտ. Բովուրխան)<sup>43</sup>:

<sup>34</sup> ՀՊՊԿՍ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 118:

<sup>35</sup> Նույն տեղում:

<sup>36</sup> Տե՛ս Карта Елисаветопольской губернии, 1904 г.

<sup>37</sup> III. Мкртчян, указ. раб. ст. 152.

<sup>38</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 111:

<sup>39</sup> Բազմավեպ, 1989, էջ 213:

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> Աղ, Աղ. աշխ., էջ 269:

<sup>42</sup> Նույն տեղում, Г. Кочарян, Нагорный Карабах, ст. 50, Описание Карабахской провинции в 1823 г., ст. 12, Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 665: Սակայն, բառարանագետները Բերդաձորը նույնացրել են Կիրով գյուղի հետ, որը Հին Ծենն է:

<sup>43</sup> III. Мкртчян, Указ раб., ст. 152.

ՀԱՂԻՐՈՒԹԻ ԵՐԶԱՆ

1. **ԱՐՓԱԳՅԱԴՈՒԿ.**— Պատմական անունը՝ Արփագետիկ, նույն անուն լեռան անունից<sup>44</sup>: Ըստ Ծ. Մկրտչյանի՝ Քարինգ:
2. **ԲԼՈՒԹԱՆ.**— Նախկին անունը՝ Պերթանց<sup>45</sup>:
3. **ԳՈՒԳՈՒԿՉԻ.**— Պատմականը՝ Կիրաթաղ<sup>46</sup>:
4. **ՄՅՈՒԼՔԱԳԱՐԱ.**— Քանի որ այս գյուղն անհիմն կերպով վերակոչվել է «Զրաբերդ» (առանց ջրի... և ավելացել Մարտակերտի Զրաբերդին— Ս. Ս.), տեղեկացնենք, որ անվանումը կոչվում է Մուլքատեր: Մուլքը գյուղացիների կողմից ֆեոդալին վճարվող տուրքն է՝ հողային ռենտան: Մուլքատերերը մուլքատու գյուղի հողերի նկատմամբ որևէ տնօրինություն չէին անում, չէին խստնվում հողաբաշխման գործին, բայց իրավասու էին գյուղի վճարելիք տուրքը (մուլքը) տնօրինել իրենց հայեցողությամբ<sup>47</sup>:
5. **ԷԴԻՇԱ.**— Իսկական անունը՝ Որթնաշատ<sup>48</sup>:
- 6, 7. — **ԷԴԻԼՈՒ** և **ՀԱԽՈՒԼՈՒ** գյուղերը XVIII—XIX դարերում կրում են Իտեղեցիք և Ըխեցիք անունները<sup>49</sup>:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՐԶԱՆ

1. **ՄԱՐՏՈՒՆԻ.**— Հոնաշեն (նույնանուն գետի անունից)<sup>50</sup>:
2. **ՂԱՎԱԽԱՆ.**— Կավահան բառի խեղաթյուրված ձևը, առաջացել է Կավահանք բառից<sup>51</sup>:
3. **ՂԱՐԱԳԱՂՈՒ.**— Քոչվոր թուրքերի վերակոչությունը: Նախկինում (XVIII—XIX դարերում)՝ Վարանդա<sup>52</sup>:
4. **ԽԵՐԽԱՆ.**— Գյուղի հիմնադրումը կապվում է հայազգի իսլամ խեղճանի անվան հետ: Նրա գերեզմանը (1286 թ.) գտնվում է Կոշիկ անապատի (Քոլատակից արևմուտք) գերեզմանոցում<sup>53</sup>:

<sup>44</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վեհեթիկ, 1893, էջ 270, 271:  
<sup>45</sup> Արցախ, էջ 70, Ադր, ճշվ. աշխ. էջ 231:  
<sup>46</sup> Ադր, ճշվ. աշխ., էջ 231, Нагорный Карабах, ст. 48.  
<sup>47</sup> Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 625:  
<sup>48</sup> Արցախ, էջ 69:  
<sup>49</sup> ՀՊՊԿՍ, ֆ. 57, ց. 1, գ. 3, թ. 72, Արցախ, էջ 71:  
<sup>50</sup> Нагорный Карабах ст. 49.  
<sup>51</sup> Մեհյան, № 4, 19. 05. 92 թ.:  
<sup>52</sup> Нагорный Карабах ст. 49.  
<sup>53</sup> Դիվան, V, էջ 29:

5. **ԱՎԳՈՒՌ.**— Հիշատակվում է նաև Տաքիր, Տակիր աներով<sup>54</sup>:

6. **ՎԵՐԻՆ ԹԱՂԱՎԱՐԳ.**— Սա Խաչիկ վարդապետ Դադյանի ծննդավայրն է, ներկայացվում է Զարդանաշեն անվամբ<sup>55</sup>:

7. **ՔԱՐԱՀՈՒՆՉ.**— Պատմական անվանումը՝ Քարվեհ<sup>56</sup>:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԵՐԶԱՆ

1. **ՉԱՅԼՈՒ.**— Այժմ՝ կամայականորեն անվանված Այգեստան, Յ-րդ Այգեստանը Արցախում, Բալուջա և Քոչբեկ գյուղերից հետո: Իրականում Գեաթ բնակավայրի թուրքերեն թարգմանությունն է:
2. **ԴԱՍՏԱԳՅՈՒԼ,** նաև Դաստագիր<sup>57</sup>: Ծիշող Դաստակերտն է<sup>58</sup>:
3. **ԼՅՈՒՍԱՍԱՉ.**— Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Վարնկաթաղ<sup>59</sup>: Սակայն, սա ամենայն հավանականությամբ Վարդանաթաղ գյուղն է (XIII դար), որի մասին ակնարկում է Ղ. Ալիշանը<sup>60</sup>:
4. **ՈՒՄՈՒԳԼՈՒ.**— Նախկին Ականան է, որի մասին որպես ամրոց-բնակավայր հիշատակում է Կ. Գանձակեցին<sup>61</sup>: Հետագայում թուրքերը ձևափոխել-դարձրել են Արխանա: Այլ նյութերում՝ Ականակերտ<sup>62</sup>:
5. **ԹԲՂՈՒ.**— Աղվեն (Աղուան), գյուղի մոտ գտնվող ամրոցի անունից, հիշատակում է Մ. Բարխուտարյանցը<sup>63</sup>:
6. **ԹԱԼԻՇ.**— Պատմական անվանումը՝ Ուտեկան, հիշատակում է Մ. Կաղանկատվացին<sup>64</sup>:
7. **ՄԻՆԳՐԵԼՍԿ.**— Նախկինում՝ Քնքաձոր, որի մասին տեղեկություններ է հաղորդում Մ. Բարխուտարյանցը<sup>65</sup>:

<sup>54</sup> Բազմալեպ, 1989 թ., էջ 213, Нагорный Карабах, ст. 49.

<sup>55</sup> Տե՛ս ՀՊՊԿՍ-ի 319-րդ ֆոնդը (ց. 1, գ. 9), Описание Карабахской провинции, составленного в. 1823 г. ст. 176.

<sup>56</sup> Մ. Կաղանկատվացի ճշվ. աշխ. էջ 53, 61:

<sup>57</sup> Нагорный Карабах, ст. 50.

<sup>58</sup> Մ. Կաղանկատվացի, ճշվ. աշխ., էջ 261, Արցախ, էջ 235, Ադր, էջ 209

և այլն:

<sup>59</sup> Արցախ, էջ 225:

<sup>60</sup> Բազմալեպ, 1989, էջ 199:

<sup>61</sup> Կ. Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 359:

<sup>62</sup> Нагорный Карабах, ст. 51, Հասան Ջալալեանց Եսայի, Պատմություն համա-  
- ном Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 38:

<sup>63</sup> Արցախ, էջ 198, 425:

<sup>64</sup> Մ. Կաղանկատվացի, ճշվ. աշխ., էջ 8, 278:

<sup>65</sup> Արցախ, էջ 224:

8. **ԻՄԵՐԵԹ-ՔԵԱՐԱՎԵՆԳ.**— Դադի վանքի կալվածագրերում՝ Կեարք<sup>66</sup>, հիշատակվում է շրջակայքում գտնվող մի շարք գյուղերի շարքում (Չափար, Նորշեն, որը գտնվում է Չափարից հարավ, Խարավանք և այլն): Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Խոտորաշեն<sup>67</sup>:

9. **ՋԱՆՅԱԹԱՂ.**— Ծիշող Ճանկաթաղն է, որը հիշվում է XVIII դ. 20-ական թթ. իրադարձությունների ժամանակ<sup>68</sup>: «Ճանկաթաղ կամ ըստ օտարահնչին ձայնին՝ Ջանկաթաղ»<sup>69</sup>:

10. **ԳՅՈՒԼՅԱԹԱՂ.**— Պետք է լինի Գալլաթաղ<sup>70</sup>:

11. **ՄԱՐԱՂԱ.**— Նշվում է Ղազարիս (Կազարիս) ձևով<sup>71</sup>:

12. **ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱԳՈՄԵՐ.**— XIX դարում Արոյությունաշեն և Կարմիր քար (Կարմրաքար— Ս. Ս.)<sup>72</sup>:

13. **ԿԻՉԱՆ.**— Հիշատակվում է նաև Մեղրածառ անվամբ<sup>73</sup>:

14. **ՆԱՐԵՇՏԱՐ.**— Ղ. Ալիշանը Գանձասարի շրջակայքում (Նարեշտարի մոտակայքում) նշում է XIII դարի մի շարք բնակավայրեր, որոնց մեջ Նորշենական (Նորշենակն, Շենակն— Ս. Ս.) գյուղը<sup>74</sup>: Կարելի է կարծել, որ վերջինս Նարեշտարի նախկին անունն է:

15. **ՋԱԳԼԻԿ.**— Նախկինում՝ Փիփ<sup>75</sup>: Բնակիչները այստեղ են տեղափոխվել Հին Փիփ բնակավայրից (Շամխոր գետի աջ ափին), որտեղ պահպանվող եկեղեցու արձանագրությունը վկայում է նույնանուն բնակավայրի գոյության փաստը XVII դարում<sup>76</sup>:

16. **ՉԱՐԵՔՏԱՐ.**— Դադի վանքի կալվածագրերում (տե՛ս Լեռ, նշվ. աշխ. էջ 152) գյուղը կրում է Խոթք անունը, իսկ նախախորհրդային քարտեզներում (1904, 1907, 1912 թթ.)՝ «Չարախոր» (Չաղանտա՞ր):

<sup>66</sup> Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, Ջամրո, Վաղարշապատ, 1873, էջ 283:

<sup>67</sup> Արցախ, էջ 202:

<sup>68</sup> Армяно-русские отношения... Т. 2, ч. 2, Ереван, 1967, ст. 295:

<sup>69</sup> Արցախ, էջ 214:

<sup>70</sup> Նույն տեղում, էջ 216:

<sup>71</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 87:

<sup>72</sup> Արցախ, էջ 190, Փորձ, Տիֆլիս, 1880, № 5, էջ 156, Ադո, նշվ. աշխ. էջ 209,

Нагорный Карабах, ст. 51. (վերջին երկուսում ներկայացվում է բարբերեն թարգմանությամբ):

<sup>73</sup> Յ. Թօփնեան, ցուցակ ձեռագրաց..., մաս Բ, Վաղարշապատ, 1900, էջ 72:

<sup>74</sup> Բազմավեպ, 1989, էջ 199:

<sup>75</sup> Нагорный Карабах, ст. 51:

<sup>76</sup> Արցախ, էջ 300—301:

1. **ԳՅՈՒԼԻՍՏԱՆ.**— 1201 թ. տվյալներով (համաձայն արձանագրությունների)՝ Գոլաստյան կամ Գոլաշտյան (ըստ Ղ. Ալիշանի՝ նաև Գոլաստան)<sup>77</sup>:

2. **ՄԱՆԱՇԻԳ.**— Նախկինում՝ Մանուշ, Մանուշեն, Մանուշեցիք անուններով<sup>78</sup>: Թողան գյուղի մատուղը ըստ արձանագրության, 1890 թ. նորոգել են Մանուշեցիներ Ղևոնդ, Ավետիս, Սահակ, Դանիել, Սարգիս Ալեքսանյանցները<sup>79</sup>:

3. **ԷՐՔԵՋ.**— Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Էրքաջ<sup>80</sup>:

4. **Պատմական ՊԱՐԻՍ** գյուղը հաճախ սխալմամբ ներկայացվում է Բարիս, Բորիս ձևերով: Մ. Գոշը գրում է. «ի քաղաքն Բարտաա, ի գեաղջէ որ կոչի Պարիս»<sup>81</sup>:

5,6. **ԿԱՐԱՉԻՆԱՐԸ** Հիշատակվում է Սեվսոս անվամբ<sup>82</sup>, իսկ **ՉԵՅՎԱՆ**՝ պատմական Ջալե (Ծավղեք) բնակավայրն է<sup>83</sup>:

7. **ԲԱՂՈՒՂԱՅԱ.**— Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Քարահունջ<sup>84</sup>:

1. **ՔՅԱԼԲԱՋԱՐ.**— Նախկինում Քարվաճառ: Պատմական աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 1402 թ.<sup>85</sup>, իսկ հետո՝ Դադի վանքի 1661 թ. կալվածացուցակում<sup>86</sup>: Քարվաճառ անվամբ գավառ երբևէ չի եղել: Այն մի սովորական գյուղ էր, երբ 1930 թ. օգոստոսի 8-ի որոշմամբ դարձավ նորաստեղծ շրջանի վարչական կենտրոնը<sup>87</sup>:

2. **ՅԱՆՇԱՂ.**— Գյուղն այս անունով հիշատակվում է 1662 թ. մի

<sup>77</sup> Գիվան, V, էջ 130, Ղ. Ալիշան, Արցախ, էջ 37, 50:

<sup>78</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 88:

<sup>79</sup> Արցախ, էջ 252:

<sup>80</sup> Նույն տեղում, էջ 250:

<sup>81</sup> Ղ. Ալիշան, Հայաստանում, էջ 387:

<sup>82</sup> Բազմավեպ, 1988, № 1—4, էջ 247:

<sup>83</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 27—31:

<sup>84</sup> Արցախ, էջ 250:

<sup>85</sup> Մատենադարան, ձեռ. № 3578:

<sup>86</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4:

<sup>87</sup> Административно-территориальное деление Аз. ССР, Баку, 1964, ст. 63:



ձեռագիր հիշատակարանում<sup>88</sup>, ինչպես նաև՝ 1763 թ.<sup>89</sup> և հետագայում: Իսկ թե՛ ավելի վաղ ի՞նչ անուն ուներ՝ տեղեկություններ չունենք: Միայն հայտնի է, որ այն երբեք Խոնթակաբակ անունը չի կրել, ինչպես ներկայացված է օրերս լույս տեսած «Քարվաճառի շրջանի հուշարձանները» քարտեզում (հեղինակ՝ Հ. Սիմոնյան, տեղանունների վերականգնումը՝ Հ. Կարագոզյանի, մեկենաս՝ LINCY FOUNDATION, ստորագրությամբ՝ հուշարձանների պահպանության վարչության համահավաքի խմբագրություն և «Գանձասար» աստվածաբանական կենտրոն): Խոնթակաբակը հիշատակվում է Սո. Օրբելյանի կազմած Սոդք գավառի գյուղերի ցանկում<sup>90</sup>, որն, ստանց որևէ հիմքի, կամայականորեն ներկայացված է իբրև Յանշաղի պատմական անուն: Բացի այդ, 906 թ., Տաթևի վանքի նավակատիքի ժամանակ, Սմբատ Ա Բագրատունի թագավորը այս գյուղը նվիրել է հիշյալ վանքին: Հետագայում էլ Խոնթակաբակը գրանցված է եղել Սյունիքի արքեպիսկոպոսական «Քեօթուկ» կոչված մատյանում (1513 թ.)<sup>91</sup>:

3. **ԲԱՂՐՍԱՂ.**— Սո Օրբելյանի մոտ նշված Ամեռնափոր<sup>92</sup> բնակավայրը, որը Մաքենյաց վանքի (Վարդենիսի շրջան) արձանագրության մեջ հիշատակվում է Անմեռ անվամբ, վերոհիշյալ քարտեզում դարձել է Բաղրասղ գյուղի պատմական անունը: Այնինչ Բաղրասղի պատմական անունը հայտնի է Դադի վանքի կալվածացուցակից, որտեղ իրար հետևից ներկայացվում են «Լև, Եանշաղ, Բարսեղի շեն...» գյուղերը<sup>93</sup>: Այսպիսով, Բաղրասղը Բարսեղի շեն գյուղն է, որը քարտեզագրի կամքով դարձել է Ամեռնափոր: Ի դեպ, կամայականորեն Ամեռնափոր է դարձվել նաև Օմարի լեռնանցքը (նաև լեռնագագաթը):

4. **ԹԱԼԱ.**— Գտնվում է Դադի վանքի մոտ: Նախախորհրդային քարտեզներում այդ անունով գյուղ չի հիշատակվում: Սակայն, նկատի ունենալով, որ այն գտնվում է Ծաղկունք լեռան տակ, չի բացառվում, որ Թալան պատմական Ծաղկունքը լինի: Մնում է ավելացնել, որ վերջերս լույս տեսած հուշարձանների հիշյալ քարտեզում գյուղը կրում է Ծախաթաղ անունը, որը, սակայն, Սոդքի բնակավայրերից է:

<sup>88</sup> «ՌՃԺԱ. թ. լիշատակ է բարեմիտ Յուրին, որ կողակից էի Ասագակին ի երկրէն Ծարսայ ի գեղջէն Եանշաղէն» (Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 221):

<sup>89</sup> Ջամբո, էջ 283:

<sup>90</sup> Սո. Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 398:

<sup>91</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 794:

<sup>92</sup> Սո. Օրբելյան, նշվ. աշխ. էջ 397:

<sup>93</sup> Ջամբո, նույն տեղում:

5. **ՔԵՇԻՑ-ՔԵՆՊ.**— Ներկայումս գյուղատեղի է, նախկինում կրել է Երիցուշեն<sup>94</sup> անունը:

6. **ԲԱՂՐԻԻ.**— Նույնպես Դադի վանքի մերձակա գյուղերից է: Այս բնակավայրի մասին ձեռագիր հիշատակարաններում տեղեկություններ չեն պահպանվել, սակայն Ելիզավետպոլի նահանգի 1904 թ. քարտեզում գյուղի տեղում գրված է «Բեզարյան աղբյուր», իսկ 1880-ական թվականների տվյալներով այստեղ հիշատակվում է Բազիրգյան բուլաղ գյուղը<sup>95</sup>: Բազիր (պարս., թուրք.) նշանակում է Կտավհատ: Հետևաբար՝ Կտավհատի աղբյուր կամ պարզապես Ջիթահանք:

Նշված քարտեզում այս գյուղը կրում է Լանջիկ «համեստ» անունը:

7. **ԲԱՂՂՈՒՓԵՅԱ.**— Ներկայումս գյուղատեղի, գտնվում է Դադի վանքի մոտ, Թարթառի ձախ ափին: Պատմական անունն է Իգաձոր (Այգեձոր), որը հիշատակվում է գյուղից արևմուտք գտնվող Աստվածածին վանքի արձանագրություններում (13 դ.)<sup>96</sup>:

8. **ՎԱՆՔ.**— Պատմական անունը՝ Խոյթ<sup>97</sup>, ու շ միջնադարում՝ Խոթալան<sup>98</sup>: Վանք անունով գյուղ կա նաև Քարվաճառի շրջանի հարավակողմում, որին կծանոթանանք ստորև:

9. **ԼՄՁԻՆ.**— Հնում Հավքախաղաց համանուն լեռան և ամրոցի անունից<sup>99</sup>: Ու շ միջնադարում ըստ էության հիշատակվում է նաև Նավի աղբյուր<sup>100</sup> անվամբ, գյուղի մոտ գտնվող աղբյուրի անունից, որը վերափոխվելով, այժմ կրում է Նովուտափի աղբյուր<sup>101</sup> անունը:

10. **ԱՂԿԱՅԱ.**— Նշված քարտեզում՝ «Սիպտակ ժայռ»:

11. **ՄՍՐՋՈՒՄՍԿ.**— Հուշարձանների քարտեզում այս գյուղը կրում է շինծու «Հոնջենք» անունը: Իրականում Մարջունակի պատմական անունը հայտնի է, 1729 թ. մի ձեռագիր հիշատակարանում ներկայացվելով Մրջման ձևով («Ես Մրջմանցի տեր Մելիքսեթի որդի Մար-

<sup>94</sup> Ջամբո, նույն տեղում, Լեռ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 152 («Ցուցակ կալվածու վանքոեցի Ղարաբաղու վիճակի, կազմեալ 1854 թ. օգոստոսի 23-ին»):

<sup>95</sup> Փորձ, Տիֆլիս, 1880, № 5, էջ 160:

<sup>96</sup> Լրաբեր, 1989, № 7, էջ 89:

<sup>97</sup> Դիվան, V, էջ 203, 216, Լեռ, նշվ. աշխ., էջ 153:

<sup>98</sup> Ջամբո, նույն տեղում, Արձագանք, 1892, № 111:

<sup>99</sup> Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 266, Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 211:

<sup>100</sup> Դիվան, V, էջ 216, Լեռ, նշվ. աշխ. էջ 154:

<sup>101</sup> Տե՛ս Карта Аз. ССР и Нагорно-Карабахская АО, К—38—141—г, 1975 г.

կուրս...թվն ՌՃՀԸ էր»<sup>102</sup>: Ըստ կալվածացուցակի՝ Միրչանց<sup>103</sup>, հավանաբար այդ տոհմի անունով:

12,13. **ՋՈՄԱՐԴ, ՉԱԼԻՇԵՆ.**— Հավաքողացի մոտ, նրա արևմտյան կողմում գտնվող բնակավայրեր են: Եթե առաջինը մինչև վերջերս բնակեցված էր, երկրորդը (Չալիշենը) վաղուց լքված է: Երկու բնակավայրերն էլ իրար մոտ են և եթե առաջինը նույն անվամբ, ստույգ չի հիշատակվում աղբյուրներում, ապա Չալիշենի մասին տեղեկացվում է հիշյալ կալվածացուցակում՝ «Չալի շեն (տճ. Չալիքենդի)» անուններով<sup>104</sup>: Մ. Բարխուտարյանցը այս գյուղին Գետամեջ<sup>105</sup> անունն է տալիս, նկատի ունենալով նրա տեղադրությունը: Իմ կարծիքով այս երկու տեղանունները (Ջոմարդ, Չալիշեն) կապվում են Դադի վանքի 1307 թ. արձանագրության մեջ հիշատակվող Ջոլբեկանց (կալվածագրերում՝ Չոլբեկանց)<sup>105</sup> բնակավայրի հետ:

14. **ՔԻԼԻՍԱԼԻ.**— Այսինքն՝ Եղցատեղ:

15. **ԳՅՈՒՋԻՅՈՒԲՈՒՎԱՂ.**— Հավանաբար Կունի աղբյուր (փոքր աղբյուր), նկատի ունենալով, որ բնակավայրը գտնվում է Կիցու (Օկիցուչայ) գետակի մոտ:

16. **ԿԱՐԱԳՅՈՒՆԵ.**— Գտնվում է Գյուզլյուբուլաղից մոտ երեք կիլոմետր հարավ, Թուրթուրի աջ ափին և համապատասխանում է Մ. Բարխուտարյանցի հիշատակած «Սևանդ (Սև հանդ)» բնակավայրին<sup>107</sup>: Կարագյունն անվամբ մեկ այլ գյուղ տեղադրված է շրջանի հյուսիսակողմում, որին կծանոթանանք ստորև:

17—19. **ՉԱՅՔԵՆԴ, ՍԸՆԸԼԻՔԻԼԻՍԱ, ԲԱՇՔԵՆԴ.**— Գտնվում են Թարթառի աջակողմյան հովտում: Թարգմանությանը Գետաշեն, Հանգած եղջի և Բարձրաշեն: Վերջինս հուշարձանների քարտեզում ներկայանում է «Բաշուք» անվամբ, որը սակայն գտնվում է Վարդենիսի շրջանում, Ջոդի մոտ:

20. **ՍԱՐԸԳՅՈՒՆԵ.**— Գտնվում է Գետաշենից 2 կմ արևմուտք, թարգմանությանը՝ Օիկահող:

21. **ՔԵՉԻԼԻԳԱՅԱ.**— Գտնվում է Թուրթուրի Այծաջուր վտակի վրա, Մրչման գյուղից հարավ արևմուտք: Հիշատակվում է նաև Քեչի-

<sup>102</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 221:

<sup>103</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 152:

<sup>104</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>105</sup> Արցախ, էջ 453:

<sup>106</sup> Դիվան, V, էջ 206, 216, Լեո, նշվ. աշխ., էջ 154:

<sup>107</sup> Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 403, 453:

լի<sup>108</sup> անվամբ: Հիշյալ քարտեզում Քեչիլիղայա գյուղի որպես պատմական անուն նշված է «Եղջերուենիք»: Սակայն, քեչի՝ այծ, դայա՝ ժայռ է նշանակում (այսինքն՝ Իծաքար): Այսպիսով, այժմ ու եղջերուն հարկ չկար շփոթելու, առավել ևս, որ Եղջերվենիքը գտնվում է Սյունիք աշխարհի Սողք գավառում և ըստ հին հարկացուցակի (XIII դ.) պատկանում էր Տարթևի վանքին<sup>109</sup>: Քարվաճառի շրջանում կա Եղջերվագում անվամբ գյուղ, որին կանոնադառնանք հաջորդ էջերում:

22. **ՂՈՒՇՅՈՒՎԱՍԻ.**— Հուշարձանների քարտեզում այս գյուղի անունը թարգմանվել-դարձել է «Հավաթաղ»: Սակայն, XIX դարի վերջի տվյալներով<sup>110</sup> և նախախորհրդային քարտեզներում<sup>111</sup> այս տեղամասում առկա են Ղոշունալիլար և Ղոշուաջ (Ղոշոաջ) անուններով բնակավայրեր: Բոլոր դեպքերում, դուշն ու դոշունը տարբեր բաներ են: Ղոշոաջը ենթարկելով իմաստային թարգմանությանը, կստանանք Ջորաց քար անունը (հմմտ. Սիսիանում՝ Ղոշունոաջ— Ջորաքար): Բայց արդյո՞ք սա աղբյուրներում հիշատակվող Կոապաշտոց տեղավայրը չէ:

23. **ԱԼՄԱԼԵԿ.**— Գտնվում է Ղոշունավալից արևելք, Թուրթուր գետի վրա: Պատմական անունը՝ Խնձորեկ<sup>112</sup>:

24. **ՄՈՋՔԵՆԴ.**— Պատմականը՝ Մոս<sup>113</sup>:

25. **ՖԱՅԱԼԻՍԱ.**— Ինչպես շրջանի գրեթե բոլոր թուրքացված գյուղանունները, սա ևս պատմական անցյալ չունի: Սակայն, առանձին քարտեզներում «Ղզլվանք» հիշատակությունը վկայում է, որ գյուղը նախկինում կրում էր այդ անունը, որը թարգմանաբար կնշանակի «Կարմիր վանք» (Կարմրավոր): Հուշարձանների քարտեզում որպես Ֆաթալիլար գյուղի պատմական անուն գրված է «Խոզենեկ»: Սակայն, հարկ է նշել, որ Խոզենեկ անվամբ գյուղ (որը հիշատակվում է նաև Խոզինակն և Խուսիհակն անուններով) ընդհանրապես գոյություն չի ունեցել: Դադի վանքի 1241 թ. արձանագրության մեջ<sup>114</sup> և այլ աղբյուրներում հիշատակվող Խոզենեկ անունը վերաբերում է տեղավայրի և ոչ բնակավայրի: Այն գտնվում է Քարվաճառի և Մարտակերտի շրջանների սահմանագծում՝ Խաչեն գետի ակունքի շրջանում (այստեղից էլ

<sup>108</sup> Տե՛ս Карта Елисаветопольской губернии, 1904 г.

<sup>109</sup> Տեղանունների բառարան, հ. 2, էջ 191:

<sup>110</sup> Փորձ, 1880, № 5, էջ 160:

<sup>111</sup> Карты Елисаветопольской губернии, 1904, 1912 гг.

<sup>112</sup> Ցուցակ ձեռագրաց, Ա. Երևան, 1965, ձեռ. № 3647, Ջամբո, էջ 283 և այլն:

<sup>113</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև 1904, 1907 թթ. քարտեզները:

<sup>114</sup> Դիվան, V, էջ 202:

Խաչինական) և համապատասխանում է ներկայիս Կաբանդայա (Խոզա-  
ժաղ) կամ Կաբանչայ (Խոզագետ, Խոզինական) անունն ունեցող լե-  
ռանը: Հուշարձանների քարտեզում Կաբանդայան դարձել է «Կավան  
լեռ», կապվելով կավի հետ:

26. **ԿԱՐԱԳՅՈՒՆԵ.**— Գտնվում է Ջոմարդից հյուսիս-արևմուտք:  
Ելնելով տվյալ տարածքի պատմաաշխարհագրական քննությունից<sup>115</sup>,  
գտնում եմ, որ այստեղ պետք է փնտրել Դադի վանքի կալվածացուցա-  
կում հիշատակվող «Ողն» տեղավայրը<sup>116</sup>, որն էլ պետք է համապա-  
տասխանի հին Հդերկ<sup>117</sup> բնակավայրին, որտեղ VII դ. սկզբին Գեղա-  
մա երկրից եկավ ունն ճգնավոր (անապատական) Հովսեփը և ծերունի  
եպիսկոպոս Միհրի օրհնությանը կառուցեց եկեղեցի: Կարագյունեին  
վերագրելով պատմական Հդերկ բնակավայրը, միաժամանակ չեմ բա-  
ցատում այստեղ գտնվող Հանգած եղցի և Եղցատեղ բնակավայրերը:

27, 28 **ԱԲԳՈՒՍՈՒՇԱՂԻ, ՔԱՐԱԶԱՆԻ.**— Նշված բնակավայ-  
րերից մոտ 2 կմ հարավակողմում ձգվող «Բարածաշոյի» կամ «Սև քար»  
լեռնաշղթայի սուկայությունն ենթադրել է տալիս Արդուլաուշադի-Քա-  
րաջանլի գյուղերի նախկին անունները առընչելու նշված լեռան հետ և  
վերականգնելու այդ բնակավայրերի պատմական անվանումները:

Հարկ է նշել, որ Մ. Բարխուտարյանը այս կողմերում հիշատա-  
կում է Սևքար<sup>118</sup> գյուղը, որը համապատասխանում է Արդուլաուշադիին:

29. **ԱՍՐԻԿ.**— Ըստ Մ. Բարխուտարյանի՝ Իսրայելի գյուղ<sup>119</sup>:  
Գտնվում է Արդուլաուշադիից հարավ-արևելք, Թուրխուի ձախափնյա-  
կում:

30. **ԱՂԶԱՔԵՆԴ.**— Գտնվում է նույն վայրում: Հուշարձանների  
քարտեզում թարգմանվել-դարձվել է «Սիպտակ շեն», որը, սակայն, աղ-  
բյուրներում հիշատակվող Սևաշուր<sup>120</sup> բնակավայրն է, նկատի ունենա-  
լով նաև ոչ միայն այն հանգամանքը, որ գյուղը գտնվում է նույնանուն  
գետակի վրա, այլև տվյալ վայրում հիշատակվող մի շարք բնակավայ-  
րերի շարքում: Սպիտակ շենը վերաբերում է մեկ այլ Աղջաքենդի, որը  
գտնվում է ներկայիս Թագաքենդի արևմտյան կողմում, Խաչենագետի  
ակունքի շրջանում<sup>121</sup>:

<sup>115</sup> Ղ. Աղիշան, Արցախ, էջ 25:

<sup>116</sup> Դիվան, V, էջ 216, Լեռ, նշվ. աշխ., էջ 154 և այլն:

<sup>117</sup> Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 217—218:

<sup>118</sup> Արցախ, էջ 452:

<sup>120</sup> Ջամբո, էջ 288, «Ար» 1995, № 9:

<sup>121</sup> Արցախ, էջ 452:

31. **ՕՐՈՒՋՈՒ.**— Պատմական անունը Հալուն (Ալուն)<sup>122</sup>:

32. **ՉՈՐՄԱՆ.**— Նախախորհրդային քարտեզներում՝ նաև Չոր-  
ման, Չիրման, որն ըստ էության համապատասխանում է նախկին Ծիր-  
մանանց<sup>123</sup> բնակավայրին:

33. **ՉՈՐԱՆԿԵՐՍԽՄԵԶ.**— Հուշարձանների քարտեզում՝ «Հովվա-  
շեն»: Սակայն, սա նշված Չորմանի աղավաղումն է և չորանի հետ  
բացարձակապես կապ չունի: Օրինակ, 1904 թ. քարտեզում գրված է  
Չորբան՝ «Չորբան— գերեկեմաս», որը կարելի է վերծանել որպես  
Վերին Չորման (Վերին Ծիրմանանց): Ի դեպ, թուրքերը այնքան մեծ  
«հարգանք» են տածել չորանի նկատմամբ, որ վերափոխել են անգամ  
գյուղի մոտ գտնվող Եղցաշեն (հին քարտեզներում՝ Քիլիսալի) լեռան  
անվանումը, այն դարձնելով Չորանդաղ:

34, 35. **ԹԱԶԱՔԵՆԴ, ԵՆԻՔԵՆԴ.**— Թարգմանությանը երկու գյու-  
ղերն էլ՝ Նոր շեն: Առաջինը հուշարձանների քարտեզում դարձվել է  
«Նորավան», որի կարիքը չկար, իսկ երկրորդը, տարածքում պատմա-  
կան հուշարձաններ չհայտնաբերվելու պատճառով չի հիշատակվում:  
Իմ կարծիքով Ենիքենդը աղբյուրներում հիշատակվող Ծաղիկանց բնա-  
կավայրը պետք է լինի, որի մոտ, նրա հարավակողմում վեր է խոյա-  
նում Չիչակլի (Ծաղկունք) լեռը: Ավելի պարզություն մտցնելու նպա-  
տակով, ներկայացնենք Դադի վանքի արձանագրության համապա-  
տասխան մասը. «...Մեք չորս եղբարքս տուաք մեր վանորէիցս... Նախ  
աղբիւրովն, Բերդաքարովն, Կոապաշտոցովն, Ողնովն, Խոզենակոց  
մեծ այգին՝ Մանանաձորովն, Ծաղիկանց, Եզնարածանց...»<sup>124</sup>:

Այստեղ նշված Նավի աղբյուրն ու Բերդաքարը գտնվում են Թուր-  
խու գետի աջ ու ձախ կողմերում, ընդ-որում, Բերդաքարը համապա-  
տասխանում է ներկայիս Ջոմարդ գյուղից հյուսիս-արևմուտք գտնվող  
ամրոցին (քարտեզներում՝ Բերդ): Կոապաշտոցը, ինչպես նշվեց, հա-  
մապատասխանում է Ջորաքարին, Խոզենակաց մեծ այգին՝ բնակա-  
նաքար պետք է լինի Խոզենակն լեռան մոտակայքում, որից հարավ,  
Չիչակլի (Ծաղկունք) լեռան մոտ՝ Ծաղիկանց բնակավայրը: Նկատի  
ունենալով արձանագրության մեջ հիշատակվող բնակավայրերի դասա-  
վորվածությունն ու նրանց շրջակա մյուս գյուղերի պատմական անվա-

<sup>122</sup> Ջամբո, նույն տեղում:

<sup>123</sup> Դիվան, V, էջ 216, Լեռ, նշվ. աշխ., էջ 154 և այլն:

<sup>124</sup> Դիվան, V, էջ 216, Լեռ, նշվ. աշխ., էջ 154—156 և այլն:



նումների բացահայտումները, այստեղ հիշատակվող Եզնարածանց բնակավայրը պետք է համապատասխանի ներկայիս Չովդառ գյուղին, որին կանդրադառնանք ըստ հերթականության: Բացի այդ, հարկ է նշել, որ վերոհիշյալ տեղանունների շարքում (կալվածացուցակում) ընդգրկված է Գանձակ տեղավայրը կամ բնակավայրը, որն այսօր կրում է Խաչենագետի ակունքում գտնվող նրա աջափնյա վտակներից մեկը և հիմնականում հոսում է Մարտակերտի շրջանի տարածքով:

36. **ԹԱԽՏԱԲԱՇԻ.**— Սա նախկին Դաշտագլուխ բնակավայրն է, գտնվում է Ենիքենդի արևմտյան կողմում: Գյուղն այդպես է կոչվում համանուն լեռան անունից, որը ներկայիս քարտեզներում ներկայանում է «Դաշտիբուրուն» աղավաղված անվամբ:

37. **ԿԱՍԱՌՅՈՒՆ.**— Նախախորհրդային քարտեզներում՝ Կու-թուրլու, որը համապատասխանում է պատմական Կոդոր (Կոտոր) բնակավայրին (13 դ.)՝ հիշատակված Դադի վանքի գմբեթավոր եկե-ղեցու արձանագրությունների մեջ<sup>125</sup>:

38. **ԹՈՒՐ-ՔԻՇԵՎԵՆՂ.**— Գտնվում է Կալարոյունից հյուսիս- արև-մուտք: Նախախորհրդային քարտեզներում՝ Թուրքիշեվան: Ըստ Ղ. Ալի-շանի՝ «Հիրխիջևան»<sup>126</sup>, այսինքն հյուր, իջևան իմաստով (Իջևան, Իջևանատուն):

39. **ԱԼԻՐՉԱԼԱՐ.**— Գտնվում է նախորդ գյուղից հարավ-արև-մուտք: Այս գյուղի մասին պատմական ստույգ տվյալներ չկան: Ըստ Ղ. Ալիշանի՝ Իրզա կամ Իրծա<sup>127</sup>:

40. **ՇԱԽՔԵՐԵՄ.**— Գտնվում է Ալիրզալարից հարավ: Այս գյուղը հին քարտեզներում հիշատակված է Ծիկերան անվամբ, իսկ ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Շուքարան (շոգից պատուպարվելու տեղ)<sup>128</sup>: Մա-կայն, նկատի ունենալով, որ անվանումն առաջացել է Ծեկքար տեղա-նունից (լեռնագագաթից), գալիս ենք այն համոզման, որ սա պատմա-կան Ծիկաքար բնակավայրն է: Հուշարձանների քարտեզում Ծեկքարը դարձվել է Ծահ քար:

41. **ԽԱՂԱՆԼԻ.**— XVIII—XIX դարերի հիշատակություններում՝ Դավաշխուր<sup>129</sup>, որը, կարծում եմ, պատմական անունը չէ:

<sup>125</sup> Դիվան, V, էջ 204:

<sup>126</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 25:

<sup>127</sup> Նույն տեղում:

<sup>128</sup> Արցախ, էջ 403, 453:

<sup>129</sup> Ջամբո, նույն տեղում և համապատասխան քարտեզներում:

42, 43. **ՉՈՎՂԱՌ. ԲԱՇԼԻԲԵԼ.**— Երկուսն էլ Թուրքիստի ստորին հոսանքի բնակավայրերից են: Ինչպես ասվեց, Չովդառը համապա-տասխանում է պատմական Եզնարածանցին, հիշատակված Դադի վանքի գմբեթավոր եկեղեցու արձանագրության մեջ<sup>130</sup>: Ընդ որում, այս գյուղը հիշվում է Ապահեն բնակավայրի հետ, որը հիմք է տալիս են-թադրելու, որ դրանք իրար մոտ գտնվող գյուղեր պետք է լինեին: Եվ իրոք, Եզնարածանցից հյուսիս-արևմուտք, 3 կմ հեռավորության վրա գտնվող Բաշլիբել գյուղը համապատասխանում է պատմական Ապա-հենին, որը, բացի տեղագրական քննությունից, հիմնավորվում է թարգ-մանությամբ (բաշ՝ գլուխ, գլխավոր, բել՝ մեջք, հեհարան, այսինքն գլխավոր, հետևաբար ապահով հեհարան՝ Ապահեն): Մնում է ավե-լացնել, որ վերոհիշյալ քարտեզում Ապահենը վերագրվել է Արդուլաու-շաղի գյուղին, (Չովդառից մոտ 10—12 կմ հյուսիս), իսկ Չովդառը ենթարկվելով իմաստային թարգմանության, սուսցել է «Կորեկենկ» անվանումը, որը, սակայն, Սյունիքի Արևիք գավառի (հիմնականում Մեղրու շրջան) բնակավայրերից է<sup>131</sup>:

44—46. — **ՅՈՒՍԱՐԻ ՇՈՒՐԹԱՆ, ԱՇԱՂԻ ՇՈՒՐԹԱՆ, ՕՐԹԱ ՇՈՒՐԹԱՆ.**— Հուշարձանների քարտեզում Շուրթանը դարձել է Շու-րթական: Նախախորհրդային ռուսերեն քարտեզներում հիշատակվում է Շուրտուն, Շյուրտուն անուններով: Պարզ է, որ սա հայկական Չո-րթան անվանումն է, որն այդպես է կոչվում օրինակ, 1914 թ. հրատա-րակված «Հայաստան և հարևան երկրներ» քարտեզում:

47. **ԻՍՏԻՍՈՒ.**— Պատմական անվանումը Ջերմուկ<sup>132</sup>: Հիշատակ-վում է նաև Ջերմաջուր անվամբ<sup>133</sup>:

48. **ՋԱՌ.**— Ծար անվան աղավաղումն է, որի մասին կան տասն-յակ վկայություններ:

49. **ԲԱՂՐՍԱՔ.**— Գտնվում է Ջերմուկի մոտ, համապատասխա-նում է պատմական Բաղանիքին («Բաղանիք արքունականք»):

50. **ՉՐԱՂ.**— Ծրագ անվան թուրքացված տարբերակը:

51. **ՋԻԲԻԼ (ՋԻՎԵԼ).**— Ըստ Ղ. Ալիշանի՝ Ծիպիլ<sup>134</sup>: Սակայն,

<sup>130</sup> Դիվան, V, էջ 199, Արցախ, էջ 204—205 և այլն:

<sup>131</sup> Մո. Օրբելյան, նշվ. աշխ. էջ 403:

<sup>132</sup> Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 230, Արցախ, էջ 404 և այլն:

<sup>133</sup> Դիվան, V, էջ 219:

<sup>134</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 24:

նա ըստ էության աղբյուրներում հիշատակվող Ջուար (Չվարակ)<sup>135</sup> բնակավայրն է, որը հուշարձանների քարտեզում դարձել է «Ծավարք», թեև վերջինս Սյունիքի Ծահուկ գավառի գյուղերից է<sup>136</sup>:

52. **ԱԼԻ ԲԱՅՐԱՄԼԻ**.— Նախախորհրդային քարտեզներում՝ Կուշուղայասի (Ուշուղայասի), որը թարգմանաբար կդառնա «Ուշուղի ժայռ»: Այսօր էլ Ղարաբաղի բառառում օգտագործվում է ուշուղ բառը (օրինակ՝ «ուշուղեն խութ»): Ուշուղներ տեղադրվում էին բարձունքներում կամ լեռնագագաթների վրա, որոնք ուղեհանգրվանների (ճանապարհացույցի) դեր էին կատարում (եռոտանի գերան, որի վրա՝ խաչ): Ուշուղայասի՝ դիտաբար, դիտակետ:

53. **ՂԱՐԱԽԱՍ**.— Ներկայումս գյուղատեղի է, գտնվում է Զվարից հարավ-արևմուտք: Թարգմանաբար՝ Սև խաչ:

54. **ԲԵՋԻՐԻՍԱՆԱ**.— Այս անունով գյուղ անցյալի աղբյուրներում չի հիշատակվում: Հուշարձանների քարտեզում այն կրում է Վաչուրաբակ անունը:

55. **ՎԱՆՔ**.— Ղ. Ալիշանի կարծիքով սա պատմական Գեոտամեջ բնակավայրն է<sup>137</sup>:

56. **ՇԵՒՆԻ**.— Հիշատակվում է նաև Ծահղամ, Ծահիջանդ անուններով, որը ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Ծահնջեի գյուղն է<sup>138</sup>, կապվելով Ծարի իշխանագուն Հասանի թոռան՝ Ծահնջեի անվան հետ<sup>139</sup>:

57. **ԶԵՅԼԻԿ (ԶԱԳԼԻԿ)**.— Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Ծիպագյուղ<sup>140</sup>:

58. **ՉԱԽՄԱԽ**.— Մ. Բարխուտարյանցը այս գյուղանունը թարգմանել է Կայծահան<sup>141</sup>:

59. **ՍՈՅՈՒՂՔՈՒԼԱՂ**.— Թարթառի ստորին հովտի աջակողմյան գյուղերից է: Պատմական աղբյուրներում՝ Յրտնոտն<sup>142</sup>:

<sup>135</sup> Ջամբո, էջ 283, ՀՊՊԿՍ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4 և այլն:

<sup>136</sup> Ստ. Օրբելյան, էջ 404:

<sup>137</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 21:

<sup>138</sup> Արցախ, էջ 404:

<sup>139</sup> Բ. Ուրուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 332:

<sup>140</sup> Արցախ, էջ 453:

<sup>141</sup> Նույն տեղում:

<sup>142</sup> Դիվան, V, էջ 216, Արցախ, էջ 206—209 և այլն:

60. **ԽՈՒՈՋԵՅ-ԱԼԽԱՍԼԻ**.— Այլ վկայություններով՝ Խոլոզակ<sup>143</sup>: Ուշ միջնադարում՝ Խոլոզանց<sup>144</sup>: XIX դարում այս գյուղը կրում էր նաև «Խաչիտցոկ» խեղաթյուրված անվանումը, այսինքն՝ Հայոց ձոր<sup>145</sup>:

61—63. — **ԲԱՇ-ԿԱՐԱՇԱՆԻ, ԱՇԱՂԻ-ԿԱՐԱՇԱՆԻ, ՕՐԹԱ-ԿԱՐԱՇԱՆԻ**.— Գտնվում են Թարթառի ստորին հովտի աջափնյակում: Նման անուններով գյուղեր Քարվաճառի շրջանում (համեմատելով դեպս մինչև 1930 թ.) չեն եղել: Կարաշանլի անվամբ բնակավայր կա հարևան Լաչինի շրջանի հյուսիսակողմում, որը վկայում է, որ այդ գյուղի բնակիչները տեղափոխվելով Քարվաճառի շրջան, իրենց գյուղանունն են վերագրել «ճոր» բնակավայրին: Հին քարտեզներում ներկայիս Կարաշանլիի տեղում գրված է Խաշպարը, որը բնականաբար հայկական Խաշպարան գյուղանունն է, որի մասին ակնարկում է Մ. Բարխուտարյանցը<sup>146</sup>: Հուշարձանների քարտեզում այս գյուղը կրում է «Փառական մեծ» անունը, որը սակայն Սունյաց Գեղարքունի գավառի պատմական բնակավայրերից է<sup>147</sup>:

64. **ԽՈՓՈՒՐԼՈՒ**.— Գտնվում է Խաշպարանից արևմուտք, Թարթառի ձախ ափին: Հուշարձանների քարտեզում կրում է «Խոփեր» անունը: Նման գյուղ կամ տեղավայր չի հիշատակվում ոչ մի տեղ, այդ թվում պատմական աղբյուրներում և նախախորհրդային քարտեզներում: Վստահաբար կարող եմ ասել, որ այս շինծու Խոփեր գյուղանունը հիշյալ Խաշպարան-Խաշպարուի տեղավայրումն է: Այսպիսով, բուն Խաշպարանը (Կարաշանլի մոզոնվածը) իր անունը կորցնելով, գետի ձախափնյակում հանդես է գալիս Խոփուրլու տեղավայրված գյուղային: Փաստորեն ստացվում է, որ Քարվաճառի շրջանում Խաշպարան անվամբ չորս գյուղ կա. Խաշպարան (Խոփուրլու) և նրանից արևելք, գետի աջ կողմում՝ երեքը (ներքին, միջին և գլխավոր Խաշպարաններ):

65. **ԻՄԱՄԲԻՆԱՍԻ**.— Չի բացատրվում, որ այս բնակավայրը պատմական Համամաբակը լինի, ինչպես որ ներկայացված է հուշարձանների քարտեզում: Սակայն, գտնում եմ, որ սա առնչություն չունի Սող-

<sup>143</sup> Приложение к памятной книге Елисаветопольской губернии, на 1914 г., ст. 32.

<sup>144</sup> Ջամբո, էջ 283:

<sup>145</sup> Արցախ, էջ 404, 453:

<sup>146</sup> Արցախ, էջ 404, 452:

<sup>147</sup> Ստ. Օրբելյան, էջ 397:

քի Համամաբակի հետ: Սա թերևս Ծարի Ս. Սարգիս եկեղեցու արձանագրություններում հիշատակվող Համամաբակն է<sup>148</sup>:

66. **ՔԵՇՂԵՔ.**— Վերոհիշյալ հուշարձանների քարտեզում որպես այս գյուղի պատմական անուն «ընտրված է» «Քաշաթաղք»-ը, որի առընչությունն Արցախի հետ բացատրում է: Ըստ էության հարկ է մեկ անգամ ևս հիշեցնել, որ Քաշաթաղ է կոչվել Սյունիքի Աղահեն գավառը, հետևաբար, նույնանուն բնակավայրերի առկայությունը պետք է փնտրել համապատասխան տարածքում, ինչպես որ կա իրականում: Քեշդեքը պատմական Դաշտակ<sup>149</sup> բնակավայրն է: Այն, ի տարբերություն շրջանի մյուս բնակավայրերի (Քարվաճառից ու Ծարից բացի) գտնվում է դաշտ-հարթության վրա և կալվածագրերում հիշատակվում շրջակա մի շարք գյուղերի շարքում, որոնք կենդակացվեցն ըստ հաջորդականության: Բացի այդ, 1914 թ. տվյալներով այս գյուղը ներկայացվում է Գեշտակ<sup>150</sup> անվամբ, որը Դաշտակի աղավաղումն է:

67. **ՇԱՓԱՐ.**— գտնվում է Քարվաճառ բնակավայրի մոտ, նրա հարավ-արևելյան կողմում, Թարթառի աջակողմյան վտակի վրա: Հուշարձանների քարտեզում այս գյուղին է վերագրված Սոթից գավառի Շապուհաթաղի անունը: Բայց, հին քարտեզներում, Շափլարի տեղում նշված է Փիրխանա գյուղը, որը Մ. Բարխուտարյանցի կարծիքով կոչվում է Սրբատուն<sup>151</sup>: Սակայն, իմ կարծիքով, Փիրխ-ը Փարախի կրճատված տարբերակն է, քանի որ այլ նյութերում այն հիշատակվում է նաև Փարախկանլու<sup>152</sup> անվամբ: Սա անշուշտ համապատասխանում է կալվածացուցակում հիշատակվող «Գումերն» (Գումեր)<sup>153</sup> բնակավայրին, նկատի ունենալով նաև տեղագրական ուսումնասիրությունը:

68. **ԲԱՐՄԱ.ՔԲԻՆԱ. (ԲՈՐՄԱ.ՔԲԻՆԱ).**— Հավանաբար կալվածագրերում հիշատակվող Բորու<sup>154</sup> բնակավայրն է, որի անվանումը հայկական չէ: Միգուցե սա «բոլոր» բառի խեղաթյուրումն է (հմմտ. Գանձասարի շրջակայքում «Բոլոր քող» ագարակ)<sup>155</sup>: Նշենք, որ հուշարձանների քարտեզում այս գյուղը կրում է «Մատախոնի» անունը:

69. **ԿԱԽԱ. (ԳՈՒԹՈՒՆ).**— Ըստ էության՝ Կախ: Այստեղ XVIII դարի կեսերի տվյալներով հիշատակված է «Կաժ»<sup>156</sup> անունը կրող բնակավայրը:

70. **ՕԿՏՅԱՐՔԵՆՂ.**— Պատմական անվանումը՝ Հանավ (Հանա՞ր), որը փաստարկվում է մի շարք տվյալներով<sup>157</sup>:

71. **ԴԵՐԵԿՉԼԱԿ (ԳԱՐԱՂՉԼԱՂ).**— Համանուն գյուղ նախկին քարտեզներում և կալվածագրերում չի հիշատակվում: Չնայած ստույգ հայտնի չէ բնակավայրի պատմական անվանումը, բայց թարգմանաբար նշանակում է Չորագյուղ:

72. **ԱՂԸՔԵՆՂ.**— Ոչ վաղ անցյալում՝ Ալլահվերդի, ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Աստվածատուր<sup>158</sup>:

73. **ՕԹԱՂԻ.**— Հուշարձանների քարտեզում՝ «Տախ»: Բայց արդյո՞ք սա Դաղի վանքի արձանագրություններում հիշատակվող Շինակատուն<sup>159</sup> բնակավայրը չէ:

74. **ՄԻՇԵՆ.**— Մշենի անվան աղավաղումն է: Սակայն, Քարվաճառի շրջանում այս անվամբ գյուղ պատմական աղբյուրներում չի հիշատակվում, դեռ ավելին, այս գյուղում մոշենիներ չեն աճում: Բնակավայրն այս, որի պատմական անվանումը դեռ պետք է պարզել, «վերակենդանացվել է» խորհրդային իշխանության տարիներին, Լաչինի շրջանի Միշնի գյուղի բնակիչների՝ այստեղ հաստատվելուց հետո:

75, 76 **ԱՇԱՂԻ ԱՅՐՈՒՄ, ՅՈՒԹԱՐԻ ԱՅՐՈՒՄ.**— Աղբյուրներում և հին քարտեզներում Քարվաճառի շրջանում Այրում անվամբ գյուղեր չեն արձանագրվել: Այրումներ են եղել մասնավորապես պատմական Գարդմանքում և նրա սահմանամերձ Գուգարաց աշխարհում, որը պատահական չէ: Այրումներ էին կոչվում քաղկեդոնությունն ընդունած հայերը, որոնք ի վերջո, բռնությամբ ընդունեցին նաև մահմեդականությունը<sup>160</sup>:

77. **ԻՍՏԻԲՈՒՂԱՂ.**— Տաք աղբյուր կամ Տաք ջուր: Հուշարձանների քարտեզում՝ «Վարժակի աղբյուր», որը դարձյալ Սողք գավառի բնակավայրերից է<sup>161</sup>:

<sup>148</sup> Դիվան, V, էջ 219:

<sup>149</sup> Ջամբո, էջ 283:

<sup>150</sup> Ст'я Приложение к памятной книге..., ст. 32.

<sup>151</sup> Արցախ, էջ 403, 453:

<sup>152</sup> Приложение... նշվ. էջը.

<sup>153</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4:

<sup>154</sup> Տե՛ս ՀՊՊԿԱ-ի նշված ֆոնդը:

<sup>155</sup> Ղ. Ալիշան, Արցախ, էջ 90:

<sup>156</sup> Ջամբո, նույն տեղում:

<sup>157</sup> Դիվան, էջ 226, Ջամբո, էջ 283, ՀՊՊԿԱ, նշվ. ֆոնդը, Սամվել Կարապետյանի հոդվածը (Առավոտ, 2-ր մարտի, 1995 թ.):

<sup>158</sup> Արցախ, էջ 404:

<sup>159</sup> Դիվան, V, էջ 200:

<sup>160</sup> Մշակ, 1914, № 154:

<sup>161</sup> Ստ. Օրբելյան, էջ 398:



78, 79. **ԱՇՍՂԸ ԽԱՉ, ՔԻԼԻՍԱ (ՔԻԼԻՍԱՔԵՆԳ).**— Առաջինը թարգմանությանը՝ Ներքին խաչ, ի տարբերություն նրանից վերև գըտնվող Քիլիսա գյուղի՝ թարգմանությանը Եղցաշեն:

80. **ԳԵՄԻՐԶԻԳԱՄ (ԳԵՄԻՐԶԻԼԱՐ).**— Այսինքն՝ Դարբնոց<sup>162</sup>:

81, 82. **ՍԵՒՂԷՍԱՐ, ԶԱՄԻԼԻ.**— Այս գյուղերի պատմական անվանումները դեռևս պարզված չեն, սակայն հուշարձանների քարտեզում, որպես պատմական անուններ, նշված են «Ուսակարք» և «Խորժա», որոնք սակայն գտնվում են ներկայիս Վարդենիսի շրջանում և Սողք գավառի բնակավայրերից են<sup>163</sup>:

83. **ՂԱՆԼԻՔԵՆԳ.**— Հուշարձանների քարտեզում՝ «Կարմիր շեն», նկատի ունենալով դանլի (արյունոտ) իմաստը: Սակայն, սա ըստ էության պատմական Ջաջուտանց<sup>164</sup> բնակավայրն է, նկատի ունենալով գյուղից ոչ հեռու գտնվող համանուն աղբյուրը, որը քարտեզներում հիշատակվում է «Ջաջիս» անունով:

84. **ԳՅՈՒՆԵՅՓԵՅԱ.**— Հուշարձանների քարտեզում, դարձյալ կամայականաբար, այս գյուղի պատմական անուն նշված է Սողքի «Խորասանկիբակ» բնակավայրը: Իրականում Գյունեյիեյայի պատմական անունը ստույգ չի պարզված, թեև չի բացառվում, որ այն «Քարաման»-ը լինի, գյուղի եզրին գտնվող աղբյուրի անունից:

85. **ՂԱՄԻՇԼԻ.**— Թարգմանաբար՝ Եղեգնոտ:

86. **ՍԱՐԸԳԱՇ.**— Հուշարձանների քարտեզում դարձել է Շիկաքար, այսինքն ենթարկվել է իմաստային թարգմանության: Բայց, արդեն նշվեց, թե որտեղ է իրականում տեղադրվում բուն Շիկաքարը: Ելիզավետոպոլի Նահանգի 1904 թ. քարտեզում այս տարածքում է տեղադրվում «Աղայար» անվամբ բնակավայրը, որը սակայն չի հիշատակվում ժամանակակից քարտեզներում ու գյուղերի ցուցակներում: Կարծում են, այս Աղայարը, որն ըստ էության Աղաքարի աղավաղումն է, Սարըղաշ գյուղի նախկին անվանումը պետք է լինի:

87. **ՉԱՓԻ.**— Հիշատակվում է նաև Չափնի, Չանգի անուններով<sup>165</sup>:

<sup>162</sup> Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 452:

<sup>163</sup> Ստ. Օրբելյան, էջ 398:

<sup>164</sup> Դիվան, V, էջ 206, 216, Լեո, նշվ. աշխ., էջ 154 և այլն:

<sup>165</sup> Արցախ, էջ 404, Դիվան, V, էջ 225, ստանձին քարտեզներ:

88. **ԼԵՎ.**— Գյուղն այսպես է կոչվում Դադի վանքի կալվածագրերում («Լև, Եանջաղ, Բարսեղի շեն, Մեյտանն...»)<sup>166</sup>:

89. **ՉՈՓՈՒՐԼՈՒ.**— Հուշարձանների քարտեզում՝ «Չեչաքար», Դադի վանքի արձանագրություններում՝ «Շեչաշորեց»<sup>167</sup>:

90. **ԻԼՅԱՍԱԼԼԱՐ.**— Հիշատակվում է նաև Զալլար<sup>168</sup> անվամբ, որն ըստ էության կալվածացուցակում հիշատակվող «Ջուլալի» (Ջուլալ)<sup>169</sup> բնակավայրն է:

91. **ԲԱԲԱՇԼԱՐ.**— Այս անվամբ գյուղ նախախորհրդային քարտեզներում չի նշված: Սակայն, Ելիզավետոպոլի նահանգի քարտեզներում նրա մոտ հիշատակվում է «Մարաղամի» անունով գյուղը, որը համապատասխանում է Մ. Բարխուդարյանցի Եղջերվագումին:

92. **ԹԵՔՅԱՂԱՅԱ.**— Հուշարձանների քարտեզում՝ «Մատրակերտ» (դարձյալ Սյունիքի, այս անգամ Աղահեն գավառի գյուղերից): Սակայն, գյուղն անվանակոչվել է մոտակա, համանուն լեռան անունից, որը ձգվում է մոտ 7—8 կմ հարավ-արևելք-հյուսիս-արևմուտք թեքությամբ (Թեքյաղայա՝ Թեք ժայռ):

93. **ՍՈՒՋՈՒՋԼՈՒԽ.**— Երջանի ծայր հյուսիսի բնակավայրերից է: Անվանումն առաջացել է համանուն լեռան աճունից, որը նշանակում է «անջուր տեղ»: Այս «անջուր» գյուղը հուշարձանների քարտեզում դարձել է «Շառջերեք», որը կրկին Սողք<sup>170</sup> գավառում է և ներկայումս այդ անունն է կրում Վարդենիսի շրջանի Դոշաբուլազ գյուղը:

94. **ԱՂԳԱՇ.**— Գտնվում է Եղցաշենի մոտ, նախկին անունը դեռևս պարզված չէ, թարգմանությանը՝ Սպիտակ քար:

95. **ԲՈՋԼՈՒ.**— Գտնվում է շրջանի ծայր հյուսիսում, թարգմանությանը՝ Ծեկք:

96. **ԱՂԳԱԲԱՆ.**— Քարվանստի և Մարտակերտի շրջանների սահմանամերձ հատվածում գտնվող այս գյուղն ունի հարուստ անցյալ: Դ. Ալիշանի կարծիքով, սա պատմական Աղտավանն<sup>171</sup> է, թեև այն սկզբնաղբյուրներով չի հիմնավորվում: Աղբյուրների պատմա-համեմատական ու տեղագրական ուսումնասիրություններից այն հետևությանն

<sup>166</sup> Ջամբո, էջ 283:

<sup>167</sup> Դիվան, V, էջ 202:

<sup>168</sup> Տե՛ս 1964 թ. հիշյալ ադմինիստրատիվ-տեղիտորիալ բաժանման գիրքը

(էջ 63):

<sup>169</sup> Լեո, նշվ. աշխ. էջ 152:

<sup>170</sup> Ստ. Օրբելյան, էջ 398:

<sup>171</sup> Բազմալեկ, 1988, էջ 253:

եւ հանգել, որ Աղդաբանը նախկին Ուղտապանն է (հմմտ. Զրվշափկի արձանագրություններում՝ Ուղտապատ), որն ավելի վաղ կրում էր Կողթ-ագարակ (Գորտ-ագարակ) անվանումը<sup>172</sup>: Դեռևս 628 թ. հիշատակվող այս բնակավայրի գտնվելու վայրը ստույգ պարզված չէր: Այն տեղադրվում էր կամ Գարդմանքում (Վ. Առաքելյան), մերթ Ուտիքում (Բ. Ուլուբաբյան), անտեսելով այն կարևոր հանգամանքը, թե ինչպե՞ս կարող էր Վիրո կաթողիկոսը խազարների վայրենասուն ասպատակություններից խուսափելով, մեկ գիշերվա ընթացքում այդ վայրերից հասնել Թարթառի հովտում գտնվող Զրաբերդ ամրոցը: Էլ չենք ասում, որ Ուտիքում վիմահատակ ու ապստամոտ ժայռեր չկան, որտեղ գտնվի այդ գյուղը:


Այս հարցում ավելի պարզություն մտցնելու նպատակով, ավելորդ չեմ համարում մեջ բերելու Ս. Զալալյանցի հետևյալ տեղեկությունը. «...բարձրացեալ մեր անտի ելաք ի բազուկ մեծի լերինն Մուալայ ի տեղին՝ որ ի հնումն կոչիր Գորտագարակ, իսկ այժմ անուանի Ուղտապան: Աներակս այս անկանի ի վերնակողմն Դադի վանից ի մ.ջ ամրապինդ լեռանց Մուալայ, զոր տանիկք անուանեն Ղանիգեօլ յաղագս սպանութեան իրիք եղելոյ մերձ նմին լճի և արկանելոյ գիոյն ի նոյն լիճ: Վայրս այս երբեմն ասպատարան էր բազմաց քրիստոնէից յերեսաց կատաղի Կովկասականաց, յորում և ամրացաւ կաթողիկոսն Աղուանից...»<sup>173</sup>: Մարգիս Զալալյանցի այս արժեքավոր հաղորդումից պարզվում է, որ Գորտագարակը, համեմայնդեպս նրա այցելության ժամանակ, կրում էր Ուղտապան անունը՝ տեղադրվելով ներկայիս «Ղանի գյուղ» լճակի մոտակայքում: Իհարկե, չի բացառվում, որ ներկայիս Աղդաբան-Ուղտապանը իր անունը ստացած լիներ նշված լճի մոտ գտնվող, համանուն մեկ այլ բնակավայրից, հանձինս, օրինակ, վաղուց լքված Մեյրան գյուղատեղիի, որը նույնպես իր վիմահատակ ու ապստամոտ դիրքով, կարելի է ասել գտնվում է Մոավի ժայռակոփ զանգվածի տակ, համարպարտասխանելով Մ. Կաղանկատվացու վկայությանը: Մնում է ավելացնել, որ Կաղանկատվացու պատմության հնագույն օրինակներում Կողթ-ագարակը ներկայացված է եղել «Գորտագարակ»<sup>174</sup>:

<sup>172</sup> Մ. Կաղանկատվացի, էջ 120:

<sup>173</sup> Ս. Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Բ, էջ 221:

<sup>174</sup> Նույն տեղում, էջ 222:

# ՔԱՐՎԱՃԱՌԻ ՇՐՋԱՆ



Տեղի տրոսյան դասճառով բարեկից դուրս են մնացել շարադրանում ներկայացված բոլոր երկու սասնյակ բնակավայրեր

97. ԱԼՉԱԼՈՒ.— Քարավանատի շրջանում այս անվամբ երկու գյուղ կա: Մեկը Այրումից հյուսիս-արևելք, որի նախկին անվանումը առայժմ պարզված չէ, իսկ մյուսը՝ Սարըղաշի հարավ-արևմտյան կողմում, «Դիք քար» կոչված լեռան մերձ: Լեռնանունը հուշում է, որ այս Ալչալուն նախկինում կրել է Դիք քար անվանումը:

Ցանկալի է, որ բնակավայրերի անունները վերափոխելուց առաջ խստագույնս հետազոտություն կատարվի նրանց արմատները գտնելու, հայաշունչ ոգին վերականգնելու համար, անշուշտ, ոչ այսպես հպանցիկ կարգով:





СЛАВА САРКИСЯН  
АРЦАХ  
ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ УТОЧНЕНИЯ

РЕЗЮМЕ

В связи с политическими и историческими событиями, как ранее, так и в последние годы ученые не раз обращались к исторической географии Арцаха. Высказывались взаимоисключающие мнения и взгляды и в этих условиях, хотя бы исходя из последних публикаций, почти невозможно было составить правильное представление о границах наанга, его гаваров, а также месторасположение оборонительных комплексов и даже ряда поселений.

Принимая во внимание вышесказанное, в данной работе делается попытка уточнить согласно «Ашхарацуйцу» не только границы гаваров провинции Арцах-Утик, но и вообще расположение административных образований по нижнему течению Куры и Аракса, начиная с I в. до н. э. При этом учитываются достоверные сведения, сообщаемые Страбоном, Птоломеем, Хоренаци и другими известными хрониками.

Рассматривая вопрос расположения Гардманского княжества, опровергаются бытующие взгляды, согласно которым Гардман был лишь гаваром, находящимся в той или иной части этого региона и входил в состав Утика. Названия Гардманское княжество и Гардман определенным образом отличаются друг от друга, на что, однако, не было обращено всеобъемлющего внимания исследователей.

Достоверными фактами обосновывается, что Гардман в действительности представлял собой один наанг, отдельную административную единицу, которая не имела никакой связи ни с Утиком, ни с Арцахом.

Представляя княжество Цавдеацвоц, составляющую исконную область Арцаха, считаем неприемлемым отождествление в исторической науке Цавдек — Содк. Вносится ясность также в вопросе размещения княжества Гаргарацвоц, принимая за основу достоверные сведения и другие исторические факты, сообщаемые, особенно, такими летописцами, как Товма Арцруни, Вардан Аревелци и учеными — Гевондом Алишаном, Лео, Адонцем. В работе при этом, фактически, подвергается сомнению вообще реальность существования единой административной единицы Утик и приоритет отдается условности деления на наанги.

Затем, согласно «Ашхарацуйцу», представляются гавары наангов Арцах-Утик и указываются опечатки, нашедшие место в «Ашхарацуйце» при его повторном составлении. В частности отрицается отождествление Миус Абанд — Сисакан Востан, располагая последний на территориях, примыкающих к Содку Карвачарского района, западнее Вайкуника. Гавар Агвен Утика от нынешнего Шаумянского района переносится к нижнему течению реки Агстев (ныне — Казахский район), располагая в Шаумянском районе гавар Цавдек, оставленный вне «Ашхарацуйца» после его повторного составления и т. д.

К исследованию прилагается схематическая карта указанной территории, на которой согласно «Ашхарацуйцу» указываются границы наангов Утик и Арцах, их гаваров, а также подлежащее оспариванию расположение крепостей и поселений. Причем, для легкости ориентировки на карте приводятся нынешние водные поверхности, которых в прошлом не было.

В разделе «Исторические топонимы Арцаха» представлены исторические названия ряда поселений районов Нагорно-Карабахской Республики, которые подлежат изменениям. Отмечая первоисточники, при этом вовсе не преследуется цель раскрыть смысл этих наименований.

СЛАВА САРКИСЯН

ԱՐՇԱԽ

Историко-географические уточнения

(На армянском языке)

Ереван — 1996

Երկրագնդի առաջին ու չորրորդ էջերին՝ խաչքարեր, 1187 թ., Ջրվեր-Խանարաղ  
և Մոշենի, հետին պլանում՝ հատված Խանարաղ գյուղից:

---

Պատվեր՝ 17, 60×84<sup>1</sup>/<sub>16</sub>, տպաքանակ՝ 1000

ՀՀ տեղեկատվության նախարարության  
«ԱՄՍՐԱՍ» տպարան  
Երևան—1, Տերյան 44

